DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

# ԳՓ-7 ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՓԴԾ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՅԱՍՏԱՆ

**ԳՓ7 ֆինանսական ռեսուրսներ – ՓԴԾ Ազգային Ծրագիր (ԱՄՆ դոլար)**

| | |
|---|---|
| **Ընդամենը ՓԴԾ դրամաշնորհներ՝ սկսած 2009թ.** | **4,005,522** |
| ԳՓ-7 ԳԷՀ հիմնական ռեսուրսներ՝ | **500,000** (հաստատման ենթակա) |

Ազգային ծրագրի ռազմավարությունը (ԱԾՌ) սահմանում է ծրագրի գործողությունների շրջանակը և հանդիսանում է Հայաստանում Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (ԳԷՀ) Փոքր դրամաշնորհների ծրագրի (ՓԴԾ) մշակման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման ծրագրային ուղեցույցը: Ռազմավարությունը սահմանում է նախագծերի ընդունելի լինելու հիմնական չափանիշները և Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող նախագծերի տեսակները: Այս փաստաթուղթը նախատեսում է ինտեգրել ԳԷՀ-ի կիզակետային ոլորտներն ու Հայաստանի բնապահպանության ոլորտի գերակայությունները՝ արձագանքելով բնապահպանական գլոբալ կոնվենցիաների (ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա, ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա, ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի մասին» կոնվենցիա, «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա), ինչպես նաև ազգային զարգացման և աղքատության հաղթահարման հետ առնչվող փաստաթղթերի պահանջներին: ԱԾՌ-ը սահմանում է ռազմավարական արդյունքները, որոնք արտացոլվելու են ազգային ծրագրում ԳԷՀ-ի յոթերորդ գործառնական փուլի ընթացքում (2018թ. հունվար – 2022թ. հունիս): Այս փաստաթղթում թիրախային խմբերն են Ծրագրի հայտատուները (ՀԿ-ներ, ՀՀԿ-ներ և համայնքային խմբեր), կենտրոնական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, երկկողմ և բազմակողմ դոնոր կազմակերպությունները, մասնավոր հատվածը, Ազգային ղեկավար կոմիտեն և ՓԴԾ հայաստանյան ծրագրի աշխատակազմը:

***Երևան 2019***

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ԳԷՀ ԵՎ ՓԴԾ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 5

2. ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ/ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ ..... 6

3. ԵՐԿՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ..... 8

3.1 Ներդաշնակեցում Ազգային առաջնահերթությունների հետ ..... 8

3.2 Բացեր և հնարավորություններ ..... 9

3.3 ԳՓ-7 շրջանակներում ՓԴԾ Ազգային ծրագրի ռազմավարական առաջնահերթությունները ..... 12

4. ԳՓ-7 ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԼԱՆԴՇԱՖՏՆԵՐ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 21

4.1 Առաջնահերթ լանդշաֆտի շրջանակում դրամաշնորհների տրամադրումը ..... 21

**ա) Առաջնահերթ լանդշաֆտների ընտրության գործընթացը** ..... 21

**բ) ԳՓ-7 համար ընտրված լանդշաֆտային գոտին** ..... 23

4.2 Դրամաշնորհների տրամադրումը առաջնահերթ լանդշաֆտային գոտուց դուրս . 24

**ա) ՔՀԿ-պետության-մասնավոր հատվածի երկխոսության հարթակ** ..... 25

**բ) Սոցիալական ներառականության խթանում** ..... 26

**գ) Գիտելիքների կառավարում** ..... 28

5. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ ..... 29

6. ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈԲԻԼԻԶԱՑՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆՆԵՐ ... 29

7. «ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՏՐԱՄԱԴՐՈՂ+» (GRANTMAKER+) ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 31

8. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ ..... 32

9. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆ ..... 34

10. ԱԶԳԱՅԻՆ ՂԵԿԱՎԱՐ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ ..... 48

ՀԱՎԵԼՎԱԾ 1: Ծրագրի բնապահպանական և սոցիալական նախնական ստուգման ստուգաթերթիկ ..... 49

ՀԱՎԵԼՎԱԾ 2: ՓԴԾ Հայաստանյան ծրագրի ներդրումը ԿՁՆ թիրախային ոլորտներում 51

ՀԱՎԵԼՎԱԾ 3: ԼԱՆԴՇԱՖՏԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ..... 1

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

## Հապավումների ցանկ

| | |
|---|---|
| ԱԾՌ | Ազգային ծրագրի ռազմավարություն |
| ԱՀ | Ազգային համակարգող |
| ԱՂԿ | Ազգային Ղեկավար Կոմիտե |
| ԱՄՄՆ | Ազգային մակարդակով սահմանվող ներդրումներ |
| ԲԲՀ | Բազմակողմ բնապահպանական համաձայնագրեր |
| ԲՀՀ | Բնության համաշխարհային հիմնադրամ |
| ԳԷՀ | Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ |
| ԳՓ | Գործառնական փուլ |
| ԵԽ | Եվրոպայի Խորհուրդ |
| ԵՄ | Եվրոպական Միություն |
| ԿԱՌԳԾ | ԿԲԿ Կենսաբազմազանության ազգային ռազմավարություն և գործողությունների ծրագիր |
| ԿԲԿ | «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա |
| ԿԶՆ-ներ | Կայուն զարգացման նպատակներ |
| ԿԾԿԹ | Կենտրոնական ծրագրի կառավարման թիմ |
| ԿԿՀ | Կանաչ Կլիմայի Հիմնադրամ |
| ԿՎՄՑ | ԿՕԱ-ների վերացման միջազգային ցանց |
| ԿՕԱ-ներ | Կայուն օրգանական աղտոտիչներ |
| ՀԿ | Հասարակական կազմակերպություն |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՀՀԿ | Համայնքային կազմակերպություն |
| ՀՉԴ | Հողերի չեզոք դեգրադացիա |
| ՄԱԱԴՊԿ | ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի մասին» կոնվենցիա |
| ՄԱԶԾ | ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր |
| ՄԱԶԾ ՀԾՓ | ՄԱԶԾ Համագործակցության ծրագրի փաստաթուղթ |
| ՄԱԿ ԱԶԿ | ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպություն |
| ՄԱԿ ԶԱԾ | ՄԱԿ-ի զարգացման աջակցության ծրագիր |
| ՄԱԿ ԾԾԳ | ՄԱԿ-ի Ծրագրերի ծառայությունների գրասենյակ |
| ՄԱԿ ԿՓՇԿ | ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա |
| ՄԵԳ | Մոնիտորինգ և գնահատում |
| ՇԶՀԳ | Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն |
| ՊԳԿ | ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն |
| ՊՀԾ | ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիրը |
| ՊՏ | Պահպանվող տարածք |
| ՋԳ | Ջերմոցային գազեր |
| ՌԳԾ-ներ | Ռազմավարական գործողությունների ծրագրեր |
| ՌԹԲՀ | Ռեսուրսների թափանցիկ բաշխման համակարգ |
| ՍԲՍ | Սոցիալական և բնապահպանական ստանդարտներ |
| ՏԿԱ | Տրամաբանական կառուցվածքի աղյուսակ |
| ՏՄՀ | Տարեկան մոնիտորինգի հաշվետվություն |
| ՓԴԾ | Փոքր դրամաշնորհների ծրագիր |
| ՔՀԿ | Քաղաքացիական հասարակության կազմակերպություն |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

## 1. ԳԷՀ ԵՎ ՓԴՇ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամը* (ԳԷՀ) գլոբալ գործընկերություն է 183 երկրների, միջազգային հաստատությունների, ՀԿ-ների և մասնավոր հատվածի միջև, որի նպատակն է՝ արձագանքել գլոբալ բնապահպանական խնդիրներին՝ միևնույն ժամանակ աջակցելով կայուն զարգացմանն ուղղված ազգային նախաձեռնություններին:

ԳԷՀ-ը հիմնադրվել է 1991թ.-ին և ծառայում է որպես անկախ ֆինանսական մեխանիզմ, որի նպատակն է աջակցել երկրների կողմից ստորագրված և վավերացված ստորև ներկայացվող Կոնվենցիաներով ստանձնած պարտավորությունների իրականացմանը. «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (ԿԲԿ), ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (ՄԱԿ ԿՓՇԿ), ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի մասին» կոնվենցիա (ՄԱԱԴՊԿ), «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիա և «Մերկուրիի մասին» Մինամատայի կոնվենցիա: ԳԷՀ-ի առաքելությունը գլոբալ շրջակա միջավայրի պահպանությունն է՝ ծրագրերի և նախագծերի ֆինանսավորման միջոցով ապահովելու համար գլոբալ բնապահպանական օգուտները հետևյալ վեց կիզակետային ոլորտներում. կենսաբազմազանություն, կլիմայի փոփոխություն, միջազգային ջրեր, հողերի դեգրադացիա, քիմիական նյութեր և թափոններ, և անտառների կայուն կառավարում (Անտառահատումների և անտառային դեգրադացիայի հետևանքով արտանետումների նվազեցում/REDD+):

ԳԷՀ-ի Փոքր դրամաշնորհների ծրագիրը (ՓԴՇ) մեկնարկել է 1992թ.-ին՝ Ռիո դե Ժանեյրոյի Համաշխարհային գագաթնաժողովից հետո: Որպես ԳԷՀ-ի կորպորատիվ ծրագիր, որն իրականացվում է ՄԱԶԾ-ի կողմից, իսկ ծրագրերի գործադրումը հանձնարարված է ՄԱԾԾԳ-ին, ՓԴՇ-ն իր Գործառնական փուլի ռազմավարությունը ներդաշնակեցնում է ԳԷՀ և համաֆինանսավորող գործընկերների ռազմավարությանը, և տրամադրում է նորարարական, ներառական, ազդեցիկ և մասշտաբային ծրագրեր՝ ուղղված համաշխարհային բնապահպանական և կայուն զարգացման խնդիրների լուծմանը: Այն աջակցում է զարգացող երկրներում ՀԿ-ների և համայնքային կազմակերպությունների գործունեությանը՝ ուղղված կենսաբազմազանության պահպանությանը, կլիմայի փոփոխության մեղմմանը, միջազգային ջրերի պահպանությանը, հողերի դեգրադացիայի կանխարգելմանը, վտանգավոր քիմիական նյութերի և թափոնների ազդեցության նվազեցմանը՝ կիրառելով համայնքային մոտեցումներ և ստեղծելով կայուն կենսապայմաններ[1]: ՓԴՇ-ը հիմնվում է այն գաղափարի վրա, որ գլոբալ և տարածաշրջանային բնապահպանական հիմնախնդիրները կարող են լավագույն ձևով արձագանքվել, եթե ներգրավվի տեղական բնակչությունը, ինչպես նաև համայնքների համար ստեղծվեն ուղղակի օգուտներ և սեփական պատասխանատվության ընկալում:

ԳԷՀ ՓԴՇ մեծապես ապակենտրոնացված է, իրականացվում է ժողովրդավարական, թափանցիկ և երկրի կարիքների վրա հիմնված եղանակով, իսկ համակարգումն իրականացնում է Ազգային համակարգողը (ԱՀ): ԳԷՀ-ի ՓԴՇ-ի դրամաշնորհները հատկացվում են կամավոր հիմունքներով գործող Ազգային ղեկավար կոմիտեի (ԱՂԿ) կողմից

[1] Քաղաքացիական հասարակության և համայնքային կազմակերպությունների, ներառյալ կանանց խմբերի, բնիկ ժողովուրդների, երիտասարդության և հաշմանդամություն ունեցող անձանց կողմից տեղական մակարդակում իրականացվող գործողությունները համարվում են էական կարևորություն ունեցող գործողություններ՝ բազմակողմանի շահառուների դաշինքների ձևավորման միջոցով շրջակա գլոբալ բնապահպանական օգուտների իրացման և ԳԷՀ-7 ծրագրային ուղղությունների, ՄԱԶԾ-ի 2018-2021թթ. ռազմավարական ծրագրի և ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների և միջազգային այլ պարտավորությունների իրականացման առումով ազգային առաջնահերթությունների իրագործման տեսանկյունից:

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

ընդունված որոշումների հիման վրա՝ ղեկավարվելով Ազգային ծրագրի ռազմավարության դրույթներով, որոնք մշակվել են երկրի բնապահպանական և զարգացման ազգային գերակայությունների հիման վրա: ԱՂԿ-ին անդամակցում են կառավարության, ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակի և քաղաքացիական հասարակության՝ ՀԿ-ների / ՀՀԿ-ների, գիտության և մասնավոր հատվածի ներկայացուցիչները, որոնք հիմնականում ներկայացնում են ոչ-կառավարական սեկտորը:

Հիմք ընդունելով իր ավելի քան 26 տարվա հաջող գործունեության փորձն ընդհանուր առմամբ 133 երկրում, ՓԴԾ-ի 7-րդ գործառնական փուլը նպատակ ունի *«խթանել և աջակցել նորարարական, ներառական և մասշտաբային նախաձեռնություններին, ինչպես նաև տեղական մակարդակում շահագրգիռ կողմերի բազմակողմանի գործընկերությունների խթանմանը՝ առաջնահերթ լուծում տալով ցամաքային և ջրային լանդշաֆտներում առաջացող բնապահպանական գլոբալ խնդիրներին»:*

## 2. ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ/ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Հայաստանը ՓԴԾ-ի մասնակից երկիր է դարձել 2007թ.-ին: ՓԴԾ ազգային ծրագիրը պաշտոնապես մեկնարկել է 2008թ.-ի վերջին Ազգային համակարգողի նշանակմամբ և 2009թ.-ի սկզբին ԳԷՀ-4 գործառնական փուլի (ԳՓ) շրջանակներում դրամաշնորհների տրամադրմամբ:

4-րդ և 5-րդ ԳՓ-ների ընթացքում ՓԴԾ-ի հայաստանյան ծրագրին հատկացվել է ԳԷՀ հիմնական ռեսուրսների և ՌԹԲՀ միջոցներից 2,423,522 ԱՄՆ դոլար, ինչպես նաև 200,000 ԱՄՆ դոլար՝ ԵՄ միջոցներ, որոնք ներդրվել են 66 կենսունակ դրամաշնորհային նախագծերում: 4-րդ ԳՓ-ի ընթացքում Ազգային ծրագիրը ապահովել է Հայաստանում ՓԴԾ-ի բարեհաջող մեկնարկ՝ արձանագրելով ԳԷՀ առաջնահերթ ոլորտներում առանձնահատուկ ձեռքբերումներ և ցուցադրելով լավ կառավարման մոդելներ և բնապահպանական ու սոցիալական խնդիրների նորարարական լուծումներ, մինչդեռ 5-րդ գործառնական փուլը բնորոշվել է ՓԴԾ-ի ծրագրերի պորտֆելի նշանակալի ընդլայնմամբ: Այսպիսով, անդրադառնալով ԳԷՀ տարատեսակ թեմատիկ ոլորտներին՝ ՓԴԾ կողմից ֆինանսավորված ծրագրերն ընդգրկել են Հայաստանի բոլոր 10 (տաս) մարզերն ու մայրաքաղաք Երևանը: Ավելին, մեկուսացված համայնքներում մեծ թվով անապահով և խոցելի խմբերի ներգրավման տեսանկյունից ՓԴԾ ազգային ծրագիրը հանդիսանում է ԳԷՀ և ոչ-ԳԷՀ ռեսուրսների տրամադրման արագ, արդյունավետ և վստահելի մեխանիզմ, որն արդյունավետ կերպով ծառայում է շրջակա միջավայրի պահպանության, աղքատության նվազեցման, սոցիալական ընդգրկման ու կարողությունների հզորացման խթանման նպատակներին: Մասնավորապես, ԳՓ-5 շրջանակներում, ՓԴԾ Ազգային ծրագիրը դիվերսիֆիկացրեց իր ֆինանսավորման աղբյուրները՝ հանդես գալով որպես ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող՝ *«Բնապահպանական կառավարման հզորացում ոչ-կառավարական կազմակերպությունների (ՈԿԿ) կարողությունների զարգացման միջոցով»* նախաձեռնության դրամաշնորհների տրամադրման մեխանիզմ: ԵՄ դրամաշնորհները ՔՀԿ-ներին հնարավորություն տվեցին իրազեկված և փորձառու կերպով մասնակցել բնապահպանական քաղաքականության ձևավորմանը, համագործակցել առանցքային հարցերի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին և շրջակա միջավայրի և կայուն զարգացման թեմաներով տեղի ունեցող քննարկումներում ներկայացնել քաղաքացիների և համայնքների շահերը:

Նախորդ՝ ԳԷՀ-6 փուլը նշանավորվել է լանդշաֆտային հիմունքով դրամաշնորհների տրամադրման մոտեցմամբ ընտրված կիզակետային տարածքում՝ **միջին լեռնային գոտու**

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

**տափաստանային և անտառային լանդշաֆտնում՝** խոցելի էկոհամակարգերի առումով ավելի կուտակային և նպատակային ազդեցություն ապահովելու համար: Այսպիսով, ՓԴԾ հայաստանյան ծրագիրն իր ԳՓ-6 հիմնական ռեսուրսները և ՌԹԲՀ միջոցները՝ 1,130,593 ԱՄՆ դոլարի չափով կենտրոնացրել է ԳԷՀ կիզակետային ոլորտներում նպատակային դրամաշնորհների տրամադրման ուղղությամբ սահմանված տարածքի շրջանակներում: Ընտրվելով որպես տարածաշրջանի առաջատար Ազգային ծրագիր՝ ԳՓ-6-ի Ցածր ածխածնային էներգիայի հասանելիության և Կլիմայական ռիսկերի տեսանկյունից խելամիտ նորարարական ագրո-էկոլոգիայի ուղղություններում՝ ՓԴԾ Հայաստանը ստացել է լրացուցիչ ֆինանսավորում՝ 2010թ.-ին հաջորդող հետագա գործողությունների (ԱՄՍՆ) և գյուղատնտեսական կենսազանգվածի էներգիայի ուղղությամբ ռազմավարական նախագծերի իրականացման համար: ՓԴԾ-ն շարունակել է աջակցել և մեծացնել մեկուսացված խմբերի, այդ թվում՝ կանանց, երիտասարդության, հաշմանդամություն ունեցող անձանց և այլ անբարենպաստ խմբերի ինտեգրումը սոցիալական ներառականության շրջանակում: Այսպիսով, 25 դրամաշնորհառուներից 10-ը ներկայացնում էին մարզային ՀԿ-ներ կամ համայնքային կազմակերպություններ, իսկ 13-ը՝ կանանց կողմից կազմավորված կամ կանանց կողմից ղեկավարվող ՀԿ-ներ:

Նպաստելով ԳԷՀ մանդատի իրագործմանը, ԳՓ-6 շրջանակներում ՓԴԾ հայաստանյան ծրագրերի արդյունքում արձանագրվել են կոնկրետ ձեռքբերումներ, որոնք առաջացրել են գլոբալ բնապահպանական այնպիսի օգուտներ, ինչպիսիք են.

- ցածր ածխածնային էներգիայի 4 նորարարական տեխնոլոգիական լուծումների (արևային, կենսազանգվածային վառելիք, փայտի էներգաարդյունավետ վառարաններ, էլեկտրական մեքենաների լիցքավորման կայաններ և այլն) և 3 ագրոէկոլոգիական և գյուղատնտեսական նորարարությունների (արևային էներգիայով ոռոգում, մոդուլային բաքեր, ինտենսիվ պտղատու այգիների համակարգեր) ներդրում,
- 5 ՊՏ-ների պահպանություն, վերականգնում կամ կայուն կառավարում (ներառյալ 2 նորաստեղծ համայնքային ՊՏ-ներ և շուրջ 7,000 հա գյուղատնտեսական նշանակության հողեր),
- տարեկան առնվազն 325 տոննա $CO_2$-ի կրճատում արևային ջրատաքացուցիչ և ՖՎ համակարգերի տեղադրման և ավելի քան 40 համայնքում էներգաարդյունավետ միջոցառումների իրականացման միջոցով, և
- մոտ 2000 ժամանակավոր և մշտական աշխատատեղերի ստեղծում (հավասարապես տղամարդկանց և կանանց համար):

ԳՓ-6- ում, ՓԴԾ հայաստանյան ծրագիրը ծառայել է որպես ԳԷՀ *«Հողերի և անտառի կայուն կառավարման ներդնումը հյուսիս-արևելյան Հայաստանի լեռնային լանդշաֆտներում»* (SLM/SFM) լայնածավալ ծրագրի շրջանակում դրամաշնորհների տրամադրման մեխանիզմ՝ հատկացնելով 200,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ օժանդակելու տեղի բնակչության համար կենսապահովման այլընտրանքային հնարավորությունների ստեղծմանը: SLM/SFM ծրագրի դրամաշնորհներն տրամադրվել են Լոռու և Տավուշի մարզերի անտառային հարակից թիրախային համայնքներում ՓԴԾ-ի կողմից փորձարկված ցածր ածխածնային տեխնոլոգիական նորամուծությունների փորձի կրկնօրինակման համար: Ավելին, հանդես գալով որպես նորարարական ինկուբատոր, ՓԴԾ-ի աջակցությամբ իրականացվող նախաձեռնությունները հնարավորություն տվեցին ընդլայնելու լավագույն փորձի կրկնօրինակումը ՄԱԶԾ և այլ դոնորների կողմից իրականացվող ավելի լայնածավալ ծրագրերի միջոցով:

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

Ինչ վերաբերում է թեմատիկ բաշխմանը, ապա ՓԴԾ հայաստանյան ծրագրի պորտֆելը 2009 թ.-ին հաջորդած 3 ԳՓ-ների ընթացքում զգալի կենտրոնացվել է Հողերի դեգրադացիա կիզակետային ոլորտի վրա (33%), որին հաջորդում են Կլիմայի փոփոխության (25%), Կենսաբազմազանության (23%), Կարողությունների զարգացման (10%) և Քիմիական նյութերի (9%) ոլորտները: Սա հիմնավորված է երկրի ռազմավարական գերակայություններով և կոնկրետ կիզակետային ոլորտների համար ԳԷՀ ՌԹԲՀ-ի ռեսուրսների տրամադրման մոտեցումներով:




Նկար 1. ՓԴԾ ծրագրերի բաշխում ըստ կիզակետային ոլորտների

Մինչ օրս ՓԴԾ հայաստանյան ծրագիրը կատարել է ավելի քան 3 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրում և ապահովել է ավելի քան 5 մլն ԱՄՆ դոլարի համաֆինանսավորում՝ աջակցելու Հայաստանի ավելի քան 100 համայնքներում ծրագրերի իրականացմանը: Վերջին տասնամյակում ՓԴԾ-ի կողմից ներդրված լավ գործելակերպերը և համայնքային նորարարությունները փոխանցվել են պետական գերատեսչություններին և մասնավոր հատվածին բարելավված քաղաքականության և գործելակերպերի ձևավորման նպատակով, ինչպես նաև կրկնօրինակվել, ընդլայնվել և առևտրայնացվել են երկկողմ և բազմակողմ դոնոր գործակալությունների և ձեռնարկությունների կողմից:

## 3. ԵՐԿՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

### 3.1 Ներդաշնակեցում Ազգային առաջնահերթությունների հետ

Մինչ այժմ Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) վավերացրել և ստորագրել է բազմաթիվ միջազգային բազմակողմ բնապահպանական համաձայնագրեր (կոնվենցիաներ և արձանագրություններ), որոնց մեծ մասը կապված է ԳԷՀ-ի ռազմավարական գերակայությունների հետ: Հայաստանի կողմից վավերացված Ռիոյի համապատասխան կոնվենցիաները և պլանավորման ազգային շրջանակները ներկայացվում են Աղյուսակ 1-ում:

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

Աղյուսակ 1. Գործող կոնվենցիաների և ազգային/տարածաշրջանային պլանների կամ ծրագրերի ցանկ

| Ռիոյի կոնվենցիաներ + պլանավորման ազգային շրջանակներ | Վավերացման/մշակման ամսաթիվ |
|---|---|
| ԳԷՀ-7 Ազգային երկխոսություններ | |
| «Կենսաբանական բազմազանության մասին»կոնվենցիա (ԿԲԿ) | 31.03.1993թ. |
| ԿԲԿ-ի Կենսաբազմազանության ազգային ռազմավարություն և գործողությունների ծրագիր (ԿԱՌԳԾ) | 10.12. 2015թ. |
| «Մատչելիության և շահույթի բաշխման մասին» Նագոյայի արձանագրություն (ՄՇԲ) | Չի վավերացվել |
| ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (ՄԱԿ ԿՓՇԿ) | 14.05.1993թ. |
| ՄԱԿ ԿՓՇԿ-ի Ազգային հաղորդագրություն (1-ին, 2-րդ, 3-րդ) | 04.11.1998թ., 07.09.2010թ., 15.05.2015թ. |
| ՄԱԿ ԿՓՇԿ-ի ազգային մակարդակով համապատասխան մեղմացնող գործողություններ (ԱՄՀՄԳ) | 29.01.2010թ. |
| ՄԱԿ ԿՓՇԿ-ի Հարմարվողականության Ազգային Ծրագրի գործողություններ (ՀԱԾԳ) | Մշակման փուլում է, ակնկալվում է մինչև 2020թ. վերջ |
| Ազգային Մակարդակով Սահմանված Ներդրումներ (ԱՄՍՆ)՝ Փարիզի Համաձայնագրի ներքո | 10.09.2015թ., 08.02.2017թ. |
| ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիա (ՄԱԱԴՊԿ) | 23.06.1997թ. |
| ՄԱԱԴՊԿ-ի Գործողությունների ազգային ծրագրեր (ԳԱԾ) | 28.03.2002թ., 27.05.2015թ. |
| Ստոկհոլմի կոնվենցիա (ՍԿ) Կայուն Օրգանական Աղտոտիչների վերաբերյալ (ԿՕԱ) | 22.10.2003թ. |
| ՍԿ-ի Ազգային գործողությունների ծրագրի (ԱԳԾ) | 13.01.2005թ. |
| Մնդիկի մասին Մինամատայի կոնվենցիա (ՄԿ) | 13.12.2017թ. |
| ՄԱԿ-ի 2030թ. Կայուն Զարգացման Նպատակներ (ԿԶՆ) | 2015թ. սեպտեմբեր |
| Կամավոր Ազգային Գնահատումներ (ԿԱԳ) ՄԱԿ-ի ԿԶՆ գծով | 2018թ. հուլիս |
| Համատեղ օգտագործվող միջազգային ջրային մարմինների համար ռազմավարական գործողությունների ծրագրեր (ՌԳԾ-եր) | Տարածաշրջանային ՌԳԾ մշակվել և ստորագրվել է Վրաստանի և Ադրբեջանի կողմից: ՌԳԾ ընդունումը դեռևս քննարկում է Հայաստանի կողմից: |
| Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր | 27.03.2014թ. |
| Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարություն | 26.01.2007թ. |

Հարկ է նշել, որ ՀՀ օրենսդրության համաձայն, միջազգային համաձայնագրերն ունեն գերակա իրավական ուժ և հանդիսանում են երկրի իրավական համակարգի բաղկացուցիչ մաս: Միջազգային համաձայնագրերով սահմանված նորմերը ենթակա են անհապաղ կատարման և պետք է հստակեցվեն Հայաստանի ազգային օրենսդրությամբ:

### 3.2 Բացեր և հնարավորություններ

2009թ. սկզբից ի վեր, Հայաստանում ՓԴԾ-ն հնարավորություն է ընձեռում ՔՀԿ-ներին և տեղական համայնքներին էական ներգրավվածություն ունենալ Բնապահպանական

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

բազմակողմանի համաձայնագրերի (ԲԲՀ)[2] իրականացման գործընթացում, որի համար ԳԷՀ-ը հանդես է գալիս որպես ֆինանսական մեխանիզմ, ինչպես նաև առնչվող ազգային պլանավորման քաղաքականություններին և ռազմավարություններին, ինչպիսիք են ՄԱԿ 2030 ԱՄՍՆ-ներ, ԿԶՆ-ներ և այլք: Ազգային ծրագիրը մեծացրել է իր արժեքը՝ հանդիսանալով ֆինանսավորման եզակի մոդել, որն ապահովում է ուղիղ աջակցություն սոցիալապես ներառական, ինտեգրված մոտեցումներն արդյունավետորեն իրականացնելու համար, որոնք խթանում են ԲԲՀ-երի գծով շրջակա միջավայրի մարտահրավերների բազմակողմանի լուծումները: Վերջին տասնամյակի ընթացքում ՓԴԾ-ն կարևոր դեր է ունեցել նորարարությունների խթանման, նոր մոտեցումների փորձարկման, երկրի համատեքստում համաշխարհային փորձի և լավագույն գործելակերպերի հարմարեցման, ինչպես նաև գիտելիքն ու լուծումները կառավարությանը և մասնավոր հատվածին փոխանցելու առումով՝ քաղաքականության բարելավման և գործելաոճի կատարելագործման նպատակով: Հետևաբար, անհնար է թերագնահատել ՓԴԾ-ի համակարգող դերը ԳԷՀ-7-ում գլոբալ բնապահպանական մարտահրավերների անդրադարձման և ԿԶՆ-ների իրագործման առումով ՔՀԿ-ի աշխատանքների և գործողությունների շրջանակի ընդլայնման գործում:

ՓԴԾ հայաստանյան ծրագիրը կօգտագործի ԳՓ-7 ռեսուրսները ԳԷՀ-7-ի ռազմավարական ուղղություններին առնչվող ազգային գերակայությունների իրականացմանն աջակցելու համար, ինչպես նաև կօժանդակի Հայաստանին՝ հասնելու գլոբալ կոնվենցիաներով սահմանված նպատակներին: Ծրագիրը կխթանի ՔՀԿ-ների և համայնքային մակարդակում գործընկերների իմաստալից ներգրավումը այն գործընթացներին, որոնք նպաստում են կոնվենցիաների ուղեցույցների իրականացմանը՝ ԱԾՌ և ԳՓ-7-ում ՓԴԾ ծրագրային փաստաթղթին համահունչ: Ավելին, *«Դրամաշնորհ տրամադրող+» (Grantmaker+)* աջակցման ծառայությունների շրջանակներում Ազգային ծրագիրը կշարունակի օժանդակություն ցուցաբերել ՔՀԿ-ներին (մասնավորապես՝ ՀՀԿ-ներին) նախագծերի մշակման և ձևակերպման գործում, և կնպաստի ՓԴԾ-ի ու նրա գործընկերների ռեսուրսների մատչելիության ապահովմանը:

ՄԱԶԾ սոցիալական և բնապահպանական ստանդարտները (ՍԲՍ) համակողմանիորեն դիտարկվել են ԱԾՌ-ում՝ ՓԴԾ միջամտությունների բնապահպանական ու սոցիալական ռիսկերի նվազեցման նպատակով: Այս ՍԲՍ-ները ներառում են երեք խաչվող սկզբունքներ[3] և յոթ ստանդարտներ[4], որոնք Ազգային ծրագրի կողմից պետք է օգտագործվեն ԳՓ-7-ում ՓԴԾ ծրագրերի ընտրության ժամանակ: Ապահովելու յուրաքանչյուր ծրագրի համապատասխանությունը ՍԲՍ-ին, ՓԴԾ ազգային թիմը ծրագրերի նախնական զննման ընթացքում կօգտագործի ծրագրի ՍԲՍ ստուգաթերթը, որը ներկայացված է Հավելված 1-ում: Ստուգաթերթի հարցերը զետեղված են նաև ԱՂԿ կողմից ծրագրերի վերանայման ու գնահատման գործընթացում օգտագործվող ՓԴԾ հայտի գնահատման ձևում: ՍԲՍ-երի

[2]ԲԲՀ-ները ընդգծում են սոցիալական ներառականության և առավել լայն մասնակցության անհրաժեշտությունը՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, բնիկ ժողովուրդների և տեղական համայնքների ներգրավմամբ:

[3] ՄԱԶԾ բոլոր ծրագրերի ու նախագծերի շրջանակներում կիրառվող երեք խաչվող սկզբունքները հետևյալն են՝ Մարդու իրավունքներ, Գենդերային հավասարություն և կանանց դերի ամրապնդում, Բնապահպանական կայունություն:

[4] Ծրագրային մակարդակում կիրառվող ստանդարտները հետևյալն են. Կենսաբազմազանության պահպանություն և բնական ռեսուրսների կայուն կառավարում, Կլիմայի փոփոխության մեղմում և հարմարվողականություն, Համայնքային առողջապահական, անվտանգության և աշխատանքային պայմանների ապահովվածություն, Մշակութային ժառանգություն, Տեղահանում և տարաբնակեցում, Բնիկ ժողովուրդներ, Աղտոտվածության կանխարգելում և ռեսուրսների արդյունավետություն:

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

վերաբերյալ շահագրգիռ կողմերը պատշաճ կերպով կիրազեկվեն ՓԴԾ թիմի աշխատանքային և խորհրդատվական հանդիպումների ժամանակ:

Հաշվի առնելով վերոնշյալը, ԳՓ-7-ում ՓԴԾ հայաստանյան ծրագրի նիշան է՝ աջակցել ՓԴԾ ռազմավարական միջամտությունների շրջանակներում համայնքային բնապահպանական և սոցիալական նախաձեռնություններին՝ խնդիրների ստեղծագործական լուծման և համայնքային մակարդակում նորարարությունների միջոցով, որոնք ուղղված են գլոբալ բնապահպանական օգուտների ստեղծմանն ու մարդկանց բարեկեցության բարելավմանը: ՓԴԾ ազգային ծրագիրը ուղղված կլինի ռեսուրսների գերշահագործմանը հանգեցնող և կլիմայի փոփոխությանը նպաստող համայնքներում առկա տնտեսական և մշակութային գործելակերպի համար կենսունակ այլընտրանքներ տրամադրելուն: Մինչդեռ ակնկալվում է, որ այս գործողությունները կունենան տնտեսական ազդեցություն և կնպաստեն աղքատության և գործազրկության հաղթահարմանը, ՓԴԾ հայաստանյան ծրագիրը իր կողմից ֆինանսավորվող նախագծերում նախապատվություն կտա խոցելի խմբերի[5] մասնակցությանը: Հետևաբար, այդ նախագծերին աջակցելու միջոցով ՓԴԾ հայաստանյան ծրագիրը կհամախմբի ՔՀԿ-ների և համայնքային մակարդակում գործընկերների ջանքերը՝ նպաստելու ԿԶՆ-ների իրականացմանը, ինչպես նկարագրվում է Հավելված 2-ում:

Իր դրամաշնորհային գործունեությամբ լրացուցիչ արժեք ստեղծելու նպատակով ՓԴԾ-ն ներդրում է ունենալու դրամաշնորհառու ՀԿ-ների և այլ ՔՀԿ գործընկերների կարողությունների զարգացման և պահպանման ուղղությամբ, ինչը թույլ կտա նրանց արդյունավետ կերպով ներգրավվել Ռիոյի կոնվենցիաների և հետ-2015թ. զարգացման գործընթացների նկատմամբ ազգային ռազմավարությունների, քաղաքականությունների և ծրագրերի մշակմանը, իրականացմանն և մոնիտորինգին: Ավելին, ծրագիրը կխթանի ՓԴԾ կողմից փորձարկվող նորարարական տեխնոլոգիաները և լավ կառավարման մոդելները՝ հնարավոր տարածման, վերարտադրության ու ընդլայնման նպատակով: Ակնկալվում է, որ նորարարական այս գործողություններից քաղած դասերը կնպաստեն քաղաքականության ու որոշումների կայացման կատարելագործմանը ազգային և տեղական մակարդակներում: Ելնելով վերոհիշյալից, ՓԴԾ հայաստանյան ծրագրի նպատակն է.

> ***Աջակցել նորարարական և մասշտաբային նախաձեռնություններին՝ համայնքային մոտեցումների և գործողությունների միջոցով, ինչպես նաև խրախուսել շահագրգիռ կողմերի բազմակողմ համագործակցությունը բնապահպանական հիմնահարցերին արձագանքելու համար***

Այս նպատակին հասնելու համար ՓԴԾ հայաստանյան ծրագրի գործողությունները հիմնականում կենտրոնանալու են ա. համաշխարհային մակարդակով ճանաչված կրիտիկական էկոհամակարգերի վրա, բ. սոցիալապես պատասխանատու ֆինանսավորման մեխանիզմների ներդրմանը՝ աջակցելու համայնքային մարտահրավերների լուծմանն ուղղված նորարարություններին, գ. ազգային ՔՀԿ-ների կարողությունների զարգացմանը՝

[5] Հայաստանում խոցելի խմբերը հիմնականում բնակվում են փոքր, հեռավոր, բարձր լեռնային, սահմանամերձ և մեկուսացված գյուղական համայնքներում: Դրանք գտնվում են անբարենպաստ պայմաններում հիմնականում՝ վերաբնակեցման և աղքատության պատճառներով: Խոցելի խմբերի մեջ են ներառված նաև հաշմանդամները կամ անաշխատունակները (ֆիզիկական, մտավոր կամ առողջական պատճառներով), գյուղական տարեց բնակչությունը, գործազուրկները և բնական աղետների կամ 90-ականների պատերազմի պատճառով վերաբնակեցվածները:

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

իրենց ներգրավվածությունը նորաստեղծ ԿՁՆ-ների իրականացման և բնապահպանական կառավարման գործընթացներում ապահովելու համար:

### 3.3 ԳՓ-7 շրջանակներում ՓԴԾ Ազգային ծրագրի ռազմավարական առաջնահերթությունները

ԳՓ-7-ում, ՓԴԾ հայաստանյան ծրագիրը կշարունակի լանդշաֆտային հիմունքով ծրագրային գործընթացը՝ հիմք ընդունելով դեռևս ԳՓ-7 ընթացքում սահմանված աշխարհագրական նպատակային գոտին, սահմանափակ ռեսուրսների պայմաններում առավել ծավալուն ռազմավարական ազդեցություն ապահովելու նպատակով: Նախորդ փուլին համանման, ծրագիրը սահմանում է հետևյալ չորս առաջնահերթ թեմաները, որոնք բազմոլորտային են իրենց բնույթով, և ներկայացված են ստորև.

(ա) Համայնքային մակարդակով վտանգված էկոհամակարգերի և տեսակների պահպանություն,
(բ) Կայուն գյուղատնտեսություն և ձկնարդյունաբերություն, պարենային անվտանգություն,
(գ) Ցածր ածխածնային էներգիայի մատչելիության ուղեկցող օգուտներ, և
(դ) Քիմիական նյութերի և թափոնների կառավարման կոալիցիաներ՝ տեղականից դեպի գլոբալ

Այս ռազմավարական նախաձեռնությունները նախագծվել են ԳԷՀ ԳՓ-7 գլոբալ նախաձեռնությունների հետ ներդաշնակեցմամբ (տես՝ Աղյուսակ 2)՝ նպատակ ունենալով խթանել համազդեցությունները ԳԷՀ կիզակետային ոլորտների միջև, ԳՓ-7-ի դրամաշնորհային ռեսուրսների մոտ 70%-ի միջոցով համալիր լուծումների տրամադրման համար: ԳՓ-7-ի մինչև 30% մնացած միջոցները (Հիմնական և ՌԹԲՀ) կարող են ուղղվել ընտրված լանդշաֆտային տարածքներից դուրս գտնվող ազգային մակարդակում խաչվող ծրագրերին աջակցելու համար: Այս ծրագրերը աջակցում են կարողությունների զարգացմանը, գիտելիքների կառավարմանը, քաղաքականությանն ու պլանավորմանը, ՔՀԿ-պետություն-մասնավոր հատվածի միջև երկխոսությունների հարթակի ստեղծմանը, ինչպես նաև այլ կարևոր նախաձեռնություններին, որոնք բարձրացնում են ՓԴԾ ազգային ծրագրի հեղինակությունը և ռազմավարական դիրքը:

<u>ԳՓ-7 ռազմավարական նախաձեռնությունները</u>

*Համայնքային մակարդակով վտանգված էկոհամակարգերի և տեսակների պահպանություն*
Լանդշաֆտային պահպանությունը ենթադրում է մասշտաբային համապարփակ մոտեցում՝ կապակցելով կենսաբազմազանության պահպանությունը, կայուն կենսամիջոցների ապահովումը ու պարենային անկախությունը և դիմակայունությունը: Ընտրված լանդշաֆտային տարածքների սահմաններում ՓԴԾ ազգային ծրագիրն աջակցելու է. i) կայուն կենսապահովման գործելակերպերի ցուցադրությանը, որը հիմնված է կենսաբանական ռեսուրսների պահպանության և կայուն օգտագործման վրա, ներառյալ՝ գյուղատնտեսությունը, անասնաբուծությունը, ձկնարդյունաբերությունը, անտառտնտեսությունը և զբոսաշրջությունը, ii) համայնքային մակարդակում պահպանություն ապահովող գործելակերպերի աշխատանքային մոդելների ներդրմանը, որոնք ստեղծում են տեղական օգուտներ բնակչության համար, iii) համայնքային մակարդակում գործելակերպերի ցուցադրությանը՝ կրճատելու անդրսահմանային ջրային մարմիններ սննդարար նյութերի արտահոսքերը և մակերևույթային աղտոտվածությունը:

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

Պլանավորված միջոցառումները կնպաստեն էկոհամակարգերի գործառնության բարելավմանը, օդի որակի, կլիմայի, ջրային շրջապտույտի, էրոզիայի և բնական աղետների, փոշոտման կարգավորմանը և այլն, ինչպես նաև տեղական համայնքներին ոչ փայտանյութային, վառելափայտային և այլ օգուտների տրամադրմանը: ՓԴԾ-ի գործունեության անմիջական ներգրավման միջոցով կբարձրանա տեղական բնակչության իրազեկության և արժևորման մակարդակը բազմաթիվ էկոհամակարգային ծառայություններից ստացվող օգուտների նկատմամբ, և ձեռք կբերվեն գիտելիքներ ու գործնական փորձ կենսաբազմազանության տեսանկյունից անվտանգ եկամտաբեր գործունեության վերաբերյալ: Ակնկալվում է, որ համայնքի մասնակցությունը կբարձրացնի նաև ծրագրի արդյունավետությունը և արդյունքների կայունությունը և կմեղմվեն մարդ-բնություն հակադրությունները: Նախատեսվող գործողությունները խաչվում են ՓԴԾ ԳՓ-7-ի այլ ռազմավարական նախաձեռնությունների հետ՝ դրանով իսկ թիրախային տարածքում ապահովելով ՓԴԾ-ի կողմից ֆինանսավորվող նախաձեռնությունների միջև համադաշնեցումն ու կապակցվածությունը:

*Կայուն գյուղատնտեսություն և ձկնարդյունաբերություն, պարենային անվտանգություն*

Այս ռազմավարական նախաձեռնության ներքո, ՓԴԾ-ն կիրականացնի համայնքային հիմունքներով կլիմայական դիմակայուն գյուղատնտեսության, ձկնարդյունաբերության և սննդի արտադրության գործելակերպերի թեստավորում և խթանում՝ նպաստելու արտադրողականության մեծացմանը և էկոհամակարգերի աշխատանքին և ստեղծելու այլ (ուղեկցող) օգուտներ: Թիրախային տարածքում կլիմայական ռիսկերի տեսանկյունից խելամիտ նորարարական ագրո-էկոլոգիայի կիրառումը կօգնի առաջնորդել գյուղատնտեսական համակարգերի փոխակերպման և վերաուղղորդման գործողությունները՝ փոփոխվող կլիմայի պայմաններում արդյունավետորեն և կայուն կերպով զարգացմանն ու պարենային անվտանգությանը օժանդակելու նպատակով: Թիրախային տարածքում պարենային անվտանգության ու զարգացման նպատակների համատեքստում դիտարկվելու են 3 հիմնական նպատակներ. i) պարենային անվտանգության և եկամուտների կայուն աճի ապահովում ֆերմերային և ոչ-ֆերմերային գյուղատնտեսական արտադրողականության բարելավման և ագրոսնունդային արժեշղթաների և շուկայավարման գործառույթների ամրապնդման միջոցով, ii) կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայունության և հարմարվողականության կառուցում, iii) սպասվող միտումների համեմատ ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման հնարավորությունների զարգացում: Հետևաբար, այս թեմայի ներքո Ազգային ծրագիրը գործնական աջակցություն կտրամադրի նորարարական ագրո-էկոլոգիական գործելակերպերին, որոնք ներառում են հողը, ջուրը, անասնապահությունը և կենսաբազմազանությունը՝ բարելավելու էկոհամակարգային ծառայություններն ու ապահովելու տեղի բնակչության կենսամիջոցները: Երկարաժամկետ հեռանկարում, այս գործողությունների արդյունքում ակնկալվում է հողերի դեգրադացիայի մեղմում, արտադրողականության աճ, ֆերմերային տնտեսությունների դիմակայունության ամրապնդում, գյուղատնտեսական արտանետումների նվազեցում և ածխածնի կուտակման մակարդակի բարձրացում:

*Ցածր ածխածնային էներգիայի մատչելիության ուղեկցող օգուտներ*

Ռազմավարական այս նախաձեռնության շրջանակներում ՓԴԾ ազգային ծրագիրն օժանդակելու է տեղայնացված նորարարական ցածր ածխածնային տեխնոլոգիաների ցուցադրությանը, որոնք տրամադրում են կայուն էներգետիկ ծառայություններ և բարձրացնում էներգետիկ անվտանգությունը: Այս միջամտություններն ուղղված են ջերմոցային գազերի արտանետումների և ծառահատումների նվազեցմանը, ածխածնի կլանման և կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայունության բարելավմանը գյուղական

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

վայրերի գյուղատնտեսական համակարգերում (սողանքների, երաշտների և այլնի նկատմամբ խոցելիության կրճատում), ինչպես նաև առողջության բարելավմանը: Նախատեսվում է, որ ՓԴԾ նպաստավոր մեկնարկային ֆինանսավորման միջոցով հաջողված ցածրարժեք «ներքևից վերև» եկող կանաչ էներգիայի ներդրման լուծումները էլ ավելի կընդլայնվեն և կներդրվեն, և կառևտրայնացվեն մասնավոր հատվածի կողմից: Ցածր ածխածնային էներգիայի հասանելիությանը անցման դյուրացումը կօժանդակի գյուղական շրջաններում աղքատության նվազեցմանը և կստեղծի սոցիալ-տնտեսական օգուտներ, որտեղ էներգիայի բարձր գները ուղղակիորեն ազդում են բնակչության խոցելի հատվածների, ներառյալ հաշմանդամություն ունեցող անձանց, փախստականների, անօթևան երեխաների և այլոց վրա: Բացի այդ, Ազգային ծրագիրը կնպաստի տեղական մակարդակում և երիտասարդության շրջանում կարողությունների հզորացմանը՝ նորարարական ցածր ածխածնային տեխնոլոգիաների և էներգաարդյունավետ սարքերի մշակմանն ու ներդրման ուղղությամբ: Նախատեսվում է նաև աջակցել գիտելիքների տարածմանը՝ լավագույն գործելակերպերի և ՓԴԾ ծրագրերից քաղված դասերի, ինչպես նաև համայնքային նորարարությունների լուսաբանման նպատակով:
Հաշվի առնելով, որ ԳՓ-7 ժամանակահատվածը համընկնում է Փարիզյան համաձայնագրի իրագործման առանցքային փուլի հետ, ՓԴԾ Ազգային ծրագիրը առանձնահատուկ ուշադրություն կդարձնի ԱՄՍՆ-ների իրականացման ընթացքի արագացմանը և աջակցություն կտրամադրի ազգային ռազմավարությունների և ծրագրերի համատեքստում:

*Քիմիական նյութերի և թափոնների կառավարման կոալիցիաներ՝ տեղականից դեպի գլոբալ*
Այս առաջնահերթ ոլորտում, ՓԴԾ-ն իր գործունեությունը կենտրոնացնելու է հետևյալի վրա. i) գյուղատնտեսության և օրգանական հողագործության ոլորտում թունաքիմիկատների կառավարում, ii) քիմիկատների օգտագործման և աղտոտման կրճատում, iii) կոշտ թափոնների բացօթյա այրման շրջանցում, և iv) կարողությունների զարգացում, իրազեկության բարձրացում և գիտելիքների փոխանակում: Մասնավորապես, ՓԴԾ ազգային ծրագիրը ազգային և միջազգային դերակատարների համատեղ ջանքերով կաջակցի վնասակար քիմիական նյութերի և թափոնների անվտանգ հեռացմանն ու կառավարման գործնական լուծումներին: Ծրագիրը տեղական կարողությունների զարգացման ոլորտում ներդրում կկատարի համայնքային մակարդակում վնասակար քիմիական նյութերի էկոլոգիապես անվտանգ կառավարման մոդելների ցուցադրության միջոցով: Հաշվի առնելով շատ երկրներում քիմիական նյութերի ու թափոնների կառավարման հարցերի ընդհանուր բնույթը, ՓԴԾ-ը կխթանի գիտելիքների փոխանակմանը և տեղական ու գլոբալ գործընկերության և նախաձեռնությունների (օրինակ՝ ԿՎՄՑ, ԿՎՄԾ և այլն) միջև համագործակցությանը և իրազեկության բարձրացման, կրթական արշավների ու գիտելիքների գլոբալ ցանցերի միջոցով ազգային շահագրգիռ կողմերի ներգրավմանը:

<u>Այլ նախաձեռնությունների հետ փոխլրացման և համագործակցության հնարավորությունները</u>
ՓԴԾ հայաստանյան ծրագրի հանձնառությունն է՝ իր ծրագրային գործողությունների կառավարումը իրականացնել մինչև 2020թ. ԵԾՓ և ՄԱԿԶԱԾ-ից ակնկալվող արդյունքների հետ ներդաշնակեցմամբ: Մասնավորապես, Ազգային ծրագիրը կնպաստի ԵԾՓ վերջնական արդյունք 4-ի (ՄԱԿԶԱԾ Վերջնական արդյունք 7) իրագործմանը, որն ուղղված է ԿԶ սկզբունքների ու պատշաճ գործելակերպերի ներդրմանը և կիրառմանը՝ էկոլոգիական կայունության դիմակայունության ապահովման, կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության և մեղմման ու կանաչ տնտեսության խթանման նպատակով: Կարևոր է նշել, որ հայաստանյան գրասենյակի ԵԾՓ-ը իր հերթին կապակցված է ՄԱԶԾ գլոբալ մակարդակով ռազմավարական պլանին և հարակից ինտեգրված արդյունքների և ռեսուրսների համակարգին (2018-2021թթ.):

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

Դիտարկելով ՄԱԶԾ/ՄԱԿ-ի համակարգի, դոնորների կողմից ֆինանսավորվող և ՀԿ-ների կողմից ղեկավարվող նախաձեռնությունների և ՓԴԾ ռազմավարական ուղղությունների փոխլրացման ու համազդեցության հնարավորությունները, արձանագրվել են մի շարք նախագծեր և ծրագրեր, որոնք հաշվի կառնվեն ԳՓ-7-ի ընթացքում գործընկերության և համաֆինանսավորման հնարավորությունների տեսանկյունից, ինչպես ներկայացված է Աղյուսակ 2-ում: Այս միջամտություններով առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու բնական ռեսուրսների պահպանման և կայուն օգտագործման, կլիմայի մեղմման և դիմակայունության ամրապնդման, ինչպես նաև կայուն գյուղատնտեսության, տուրիզմի և գյուղական համայնքների զարգացման խնդիրներին: Նախևառաջ, ՓԴԾ հայաստանյան ծրագիրը դիտարկելու է իր հավելյալ ֆինանսավորումը և ծրագրային գիտելիքները և քաղաք դասերը հայաստանյան գրասենյակի կողմից ուղղորդվող այնպիսի հարթակներին աջակցության տրամադրմանը, ինչպիսիք են, մասնավորապես՝ Հայաստանի ազգային ԿԶՆ նորարարական լաբորատորիան, Impact Aim աքսելերատորը, «Կոլբա Լաբ» նորարարական լաբորատորիան, և այլոք, այդպիսով անմիջականորեն նպաստելով ՄԱԶԾ 2018-2021թթ. ռազմավարական ծրագրի ոլորտային «կանաչ» լուծումների ներդրմանը:

Հաշվի առնելով Հայաստանում ԳՓ-5-ի և ԳՓ-6 շրջանակներում ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող *ԵՄ-ՈԿԿ* և ԳԷՀ լայնածավալ SLM/SFM ծրագրերի համար դրամաշնորների հատկացման մեխանիզմ ծառայելու ՓԴԾ հաջողված փորձը, ԳՓ-7-ում ԳԷՀ լայնածավալ ծրագրերի համար ևս կարող է օգտագործվել ՓԴԾ դրամաշնորհների հատկացման համայնքային սխեման:

Որպես փոխլրացման և համազդեցության ռազմավարության մաս, Ազգային ծրագիրը ձգտելու է նաև իր գործողություններն ներառել կառավարության կողմից ֆինանսավորվող բնապահպանական և սոցիալական ծրագրերում, ինչպիսիք են՝ 5-ամյա սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի շրջանակներում իրականացվող համայնքային և մարզային մակարդակի ծրագրերը, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող ամենամյա անտառաշինական գործողությունները և այլն: Ակնկալվում է, որ ՓԴԾ հավելյալ ֆինանսավորումը կընդլայնի պետական ֆինանսավորմամբ իրականացվող նախաձեռնությունների ազդեցությունը և կխթանի ՔՀԿ-կառավարություն գործընկերության կայացմանը:

Աղյուսակ 2-ում ամփոփ ներկայացված են ՓԴԾ գլոբալ ռազմավարական նախաձեռնությունները, ազգային ծրագրի առաջնահերթությունները, որոնք հիմնված են երկրի մակարդակում առկա կարիքների և հնարավորությունների, ինչպես նաև ԳԷՀ, ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի/ՄԱԿ-ի գործակալության, պետական ֆինանսավորմամբ իրականացվող և այլ դոնոր/ՈԿԿ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի հետ հնարավոր փոխլրացման և համազդեցության ներուժի վրա:

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

Աղյուսակ 2. ՓԴԾ ազգային ծրագրի ներդաշնակեցումը ՓԴԾ ԳՓ-7 ռազմավարական նախաձեռնությունների և երկրի առաջնահերթությունների/նախագծերի/ծրագրերի հետ

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| **ՓԴԾ ԳՓ-7 Ռազմավարական նախաձեռնություններ - Գլոբալ** | **ՓԴԾ Ազգային ծրագրի ԳՓ-7 Առաջնահերթություններ** | **ՓԴԾ Ազգային ծրագրի փոխլրացվելիությունը ԳԷՀ, ՄԱԶԾ և այլ ծրագրերի և նախագծերի հետ** |
| ***Վտանգված էկոհամակարգերի և տեսակների պահպանություն համայնքային հիմունքով***<br>Հիմնական նպատակներ/ուղղվածություն<br>- Բարելավել կենսաբազմազանության համար անվտանգ համայնքային գործելակերպերը և մոտեցումները, ներառյալ կապույտ տնտեսության խթանումը (օր. ՝ գյուղատնտեսություն, ձկնարդյունաբերություն, անտառային տնտեսություն, տուրիզմ, ենթակառուցվածքներ և այլն)<br>- Բարելավել համայնքային գործողությունները՝ ուղղված վտանգված տեսակների պահպանությանը<br>- Բարելավել պահպանվող տարածքների կառավարման արդյունավետությունը բնիկ ժողովուրդների և համայնքների կողմից պահպանվող տարածքների և մասնավոր հատվածի ու կառավարության համատեղ կառավարման միջոցով | ***Հիմամայնքային մակարդակով վտանգված էկոհամակարգերի և տեսակների պահպանություն***<br><br>Հիմնական նպատակներ/ուղղվածություն<br>- Բարելավել կենսաբազմազանության համար անվտանգ համայնքային գործելակերպերը և մոտեցումները (օր. ՝ գյուղատնտեսություն, ձկնարդյունաբերություն, անտառային տնտեսություն, տուրիզմ, ենթակառուցվածքներ և այլն)<br>- Բարելավել համայնքային գործողությունները՝ ուղղված վտանգված տեսակների պահպանությանը | - Հարավային Կովկասում էկոլոգիական միջանցքների ծրագրի խթանում՝ իրականացվում է ԲՀՀ (WWF) Կովկասյան ծրագրի գրասենյակի կողմից և ֆինանսավորվում է Գերմանիայի դաշնային կառավարության կողմից՝ KfW միջոցով<br>- Ինտեգրված Գյուղական Զբոսաշրջության Զարգացում նախագիծ, որն իրականացվում է ՄԱԶԾ-ի կողմից և ֆինանսավորվում է Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) կողմից:<br>- «Հարավային Կովկասի լեռնային համայնքների և էկոհամակարգերի կայունության բարելավում՝ անտառային հրդեհների ռիսկի նվազեցմամբ» ծրագիր (Հայաստան և Վրաստան), որն իրականացվում է ՄԱԶԾ-ի կողմից և ֆինանսավորվում է Հարմարվողականության հիմնադրամի կողմից<br>- «Հարավային Կովկասում կենսաբազմազանության ինտեգրված կառավարում» (IBiS) ծրագիր՝ իրականացվում է GIZ կողմից, BMZ ֆինանսավորմամբ |
| ***Կայուն գյուղատնտեսություն և ձկնարդյունաբերություն, պարենային անվտանգություն*** | ***Կայուն գյուղատնտեսություն և ձկնարդյունաբերություն, պարենային անվտանգություն*** | - «Կանաչ» գյուղատնտեսության զարգացման ծրագիր՝ իրականացվում է ՄԱԶԾ և ԱՀԳ կողմից, ֆինանսավորվում է՝ ԵՄ և ԱՀԳ կողմից |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

| | | |
|---|---|---|
| - Բարձրացնել սննդի ընդհանուր արտադրության և արժեշղթայի արդյունավետությունը և արտադրողականությունը՝ ներառյալ խոցելի էկոհամակարգերում<br>- Բարձրացնել դիվերսիֆիկացումը և կենսապահովման բարելավումը<br>- Դուրս մղել անտառհատումը մատակարարման ցանցից և ընդլայնել դեգրադացված հողերի վերականգնման ծավալները | - Բարձրացնել սննդի ընդհանուր արտադրության և արժեշղթայի արդյունավետությունը և արտադրողականությունը՝ ներառյալ խոցելի էկոհամակարգերում<br>- Բարձրացնել դիվերսիֆիկացումը և կենսապահովման բարելավումը<br>- Դուրս մղել անտառհատումը մատակարարման ցանցից և ընդլայնել դեգրադացված հողերի վերականգնման ծավալները | - «Հայաստանի անտառների կայունությունը՝ հարմարվողականության խթանման և գյուղական կանաչ աճի մեղմման միջոցով» ծրագիր՝ իրականացվում է ՊԳԿ կողմից և ֆինանսավորվում է՝ ԿԿՀ կողմից<br>- Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերի սահմանամերձ վայրերի ներառական տնտեսական զարգացման խթանում, ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող ծրագիր՝ ՊՀԾ դպրոցական սննդի ծրագրի հետ համագործակցությամբ, ֆինանսավորվում է ՌԴ կողմից<br>- LEADER ծրագիր Լոռու և Տավուշի մարզերի համար, որը համատեղ իրականացվում է ՄԱԶԾ և ՊԳԿ-ի կողմից և ֆինանսավորվում է ԵՄ կողմից |
| ***Ցածր ածխածնային էներգիայի մատչելիության ուղեկցող օգուտները***<br>- Աջակցել Փարիզի համաձայնագրի և ԱՄՍՆ-ների իրականացմանը<br>- Խթանել վերականգնվող և էներգաարդյունավետ տեխնոլոգիաները, որոնք ապահովում են սոցիալ-տնտեսական օգուտներ և կենսամակարդակի բարելավում<br>- Խթանել էլեկտրացանցից անկախ էներգամակարարման կարիքները գյուղական և քաղաքային վայրերում | ***Ցածր ածխածնային էներգիայի մատչելիության հարակից օգուտները***<br>- Աջակցել Փարիզի համաձայնագրի և ԱՄՍՆ-ների իրականացմանը<br>- Խթանել վերականգնվող և էներգաարդյունավետ տեխնոլոգիաները, որոնք ապահովում են սոցիալ-տնտեսական օգուտներ և կենսամակարդակի բարելավում | - «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում և մասշտաբավորում» ծրագիր՝ իրականացվում է ՄԱԶԾ կողմից, ԿԿՀ ֆինանսավորմամբ<br>- Աղետների ռիսկերի նվազեցման ՄԱԶԾ ծրագիր<br>- Հայաստանի կողմից ՄԱԿ ԿՓՇԿ ներկայացվող 4-րդ ազգային հաղորդագրության մշակում<br>- «Կլիմայի փոփոխության ազդեցության մեղմում Հայաստանում անտառային հրդեհների կառավարման կարողությունների զարգացման միջոցով» ծրագիր՝ իրականացվում է ՄԱԶԾ կողմից, ՌԴ ֆինանսավորմամբ<br>- ՄԱԶԾ կողմից համատեղ կառավարվող հարթակներ՝ Հայաստանի ազգային ԿԶՆ նորարարությունների լաբորատորիա, «Կոլբա Լաբ» նորարարական լաբորատորիա և «Impact Aim» աքսելերատոր |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

| | | |
|---|---|---|
| ***Քիմիական նյութերի և թափոնների կառավարման կոալիցիաներ՝ տեղականից դեպի գլոբալ***<br>- Նպաստել պլաստիկի/կոշտ թափոնների կառավարման և շրջանաձև տնտեսության զարգացմանը<br>- Կրճատել/դուրս մղել գյուղատնտեսության մեջ քիմիական նյութերի օգտագործումը<br>- Նվազեցնել և նպաստել սնդիկի օգտագործման այլընտրանքների ներդրմանը արհեստագործության և ոսկու փոքրածավալ արդյունահանման ոլորտում<br>- Բարելավել տեղականից դեպի գլոբալ կոալիցիաները քիմիական նյութերի, թափոնների և սնդիկի կառավարման հարցերում | ***Քիմիական նյութերի և թափոնների կառավարման կոալիցիաներ՝ տեղականից դեպի գլոբալ***<br>- Նպաստել պլաստիկի/կոշտ թափոնների կառավարման և շրջանաձև տնտեսության զարգացմանը<br>- Կրճատել/դուրս մղել գյուղատնտեսության մեջ քիմիական նյութերի օգտագործումը | - «Ժամկետանց պեստիցիդների պաշարների ոչնչացում և կայուն օրգանական աղտոտիչներով (ԿՕԱ) վարակված տեղանքների աղտազերծում՝ քիմիկատների անվտանգ կառավարման ծրագրի շրջանակներում» ԳԷՀ լիածավալ ծրագիր՝ իրականացվում է ՄԱՀԾ կողմից |
| ***ՔՀԿ-պետություն-մասնավոր հատվածի միջև քաղաքականության և պլանավորման հարթակում երկխոսության հարթակներ***<br>- Խթանել/ուժեղացնել համայնքի ձայնը և մասնակցությունը գլոբալ և ազգային քաղաքականության, ռազմավարության մշակման՝ կապված էկոլոգիական և կայուն զարգացման խնդիրների հետ | ***ՔՀԿ-պետություն-մասնավոր հատվածի միջև քաղաքականության և պլանավորման հարթակում երկխոսության հարթակներ***<br>- Խթանել/ուժեղացնել համայնքի ձայնը և մասնակցությունը գլոբալ և ազգային քաղաքականության, ռազմավարության մշակման՝ կապված էկոլոգիական և կայուն զարգացման խնդիրների հետ | - Հայաստանում ԿՁՆ իրագործման նորարարական լուծումներ. իրականացվում է ՄԱՀԾ կողմից կառավարվող՝ Հայաստանի ԿՁՆ նորարարական լաբորատորիայի կողմից և ֆինանսավորվում է ՌԴ-ի կողմից<br>- Փարիզյան կլիմայական համաձայնագրի «ԵՄ Կլիմայի Համար» EU4Climate գործողություն, իրականացվում է ՄԱՀԾ կողմից և համակարգվում Եվրոպական հանձնաժողովի կողմից |
| ***Սոցիալական ներառականության խթանում (պարտադիր)***<br>- Նպաստել նպատակային նախաձեռնություններին<br>- Խթանել սոցիալական ներառականությունը բոլոր նախաձրագրերում | - Նպաստել նպատակային նախաձեռնություններին<br>- Խթանել սոցիալական ներառականությունը բոլոր նախաձրագրերում<br>- Դիտարկել ՄԱՀԾ-ի սոցիալական և բնապահպանական | - «Կանայք և երիտասարդները նորարար տեղական զարգացման մեջ» ծրագիր, իրականացվում է ՄԱՀԾ, GIZ և ԵԽ կողմից<br>- «Կանանց տնտեսական հզորացումը Հարավային Կովկասում» ծրագիր, իրականացվում է ՄԱՀԾ կողմից, |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

| | | |
|---|---|---|
| (օր՝ կանայք/աղջիկներ, բնիկ ժողովուրդներ, երիտասարդներ և հաշմանդամություն ունեցող անձինք) | ստանդարտները՝ ապահովելու առանձին նախագծերի համապատասխանությունը երաշխիքների պահանջներին՝ ԳՓ -7-ում ՓԴԾ նախագծերի ընտրության ժամանակ<br>- Ապահովել տղամարդկանց և կանանց հավասար մասնակցությունը ՓԴԾ նախագծերում<br>- Նպաստել երիտասարդների և հաշմանդամների ակտիվ ներգրավմանը ՓԴԾ նախագծերում<br>- ԱՂԿ-ում նշանակել գենդերային և երիտասարդության հարցերով պատասխանատու անձանց ՝ ապահովելու այդ ոլորտների հիմնական խնդիրների ու կարիքների լիարժեք ընդգրկումը ՓԴԾ նախագծերում | ֆինանսավորվում է Զարգացման և համագործակցության շվեյցարական գործակալության (SDA) և Ավստրիայի զարգացման գործակալության (ADA) կողմից<br>- ՄԱԶԾ կողմից համատեղ կառավարվող հարթակներ՝ Հայաստանի ազգային ԿԶՆ նորարարությունների լաբորատորիա, «Կոլբա Լաբ»<br>- «Հաշմանդամություն ունեցող անձանց համար ծառայությունների մատչելիության և նրանց մասնակցության ընդլայնում», իրականացվում է ՄԱԶԾ կողմից, ֆինանսավորվում է ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խթանման գործընկերության (UN PRPD) կողմից<br>- Հայաստանում սոցիալական, առողջապահական և կրթական ծառայությունների մատուցման ամրապնդում, իրականացվում է համատեղ ՄԱԶԾ և ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից, ֆինանսավորվում է ՈԴ կողմից<br>- «Հայաստանի անապահով համայնքներում մարդկային անվտանգության բարելավում և դիմակայուն հասարակության կառուցում» ծրագիր. իրականացվում է ՄԱԶԾ, ՅՈՒՆԻՍԵՖ, ՄԱԱԶԿ, ՊՀԾ, ՊԳԿ, և ՄՄԿ կողմից, ֆինանսավորվում է ՄԱԿ-ի Մարդու անվտանգության հավատարմագրային հիմնադրամի (UNTFHS) կողմից |
| ***Գիտելիքների կառավարում (պարտադիր)***<br>- Ձեռք բերել գիտելիքներ և քաղել դասեր իրականացված նախագծերից և գործողություններից<br>- Բարելավել ՔՀԿ/ՀԿ-ների կարողությունները<br>- Իրականացնել հարավ-հարավ փոխանակումներ ՝ խթանելու տեխնոլոգիական փոխանցումը և լավ | ***Գիտելիքների կառավարում***<br>- Ձեռք բերել գիտելիքներ և քաղել դասեր իրականացված նախագծերից և գործողություններից<br>- Բարելավել ՔՀԿ/ՀԿ-ների կարողությունները<br>- Իրականացնել հարավ-հարավ փոխանակումներ ՝ խթանելու տեխնոլոգիական փոխանցումը և լավ գործելակերպերի կրկնօրինակումը | - ՄԱԶԾ կողմից համատեղ կառավարվող հարթակներ՝ Հայաստանի ազգային ԿԶՆ նորարարությունների լաբորատորիա, «Կոլբա Լաբ» |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

| | | |
|---|---|---|
| գործելակերպերի կրկնօրինակումը | - Տարածել ՓԴԾ ծրագրից ստացված գիտելիքները և քաղած դասերը ՄԱՀԾ/ՄԱԿ համակարգի կողմից իրականացվող ծրագրերի և նախագծերի շրջանակում | |
| ***Արդյունքների կառավարում, մոնիտորինգ և գնահատում (պարտադիր)***<br>- *Գործարկել ՄևԳ նոր ռազմավարություն ազգային ծրագրի և նախագծերի մշակման, իրականացման և որոշումների կայացման ընթացքում՝ կիրառելով մասնակցային մեխանիզմներ* | ***Արդյունքների կառավարում, մոնիտորինգ և գնահատում***<br>- *Գործարկել ՄևԳ նոր ռազմավարություն ազգային ծրագրի և նախագծերի մշակման, իրականացման և որոշումների կայացման ընթացքում՝ կիրառելով մասնակցային մեխանիզմներ*<br>- *Անցկացնել կարողությունների զարգացման աշխատաժողովներ առաջարկների մշակման վերաբերյալ՝ օգտագործելով տրամաբանական շրջանակի մոտեցումը և արդյունքների վրա հիմնված հաշվետվողականությունը* | - Նպաստել ռազմավարական ծրագրի արդյունքներին (IIRF)՝ Բնական ռեսուրսների, ներառյալ կայուն ապրանքատեսակների և կանաչ և ներառական արժեքների ցանցերի կայուն կառավարման մասշտաբային լուծումներ Միջանկյալ արդյունք 1.4.1-ի միջոցով<br>- Ներգրավել ՄԱՀԾ ՓԴԾ-ի համակարգողին և հայաստանյան գրասենյակի թիմի մյուս անդամներին ՓԴԾ նախագծերի ՄևԳ գործընթացներին<br>- ՓԴԾ-ի հայաստանյան ծրագիրը դիտարկել որպես դրամաշնորհների տրամադրման պոտենցիալ մեխանիզմ ՄԱՀԾ-ի կողմից իրականացվող ԳԷՀ նախագծերի և այլ ուղղահայաց հիմնադրամների համար |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

## 4. ԳՓ-7 ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԼԱՆԴՇԱՖՏՆԵՐ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 4.1 Առաջնահերթ լանդշաֆտի շրջանակում դրամաշնորհների տրամադրումը

#### ա) Առաջնահերթ լանդշաֆտների ընտրության գործընթացը

ԳՓ-7-ի ընթացքում առավել մեծ ուշադրություն դարձնելով տեղական մակարդակում ռազմավարական և արդյունքների վրա հիմնված միջամտությունների ապահովման վրա, ՓԴԾ հայաստանյան ծրագիրը կշարունակի իր գործունեությունը ԳՓ-6-ի համար ընտրված առաջնահերթ կիզակետային տարածքում, այն է՝ **միջին լեռնային գոտու տափաստանային և անտառային լանդշաֆտներ** (տես Գծապատկեր 2): Այս մոտեցումը պայմանավորված է մի շարք սոցիալ-տնտեսական և կլիմայական սպառնալիքներով, որոնք դեռ առկա են տվյալ ոլորտում, ազդեցություն ունեն բնական ռեսուրսների վրա և հանգեցնում են էկոհամակարգերի գործողության անկմանը, վայրի բնության և բնակավայրերի դեգրադացիային: Վերջինիս մասին են վկայում նաև Կոնվենցիաների ուղղությամբ ներկայացված վերջին զեկույցները/հաղորդագրությունները (օր.՝ ՀԴՉ- ի կատարման ազգային զեկույցի նախագիծը, ԿԲԿ- ի 6-րդ ազգային զեկույցը, ՄԱԿ ԿՓԾԿ- ի 4-րդ ազգային հաղորդագրությունը, 2030 ԱՄՍՆ- ն և այլն), ինչպես նաև ԱՂԿ-ի, ՄԱԶԾ-ի, դոնոր գործընկերների և այլ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ ՓԴԾ-ի մասնակցային մոնիտորինգի արդյունքները: Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև այն սահմանափակ ժամանակահատվածը, որի ընթացքում ՓԴԾ-ն իր ռեսուրսները կենտրոնացրել է թիրախային գոտում (2016-ի վերջից), ակնհայտ է հետագա ներդրումների անհրաժեշտությունը՝ ուղղված համաշխարհային մակարդակում ընդունված էկոհամակարգերի, դեգրադացված անտառային և ոչ անտառային հողերի վերականգնման աջակցությանը, և մաքուր էներգիայի տեխնոլոգիաների տեղակայման օժանդակությանը սոցիալապես անապահով համայնքներում, որոնք զգալի չափով հիմնվում են բնական ռեսուրսների վրա: Դա համաձայնեցվել է ԱՂԿ-ի և հիմնական շահագրգիռ կողմերի հետ, ներառյալ Կոնվենցիայի համակարգող մարմինների հետ:

Կիզակետային տարածքի ընտրության գործընթացը մեկնարկել է ԳՓ-6-ում խորհրդատվության և գնահատման գործողությամբ, որի նպատակն էր տեղեկատվություն տրամադրել, ուժեղացնել կարողությունները ՓԴԾ-ի, վերջինիս մեկնարկած լանդշաֆտային հիմունքով մոտեցման և ռազմավարական նախաձեռնությունների վերաբերյալ, բացահայտել զարգացման ազգային օրակարգին համահունչ առաջնահերթ ուղղությունները և քննարկել ՄԱԶԾ ու այլ գործընկեր գործակալությունների համագործակցության ներուժը: Խորհրդակցությունները նպատակ ունեին հասնել ավելի լայն համաձայնության ԳՓ-6-ում Ազգային ծրագրի մոտեցումների վերաբերյալ և ապահովել առավել մեծ ռազմավարական ազդեցություն ծրագրերի խմբավորման ու համագործակցության ձեռքբերման միջոցով: Հիմնական շահագրգիռ կողմերն են եղել Ռիոյի կոնվենցիաների ազգային համակարգողները, պետական պաշտոնյաները, ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակի թիմը, ոլորտային փորձագետները, հասարակական և համայնքային կազմակերպությունները, կրթական հաստատությունները և այլ գործընկերները: Հանդիպումների ընթացքում ներկայացված մեկնաբանություններն ու առաջարկությունները համահունչ են եղել հիմնական ազգային ռազմավարական փաստաթղթերին, ներառյալ՝ ՀՀ Կայուն զարգացման ծրագիրը, Կառավարությաւն 2019-20204թթ. Ծրագիրը, ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը, ՀՀ Անտառի ազգային քաղաքականությունը և ռազմավարությունը, ՀՀ Անտառի ազգային ծրագիրը, ՀՀ Ջրի ազգային ծրագիրը, Հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, դրանց պահպանության և օգտագործման

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

պետական ծրագիրը, ՀՀ անապատացման դեմ պայքարի ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագիրը, ՀՀ Հողերի Դեգրադացման Չեզոքության վերաբերյալ ազգային զեկույցը, Հայաստանի գյուղատնտեսության զարգացման 2019-2030թթ. ռազմավարական ուղղությունների նախագիծը, ՀՀ գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարությունը և ՀՀ Կենսաբազմազանության պահպանության, օգտագործման և վերարտադրության 2016-2020թթ. պետական ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը և այլն:

ԳՓ-6-ում նպատակային լանդշաֆտային տարածքի ընտրությունն իրականացվել է հաշվի առնելով դրամաշնորհային գործունեության, նիշայի, հնարավորությունների, մարտահրավերների և համազդեցության ներուժի համար մատչելի ֆինանսավորումը, ինչպես նաև հիմնվելով ազգային իշխանությունների և տեղական շահագրգիռ կողմերի հետ հանրային խորհրդակցությունների, հանդիպումների ու քննարկումների վրա: 2015թ.-ին ՀՀ Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Շիրակի, Լոռու մարզերում և մայրաքաղաք Երևանում կազմակերպվել են թվով հինգ (5) հանրային լսումներ և կարողությունների զարգացման հանդիպումներ, որտեղ ներկայացվել է լանդշաֆտի վրա ՓԴԾ-ի կենտրոնացման անհրաժեշտությունը, ինչպես նաև ներկայացվել են նախորդ ԳՓ-ների ընթացքում ՓԴԾ-ի հաջողված ծրագրերի փորձը և համայնքային նորարարությունները: Խորհրդակցության ընթացքում ավելի քան 80 մասնակիցներ, որոնք ներառում են հասարակական կազմակերպությունների, համայնքային կազմակերպությունների, ինքնակառավարման մարմինների, տարածքային կառավարման մարմինների, կրթական հաստատությունների և այլ տեղական շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներին, քննարկել են առաջարկվող 7 թիրախային լանդշաֆտների տարբերակներն ու այլ հնարավոր կիզակետային տարածքները: Բազմակողմանի խորհրդակցությունների շրջանակներում կիրառվել են նաև հարցաթերթիկներ, որոնք տարբեր համայնքներում ուղարկվել են 164 շահագրգիռ կողմերի: Հարցաթերթիկների նպատակն էր բացահայտել ԳԷՀ-ի ՓԴԾ ԳՓ ռազմավարական նախաձեռնությունների առաջնահերթությունները, առաջնային կիզակետային լանդշաֆտները՝ հաշվի առնելով ավելի լավ հավաքական ազդեցության անհրաժեշտությունը, ինչպես նաև դրա հետ կապված առաջնահերթ բնապահպանական հարցերը և սոցիալական ու տնտեսական խնդիրները: Հարցվողներին ընձեռվել է նաև լրացուցիչ մեկնաբանություններ կամ դիտողություններ տրամադրելու հնարավորություն, որոնք կօժանդակեն ԱԾՌ արդիականացմանը:

ՓԴԾ-ի ԱՂԿ-ին ներկայացված ընդհանուր խորհրդակցության գործընթացի արդյունքները հանգեցրել են նոր տարբերակի, որը **միջին լեռնային գոտու տափաստանային և անտառային լանդշաֆտների տարբերակն է (1400-2400 մ. բարձրությունների վրա, ընդգրկում է Հայաստանի տարածքի մոտ 60%-ը):** Այս գոտին ԱՂԿ կողմից հաստատվել է որպես Հայաստանում ԳՓ-6-ի ՓԴԾ դրամաշնորհային գործունեության առաջնահերթ կիզակետային տարածք (տես նկ. 2): Նման որոշում է կայացվել, հաշվի առնելով այն փաստը, որ փոքր երկրներում, որտեղ բարձրության մեծ տատանումների (375-4095 մ) և մի շարք կլիմայական գոտիների արդյունքում տարբեր լանդշաֆտներ և էկոլոգիական համակեցություններ են առաջանում, պետք է ավելի շատ գումարային և նպատակային ազդեցություն ունենալ: ԱՂԿ որոշումը հիմնված է նաև այն փաստի վրա, որ այս գոտին ներառում է կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելի ավելի շատ էկոհամակարգեր, որտեղ կենտրոնացած է կենսազանգվածի արտադրության ամենաբարձր ցուցանիշը:

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863




Գծապատկեր 2. Ընտրված լանդշաֆտի քարտեզ

### բ) ԳՓ-7 համար ընտրված լանդշաֆտային գոտին

Թիրախային գոտին կազմում է 17,702 կմ$^2$ (1,770,200 հա), կամ Հայաստանի ողջ տարածքի 59,5%-ը, և հիմնականում ներկայացված է տափաստանային և անտառային լանդշաֆտներով: Այս գոտին տիպիկ տափաստանային է ցածր բարձրություններում, որը վերափոխվում է մարգագետնատափաստանայինի առավել բարձր բարձրություններում: Ներկայումս թիրախային տարածքի տափաստանները կորցնում են մի շարք էկոհամակարգային ֆունկցիաներ, ինչպիսիք են՝ ջրային ռեսուրսների պահպանություն և գոլորշիացման կարգավորումը, հողերի պահպանությունը, արոտավայրերի շեղման ռիսկի կրճատումը, ջրի և քամու էրոզիայի կանխարգելումը, աղտոտման կանխարգելումն ու մեղմումը, և հազվագյուտ տեսակների կենսամիջավայրի պահպանությունը: Թիրախային տարածքում անտառները կազմում եմ Հայաստանի ամբողջ անտառային տարածքի 64.6%-ը, որտեղ հիմնականում դիտարկվում է մեղմ կլիմա, խիտ հիդրոլոգիական ցանց և կտրտված

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

տեղագրություն: Թիրախային տարածքում իրականացված երկարաժամկետ անտառահատումները էապես խաթարել են ագրո- և անտառային էկոհամակարգային ծառայությունները, որոնք վճռորոշ են կայուն կենսամիջոցների ապահովման համար:

Հաշվի առնելով, որ թիրախային տարածքի բնակչության ավելի քան 80%-ը զբաղվում է գյուղատնտեսական գործունեությամբ, եկամուտների մեծ մասնաբաժինը ստացվում է մշակաբույսերի արտադրությունից, անասնապահությունից, ինչպես նաև վճարովի գյուղատնտեսական աշխատանքներից: Թերզարգացած ենթակառուցվածքների պատճառով արոտավայրերն ու խոտհարքները կայուն կերպով չեն օգտագործվում: Բնակավայրերին մոտ գտնվող հողերը գերօգտագործվում և դեգրադացվում են, իսկ հեռագնա արոտները մնում են թերօգտագործված և հաճախ դառնում են լքված: Բացի այդ, ենթալպյան և ալպյան արոտավայրերի կորուստն ակնկալվում է նաև որպես կլիմայի փոփոխության հետևանք:

Թիրախային տարածքը ներառում է երկրի 6 գետավազանային տարածքները, որոնցից 5-ն անդրսահմանային են՝ բացառությամբ Սևանա լճի ավազանի: Թուրքիայի կողմից Արաքսի ավազանում առկա և կանխատեսվող զանգվածային հիդրավլիկ ենթակառուցվածքների զարգացման արդյունքում ակնկալվում են գետային հոսքի ռեժիմի փոփոխություններ և ջրի մատչելիության կրճատում: Թիրախային տարածքում հիդրոէներգետիկայի հետ առնչվող բնապահպանական խնդիրներն ակնհայտ են, քանի որ փոքր ՀԷԿ-երի շինարարությունը և շահագործումը հաճախ տեղի են ունենում բնապահպանական նորմերի ակնհայտ խախտման պայմաններում: Վերջինս բացասաբար է ազդում ջրային էկոհամակարգերի վրա, հանգեցնելով անտառի և կենսաբազմազանության քայքայման, տեղական բնակչության ապրուստի միջոցների և եկամուտների կրճատման, ինչպես նաև բնական աղետների ռիսկերի ավելացման:

Թիրախային տարածքի գյուղական համայնքներում կենցաղային և գյուղատնտեսական քիմիկատների ոչ պատշաճ օգտագործման և կառավարման արդյունքում ստեղծվում են հսկայական խնդիրներ, որոնք հանգեցնում են մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտման, կենսաբազմազանության կորստի, հողերի դեգրադացիայի, սննդային շղթայում մնացորդային նյութերի կուտակման և, ի վերջո, լուրջ առողջական խնդիրների: Ներկայումս, Հայաստանում միջազգային չափանիշներին համապատասխան սանիտարական աղբանոցներ չեն գործում, իսկ առկա աղբանոցները ավելի շուտ թաղման վայրեր կամ լցակույտեր են, որտեղ բացօթյա ցածր ջերմաստիճանային այրումը կարող է հանգեցնել հայտնի հետևանքների: Բացի այդ, չկան արդյունաբերական և վտանգավոր թափոնների հեռացման հանգույցներ:

Հայաստանում ՓԴԾ համար թիրախային լանդշաֆտի ընտրությունը մանրամասնորեն ներկայացված է մասնակցային Ելակետային գնահատման հաշվետվության մեջ (Հավելված 3):

### 4.2 Դրամաշնորհների տրամադրումը առաջնահերթ լանդշաֆտային գոտուց դուրս

ԳԷՀ-7 ռեսուրսների մոտ 70%-ը կկենտրոնացվի առաջնահերթ լանդշաֆտի ուղղությամբ՝ ՓԴԾ դրամաշնորհի հատկացման շրջանակը հստակեցնելու և կուտակային ազդեցությունը խթանելու համար, ընտրված ռազմավարական նախաձեռնությունների գծով ինտեգրված լուծումների միջոցով, մինչդեռ միջոցների մնացած 30%-ը պլանավորվում է կիրառել թիրախային գոտուց դուրս նորարարական, ներառական և ազդեցիկ նախագծերի ուղղությամբ: ԳՓ-7 միջոցների այս փոքր մասը ռազմավարական կիրառություն կստանա՝

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

հիմք ընդունելով նախորդ գործառնական փուլերի ընթացքում ձեռք բերված փորձը, ինչպես նաև հաշվի առնելով ընտրված լանդշաֆտային գոտուց դուրս ազգային մակարդակում խաչաձևվող նախագծերի ֆինանսավորման առումով բացահայտված չափորոշիչները: Բացահայտվել են հետևյալ ծրագրային ուղղությունները, որոնք դուրս են ԳՓ-7-ի կիզակետային տարածքի շրջանակից.

- Կանաչ և շրջանաձև տնտեսության հայեցակարգերին համահունչ նորարարական տեխնոլոգիական լուծումների և կառավարման մոտեցումների խթանում,
- Աջակցություն ՔՀԿ-պետություն-մասնավոր հատվածի երկխոսության հարթակների ստեղծմանը, որոնք նպաստում են քաղաքացիական հասարակության ներգրավվածությանը կառավարության և տնտեսավարողների հետ բազմակողմ բնապահպանական համաձայնագրերի, հարակից քաղաքականության և լավ գործելաոճերի համատեքստում,
- Հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացում՝ բնապահպանական քաղաքականության վերլուծության և ձևակերպման ոլորտում առավել զգալի մասնակցության, ինչպես նաև բնապահպանական կառավարմանն ու կայուն զարգացմանը համապատասխան ռազմավարական և օրենսդրական փաստաթղթերի մշակման նպատակով,
- Գործընկերության, գիտելիքների ստացման/տարածման համար նոր հնարավորությունների տրամադրում՝ ՓԴԾ-ի քաղված դասերը քաղաքականության մեջ վերարտադրելու և փոխանցելու նպատակով,
- Աջակցություն էկոլոգիական կրթության և իրազեկման բարձրացմանը գլոբալ բնապահպանական խնդիրների և Ռիոյի համապատասխան կոնվենցիաների վերաբերյալ:

Նշված ուղղությունների ներքո ՓԴԾ 7-րդ փուլի շրջանակներում ծրագրերի ընտրության համար կիրառվելու են հետևյալ չափանիշները.

- Համապատասխանություն ՓԴԾ ԳՓ-7-ի ռազմավարական նախաձեռնությունների և ազգային բնապահպանական ու զարգացման ռազմավարական և քաղաքականության մոտեցումներին,
- Տեղական համայնքներում բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացման խթանում,
- Էկոհամակարգերի մոտեցման հայեցակարգի համապատասխանություն,
- Սոցիալական ներառման, մասնավորապես կանանց և երիտասարդների ներառման ապահովում:

**ա) ՔՀԿ-պետություն-մասնավոր հատվածի երկխոսության հարթակ**

ՓԴԾ ազգային ծրագիրը կշարունակի աջակցել նորարարական, բազմաշահառու երկխոսության հարթակների ստեղծմանը, որոնք ուղղված են ՔՀԿ-ների դերի, լավ գործելակերպերի յուրացման, քաղաքականության վրա ազդեցության և հաղորդակցության մակարդակի բարձրացման խթանմանը: ՓԴԾ-ն կամրապնդի իր կազմակերպական դերը ՔՀԿ գլխավորությամբ անցկացվող խորհրդակցության գործընթացներում՝ սերտորեն համագործակցելով մասնավոր և պետական հատվածների հետ: Այդ նպատակով, ԳՓ-7-ի ընթացքում ՓԴԾ-ն կընդլայնի իր ՔՀԿ-պետություն երկխոսության հարթակը՝ նպատակ ունենալով ապահովել մասնավոր հատվածի ավելի լայն ներգրավվածություն, ինչը թույլ կտա ավելի արդյունավետ օգտագործել վերջինիս ներուժը ՓԴԾ նորարարությունների ընդլայնամն և առևտրայնացման ուղղությամբ: Ամենից առաջ, ՓԴԾ հայաստանյան ծրագիրը կօգնի ՔՀԿ-

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

ներին բարձրացնել իրենց կարողությունները՝ տեղեկացված և հմուտ կերպով ներգրավվելու շրջակա միջավայրի և կայուն զարգացման քաղաքականությունների հետ առնչվող ազգային քաղաքականության վերլուծության և երկխոսության գործընթացներում: Օգտագործելով ՔՀԿ-ների և կառավարության հետ կառուցված վստահությունը, ՓԴԾ-ը կգործի որպես «կամուրջ» և կդյուրացնի համագործակցային քննարկումները բացահայտված հարցերի շուրջ, որտեղ պատշաճ կերպով կներկայացվեն քաղաքացիների և համայնքների շահերը: Ենթադրվում է, որ ազգային և ենթազգային մակարդակներում ֆունկցիոնալ երկխոսության հարթակների ստեղծման միջոցով ՔՀԿ կարիքները և գաղափարները կհասցվեն կառավարությանը և տնտեսվարողներին՝ հնարավորություն ընձեռելով փոխանակել ՔՀԿ ծրագրերի գիտելիքները, լավագույն փորձը և քաղած դասերը, որոնք ենթակա են ինտեգրման ազգային քաղաքականության և պլանավորման գործընթացներում, ինչպես նաև կարող են ընդլայնվել և առևտրայնացվել:

ԳՓ-7-ի ընթացքում, ՓԴԾ հայաստանյան ծրագիրը կառուցվելու է նախորդ փուլերում կուտակված փորձի ու քաղված դասերի, հատկապես՝ ԵՄ-ՈԿԿ ծրագրի ֆինանսավորման միջոցով ՔՀԿ-պետություն համագործակցային մոդելների հիման վրա՝ շարունակելով տեղեկատվական հիմք և ազդեցություն ապահովել տեղական, տարածաշրջանային և ազգային մակարդակներում իրականացվող քաղաքականության վրա:

**բ) Սոցիակական ներառականության խթանում**

ԳԷՀ-ի Փոքր դրամաշնորհների ծրագիրը տևական ժամանակ ներդրում է կատարել սոցիալական ներառմանը նպաստող տեղական գործողություններում՝ միտված գլոբալ բնապահպանական ու զարգացման նպատակների ձեռքբերմանը: Նախորդ ԳՓ-ներում կանայք, երիտասարդները և այլ խոցելի խմբերը Հայաստանում կազմեցին ՓԴԾ շահառուների ամենամեծ կատեգորիան: Հաշվի առնելով, որ կանանց դերի բարձրացումը և երիտասարդների ներգրավումը եղել են ՓԴԾ երկու կարևոր նախաձեռնությունները, ԱՂԿ-ի կողմից նշանակվել են երիտասարդության և գենդերային հարցերի ազգային համակարգողներ՝ համապատասխանաբար հետևելու կանանց և երիտասարդությանն ուղղված ծրագրերի ֆինանսական աջակցությանը: Բացի այդ, ՓԴԾ-ն հանդիսանում է ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի գենդերային թիմի անդամ, ինչը թույլ է տալիս ապահովել ավելի լայնածավալ համախմբված արդյունք:

ԳՓ-7-ի ընթացքում ՓԴԾ հայաստանյան ծրագիրը կնպաստի ԳԷՀ-ի գենդերային ռազմավարության և Գործողությունների ծրագրի գործնական իրականացմանը՝ թիրախային լանդշաֆտային գոտում գենդերային անհավասարության խնդիրների լուծման ընթացքում առանձնահատուկ թիրախավորելով կանանց որպես հատուկ շահառուների: Մասնավորապես, ՓԴԾ-ն կաջակցի i) էկոլոգիապես անվտանգ այլընտրանքային կենսապահովման այնպիսի աղբյուրների ստեղծմանը, ինչպիսիք են էկո-տուրիստական ծառայությունները և բնության վրա հիմնված կայուն եկամուտների ստեղծման հնարավորությունների այլ ձևերը. ii) կանանց առաջնորդմամբ իրականացվող նախաձեռնություններում մաքուր էներգիայի լուծումների կիրառմանը՝ նպատակ ունենալով խթանել կանաչ արտադրությունը և նվազեցնել գործառնական ծախսերը. iii) բնական ռեսուրսների, այդ թվում՝ հողի, ջրի և անտառների կայուն օգտագործման տեսանկյունից կանանց և տղամարդկանց դերի վերաբերյալ իրազեկվածության մեծացմանը. և iv) կանանց տարբեր խմբերի և կազմակերպությունների կարողությունների զարգացմանը՝ նպաստելու համայնքի պլանավորման գործընթացներին նրանց արդյունավետ ներգրավվածությանը և համապատասխան քննարկումներում և բանավեճերում իրենց շահերի ներկայացմանը: ՓԴԾ-

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

ն նաև կօժանդակի գիտելիքների կառավարմանը՝ գիտելիքների քաղման, լավագույն փորձի ընտրության և քաղած դասերի հետագա կրկնօրինակման և ընդլայնման միջոցով:

Ծրագրերում գենդերային հարցերի խթանմանը հետևելու համար կկիրառվի գենդերային ցուցիչների համակարգ՝ ժամանակի ընթացքում հասարակության մեջ գենդերային խնդիրներին առնչվող փոփոխությունները արձանագրելու համար: Բացի շահառուների պարտադիր գենդերային տարանջատմամբ տվյալներից, այս ցուցանիշները արտացոլում են նաև կանանց կողմից իրականացվող ծրագրերի քանակը, ռեսուրսների և հնարավորությունների հավասար հասանելիությունը, բնական ռեսուրսների կառավարման ոլորտում և որոշումների կայացման գործընթացներում կանանց մասնակցության ընդլայնումը, և կանանց համար ստեղծված սոցիալ-տնտեսական օգուտներն ու ծառայությունները:

ՓԴԾ-ն որպես առաջնահերթություն է սահմանել երիտասարդությունը՝ շրջակա միջավայրի և զարգացման գործընթացների համատեքստում այն դիտարկելով որպես խոցելի խմբերից մեկը: Ազգային ծրագիրը էլ ավելի կխթանի և կամրապնդի երեխաների և երիտասարդների ներգրավումը ՓԴԾ-ի կողմից ֆինանսավորվող նախաձեռնությունների նախագծման և իրականացման գործընթացում, ինչպես նաև նրանց առաջատար դերը գլոբալ բնապահպանական օգուտներին արձագանքելու տեսանկյունից: Գիտակցելով երիտասարդների մասնակցության անբաժան դերը Հայաստանի հետագա զարգացմանն առնչվող ցանկացած բանավեճին, ՓԴԾ հայաստանյան ծրագիրը սերտորեն աշխատելու է երիտասարդական և երիտասարդներին օժանդակող կազմակերպությունների հետ՝ ապահովելով երիտասարդների տեղեկացվածությունը, ներգրավվածությունը և հզորացումը՝ ի նպաստ կայուն մարդկային զարգացմանը և իրենց համայնքների դիմակայունությանը:

ԳՓ-7-ի ընթացքում, ՓԴԾ-ն կշարունակի խթանել երիտասարդության ներառումը կլիմայի փոփոխության համատեքստում, այդպիսով նպաստելով ՄԱԿ-ի բոլոր նախաձեռնություններում երիտասարդների ներգրավվածության մեծացման ռազմավարության իրագործմանը: Ծրագիրը առանձնահատուկ ուշադրություն կդարձնի կրթական և լրացուցիչ մասնագիտական հնարավորություններին, որոնք ուղղված են Հայաստանում «կանաչ» աշխատանքների աճող պահանջարկի բավարարմանը, հաշվի առնելով արևային էներգիայի տեխնոլոգիաների սրընթաց աճը:

ՓԴԾ հայաստանյան ծրագրի ԳՓ-7 ռազմավարության ուշադրության կենտրոնում են լինելու նաև փոքր, հեռավոր, բարձր լեռնային, մեկուսացված և սահմանամերձ համայնքներում բնակվող խոցելի և անտեսված խմբերը: Այս խմբերը հատկապես անապահով են մի շարք պատճառներով, ինչպիսիք են. հաշմանդամ կամ աշխատելու անընդունակ (ֆիզիկապես, մտավոր կամ առողջական տեսանկյունից) անձինք, տարեց գյուղացիները, գործազուրկները, բնական աղետների կամ 1990-ականների սկզբին զինված հակամարտության պատճառով վերաբնակեցվածները:
ԳՓ-7-ի ընթացքում, ՓԴԾ-ն կշարունակի իր ծրագրային գործողությունների ընթացքում անդրադառնալ հաշմանդամություն ունեցող անձանց առանձնահատուկ կարիքների լուծմանը, որպեսզի նրանք հնարավորություն ունենան լիարժեքորեն մասնակցել որոշումների կայացման գործընթացներին:

ՓԴԾ-ի սոցիալական ներառականության վրա հիմնված մոտեցման ցուցանիշները և թիրախները ներկայացված են ԱԾՌ Աղյուսակ 5-ում:

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

**գ) Գիտելիքների կառավարում**

Գիտելիքների կառավարման ռազմավարությունը ենթադրում է ԳԷՀ-ի տարբեր թեմատիկ ոլորտների առանձին նախագծերի և ընդհանուր պորտֆելի շրջանակներում կուտակված փորձի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և տարածում: Գիտելիքների կառավարման նպատակն է՝ նպաստել գիտելիքների և փորձի փոխանակմանը, օգտագործել ինչպես հաջողված, այնպես էլ չհաջողված նախագծերից քաղված դասերը, կրկնօրինակել և ընդլայնել լավագույն գործելակերպը և համայնքային նորարարությունները: Տեղական մակարդակում ՓԴԾ-ի լավագույն գործելակերպերը կօգտագործվեն որպես ազդեցության մեխանիզմ քաղաքականության մշակման և ձևակերպման համար՝ ուղղված և՛ բնապահպանական կոնվենցիաների, և՛ զարգացման օրակարգերի իրականացմանը: Գլոբալ մակարդակում փորձարկված տեխնոլոգիաների օրինակները, ԳՓ-7-ից և նախորդ փուլերից Ազգային ծրագրի համեմատական առավելությունը և փորձը փոխանակվելու և տարածվելու են համայնքային նորարարությունների ՓԴԾ թվային գրադարանի և հարավ-հարավ համայնքային նորարարությունների փոխանակման հարթակի միջոցով:

Գիտելիքների կառավարումը լինելու է ՓԴԾ հայաստանյան ծրագրի առանցքային գործողություններից մեկը: ՓԴԾ նախագծերի միջոցով ստացված գիտելիքներն ու փորձը հավաքագրվելու և ամփոփվելու են ձեռնարկներում, տեղեկատվական թերթիկներում, ուսումնասիրություններում, ֆիլմերում և տեսանյութերում: Այնուհետև, այս տեղեկատվությունը տարածվելու է գործնականում իրականացնողների շրջանում՝ լավագույն գործելակերպերի ու ռազմավարությունների սահմանման և փորձի համեմատության ու փոխանակման նպատակով: Փորձը փոխանակվելու է նաև սեմինարների, հանդիպումների, հանրային քննարկումների, փորձի ներկայացման, գիտելիքի տարածման միջոցառումների և հնարավորության դեպքում էլեկտրոնային տեղեկատվության տարբեր ցանցերի միջոցով: Գիտելիքների կառավարման տեսակետից հատկապես կարևորվում են ՓԴԾ-ի նախագծերի շրջանակներում իրականացվող վերապատրաստման ծրագրերը, աշխատաժողովները և ցուցադրական տեղամասեր այցերը:

ՓԴԾ հայաստանյան ծրագիրը կխթանի գիտելիքների շարունակական փոխանակումը ներկա և նախորդ դրամաշնորհառուների շրջանում հետևյալ նպատակներով. լավագույն գործելակերպերի և քաղված դասերի տարածում, տարածված լավագույն գործելակերպերի ամրագրում փաստաթղթերում, ՓԴԾ-ի դրամաշնորհառուների շրջանում «փորձագիտական տեղեկագրի» ստեղծում՝ խորհրդատվության համար միմյանց հետ կապ հաստատելու նպատակով, կայքերի և էլեկտրոնային խմբերի ստեղծում տարածաշրջանային խմբավորումների համար:

ՓԴԾ հայաստանյան ծրագիրը խրախուսելու է հայտատուներին ներառել ցուցադրական և գիտելիքների տարածման բաղադրիչը առաջարկվող նախագծերում: Դրամաշնորհառուների կողմից պարբերաբար պատրաստվելու են և էլեկտրոնային և/կամ տպագիր միջոցներով տարածվելու են հակիրճ «մամուլի հաղորդագրություններ»՝ հանրությանը տեղեկացնելու համար անցյալ (հաջողություններ, մրցանակներ, գնահատականներ և այլն), ներկա և ապագա գործողությունների մասին: Դրամաշնորհառուներից պահանջվելու է ապահովել գիտելիքների և քաղված դասերի շարունակական և բաց փոխանակում մյուս հայտատուների հետ: Տեղեկատվության մատչելի դարձնելու պահանջը պարտադիր է լինելու ՓԴԾ-ի բոլոր մասնակիցների համար:

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

## 5. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ

ՓԴԾ հաղորդակցության ռազմավարության ուշադրության կենտրոնում է լինելու հաղորդակցությունը և մասնակցությունը՝ համագործակցության ամրապնդման և գործընկերային հարաբերությունների ստեղծման նպատակով: Այն սերտորեն կապված է ՓԴԾ գիտելիքների կառավարման համակարգի հետ և միտված է ապահովել առանցքային շահագրգիռ կողմերի և ՔՀԿ-ների ներգրավածությունը Ազգային ծրագրի գործողություններում, հարաբերություններ կառուցել և խթանել գործընկերությունը, ինպես նաև ձևակերպել ՓԴԾ ներդրումը ազգային առաջնահերթությունների, ԳԷՀ մանդատի և ՄԱԶԾ ազգային ծրագրի փաստաթղթի և հաղորդակցության ռազմավարության մեջ:

ՓԴԾ ազգային ծրագրի հաղորդակցության ռազմավարության թիրախային խմբերը (կամ «լսարանը») ներառում են. i) ընտրված լանդշաֆտային գոտու ներսում կամ դրանից դուրս ՔՀԿ-ներ և համայնքներ, ii) պետական գործընկերներ, iii) մասնավոր հատված, iv) ՄԱԿ-ի գործակալություններ, v) դոնոր համայնք; vi) հայկական սփյուռքի կազմակերպություններ; vii) զանգվածային լրատվության միջոցներ, viii) ուղղակի շահառուներ և լայն հանրություն:

Լավ գործելակերպերի յուրացումը դյուրացնելու և հաղորդակցությունը ամրապնդելու նպատակով վերը նշված թիրախային լսարանին տրամադրվելու է լավագույն գործելակերպերի, համայնքային նորարարությունների և քաղված դասերի վերաբերյալ պարզ, հեշտ ընթեռնելի և աչքի ընկնող տեղեկատվություն, որը կարող է ազգային և տեղական մակարդակներում նպաստել քաղաքականության բարելավմանը և որոշումների կայացմանը: Ծրագիրը կշարունակի ծառայել որպես եզակի և ներառական մեխանիզմ քաղաքացիական հասարակության ձայնը և գիտելիքները ազգային և միջազգային հարթակներում լսելի դարձնելու ուղղությամբ: Ավելին, ՓԴԾ-ն կանոնավոր կերպով կիրապարակի պատմություններ և նորություններ ՄԱԶԾ գլոբալ և տեղական էլեկտրոնային կայքերում, ինչպես նաև ԳԷՀ կայքում՝ ներկայացնելով համայնքային մակարդակով կատարվող աշխատանքների արժեքը, ինչպես նաև մեծացնելով համայնքային հիմունքով կատարվող գործողությունների ճանաչելիությունը և ծրագրի տեսանելիությունը:

ՓԴԾ-ն կօգտագործի հաղորդակցության տարատեսակ ուղիներ՝ իր լսարանի հետ հաղորդակցվելու համար, մասնավորապես՝ հանդիպումներ, աշխատաժողովներ և գիտելիքի տոնավաճառներ, թվային հարթակներ, հեռուստատեսային և տպագիր լրատվամիջոցներ, ելույթներ և քննարկումներ, տեղայցեր, համաժողովներ և հանրային միջոցառումներ, ինչպես նաև տեսողական նյութեր: Վերջինը, որպես կանոն ներառում է լուսանկարներ, տեսանյութեր, ինֆոգրաֆիկաներ, և այլ տեղեկատվական նյութեր, որոնց միջոցով տեղեկատվության ներկայացումը առավել տարածված է սոցիալական հարթակներում:

## 6. ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈԲԻԼԻԶԱՑՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Ռեսուրսների մոբիլիզացումը ՓԴԾ հայաստանյան ծրագրի ռազմավարության կարևոր ասպեկտներից է և հետևաբար առաջնային գործողություն է համարվում ՓԴԾ-ի թիմի, ԱՂԿ-ի և Տեխնիկական խորհրդատվական խմբի համար: ՓԴԾ-ը ԳԷՀ-ի Խորհրդի առջև պարտավորություն է ստանձնել, որպեսզի գլոբալ մակարդակում ապահովվի առնվազն 1:1 համաֆինանսավորման հարաբերակցություն, այնպես, որ համաֆինանսավորվող մասը հավասարապես բաշխվի դրամական և ոչ դրամական/նյութական ներդրումների տեսքով: Համաֆինանսավորումը նաև կարևոր է ՓԴԾ-ի կողմից ֆինանսավորվող նախագծերի թվի, չափերի և ազդեցությունների մեծացման համար: Առկա գործընկերություններն ու մոբիլիզացված ռեսուրսները կենսական նշանակություն ունեն նախագծերի եկամուտների

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

ստեղծման և ապրուստի միջոցների բարելավման համար, որոնք կնպաստեն նախագծերի նկատմամբ համայնքների կողմից «սեփականության զգացողության» դրսևորմանը և հետևաբար կապահովեն դրանց կայունությունը:

Ակնկալվում է, որ ԳՓ-7-ում ՓԴԾ հայաստանյան ծրագրի կողմից ֆինանսավորվող նախագծերը կապահովեն 1:1 համաֆինանսավորման չափաբաժինը (50% դրամական և 50% բնեղեն): Այնուամենայնիվ, Ազգային ծրագրի մակարդակում բավարար չափով ֆինանսական միջոցների մոբիլիզացման դեպքում համաֆինանսավորման դրամական բաղադրիչի պահանջը կարող է նվազել կամ չի կիրառվի չքավոր և խոցելի համայնքներում իրականացվող նախագծերի համար:

ԳԷՀ-ի ՓԴԾ հայաստանյան ծրագիրը կդիտարկի ինչպես ավանդական, այնպես էլ ոչ ավանդական աղբյուրների կողմից ընձեռնված գործընկերության և համաֆինանսավորման հնարավորությունները: Ռեսուրսների մոբիլիզացման գործողություններն իրականացվելու են հետևյալ ուղղություններով.

- Միջազգային դոնոր կազմակերպությունների և զարգացման գործակալությունների շահերի և գերակայությունների գնահատում և գործընկերության ու համաֆինանսավորման հնարավորությունների բացահայտում,
- Մասնավոր հատվածի ներգրավում ՓԴԾ-ի նախագծերի համաֆինանսավորման համար՝ նաև որպես կորպորատիվ սոցիալական պատասխանատվության բաղկացուցիչ մաս,
- ՓԴԾ-ի նախագծերի համաֆինանսավորման մեջ սփյուռքահայության ներգրավում,
- ՓԴԾ-ի նախագծերի ընդգրկում ՄԱԿ-ի գործակալությունների և ԳԷՀ-ի կողմից ֆինանսավորվող ավելի մեծ նախագծերի մեջ,
- ՓԴԾ-ի նախագծերի ընդգրկում ԿՁՆ-ների և աղքատության կրճատման ծրագրերի մեջ՝ համաֆինանսավորումը ընդլայնելու նպատակով,
- Պետական ֆինանսավորմամբ իրականացվող նախագծերի և տեղական մակարդակում իրականացվող նախաձեռնությունների փոխլրացման և համաֆինանսավորման հնարավորությունների ուսումնասիրում:

ՓԴԾ հայաստանյան ծրագիրը կուղղի բոլոր հնարավոր աղբյուրները ՓԴԾ-ի համար դրամական և ոչ դրամական համաֆինանսավորում ապահովելու համար՝ ինչպես ծրագրի, այնպես էլ նախագծերի մակարդակում: Այս առումով ծրագիրը մտադրվում է հաստատել և պահպանել ամուր գործընկերային հարաբերություններ երկկողմ ու բազմակողմ դոնոր կազմակերպությունների, ՄԱԿ-ի գործակալությունների, սփյուռքահայության, ինչպես նաև մասնավոր հատվածի և կառավարության հետ:

ՓԴԾ-ի սկզբունքներին համաձայն, բոլոր ազգային ծրագրերը որոշակի ժամանակից հետո պետք է անցում կատարեն դեպի ԳԷՀ-ի շրջանակներից դուրս գտնվող ֆինանսավորման աղբյուրներ: ՓԴԾ հայաստանյան ծրագրի կայունության ռազմավարությունը կենտրոնանալու է ԳԷՀ-ի ֆինանսավորման ավարտից հետո Ազգային ծրագրի արդյունքների կայունության ապահովման վրա՝ ինչպես ծրագրային, այնպես էլ նախագծերի մակարդակում: Մասնավորապես, Ազգային ծրագիրը կկենտրոնանա հետևյալ արդյունքների ապահովման վրա.

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

- Ծրագրի մակարդակում լրացուցիչ համաֆինանսավորման մոբիլիզացում և ԳԷՀ ու այլ դոնոր կազմակերպությունների համար, ներառյալ ՄԱԶԾ, որպես տրամադրման մեխանիզմի ստեղծում՝ ապահովելով ՓԴԾ-ի ծախսերի փոխհատուցումը,
- Եկամուտ ապահովող բաղադրիչի հզորացում և այդպիսով նախագծերի նկատմամբ համայնքի կողմից «սեփականության զգացողության» դրսևորման ամրապնդում,
- Ավանդական և ոչ ավանդական աղբյուրներից համաֆինանսավորման ռեսուրսների ապահովում,
- Հաջողությամբ իրականացված ՓԴԾ-ի նախագծերի և նախաձեռնությունների լայն լուսաբանման ու կրկնօրինակման ապահովում,
- ԱԾՌ-ի թարմացման ապահովում՝ բնապահպանական և կայուն զարգացման ազգային գերակայությունները ներառելու նպատակով,
- ԱՂԿ-ում կառավարության ներկայացուցիչների առավել արդյունավետ մասնակցության ապահովում, որի նպատակն է երաշխավորել ՓԴԾ հայաստանյան ծրագրի մասնակցությունն ազգային ռազմավարություններում և գործողությունների ծրագրերում,
- ՓԴԾ-ի տեսանելի լինելու ապահովում շարունակական հաղորդակցման, տեղեկատվական միջոցների և ցանցերում մասնակցելու միջոցով,
- ՀԿ-ների/ՀՀԿ-ների, տեղական իշխանությունների, կառավարման մարմինների, գիտական և կրթական հաստատությունների, մասնավոր հատվածի, ՁԼՄ-ների և այլ շահագրգիռ կողմերի միջև համագործակցության և երկխոսության համար հիմքերի ապահովում:

## 7. «ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՏՐԱՄԱԴՐՈՂ+» (GRANTMAKER+) ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կանոնավոր դրամաշնորհային գործունեությունից բացի 7-րդ գործառնական փուլի ընթացքում ՓԴԾ կողմից տրամադրվելու են նաև ոչ դրամաշնորհային աջակցության ծառայություններ, ներառյալ՝ ինստիտուցիոնալ կարողությունների կառուցում, գիտելիքների փոխանակում և քաղաքականության քարոզչություն: Նոր «Դրամաշնորհ տրամադրող+» (Grantmaker+) աջակցության մեխանիզմը կներդրվի տարիների ընթացքում կուտակված ՓԴԾ փորձի և գիտելիքների հիման վրա, որը դրամաշնորհային գործունեությունից բացի կստեղծի այլ արժեքներ: Հետևաբար, ՓԴԾ հայաստանյան ծրագիրը կստանձնի «Դրամաշնորհ տրամադրող+»-ի դերը լրացուցիչ աջակցության ծառայությունների կազմակերպման և արժեքների ստեղծման համար հետևյալ մոտեցումների միջոցով.

i) Աջակցել համայնքներին, տեղական ՀԿ-ներին և այլ շահագրգիռ կողմերին՝ ֆինանսավորման համար ԳԷՀ աղբյուրներից դուրս հայտերի ներկայացման առաջարկների մշակման ուղղությամբ,
ii) Աջակցել «*ՔՀԿ-պետական քաղաքականության և պլանավորման երկխոսությունների հարթակ*»-ի ստեղծման ուղղությամբ
iii) Աջակցել և ընդլայնել առավել խոցելի խմբերի, մասնավորապես՝ կանանց, բնիկ ժողովուրդների, երիտասարդների և հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառվածությանը և ինտեգրմանը:

ԳՓ-7-ի «Դրամաշնորհ տրամադրող+» ռազմավարությունները և առնչվող գործողությունները կարող են իրականացվել ընտրված լանդշաֆտային գոտուց դուրս կամ խթանել գործընկերության կառուցմանը, ցանցերի և քաղաքականության զարգացմանը թիրախային տարածքներում:

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

## 8. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

ԳՓ-7-ի ընթացքում Ազգային ծրագրի իրականացման հիմնական բացահայտված ռիսկերը ներկայացված են ստորև՝ Աղյուսակ 3-ում: Այն արտացոլում է ռիսկի աստիճանի և հավանականության գնահատականը, ինչպես նաև համապատասխան մեղմացնող միջոցառումները:

Աղյուսակ 3. ԳՓ-7-ում բացահայտված ռիսկերի նկարագիր

| Բացահայտված ռիսկի նկարագիր | Ռիսկի աստիճան (ցածր, միջին, բարձր) | Ռիսկի հավանականություն (ցածր, միջին, բարձր) | Ռիսկերի մեղմման նախատեսված միջոցառումներ |
|---|---|---|---|
| Քանի որ Հայաստանը դասվում է միջինից ցածր եկամուտ ունեցող երկրների շարքին, շատ երկկողմ դոնորներ կրճատել են իրենց աջակցությունը, որը ռեսուրսների մոբիլիզացման համար մարտահրավեր է ստեղծում: | Ցածր | Ցածր | Սա պահանջում է գործընկերության նկատմամբ ավելի լայն ու ստեղծագործական մոտեցում, ներառյալ՝ նոր և զարգացող երկկողմ գործընկերների, զարգացման բանկերի, կառավարության, անմիջակա-նորեն քաղաքացիների, մասնա-վոր հատվածի և սփյուռքի հետ: |
| ՓԴԾ ԳՓ-7-ի վերաբերյալ գործադիր մարմինների (համապատասխան նախա-րարությունների, տարած-քային և տեղական ինքնա-կառավարման մարմինների) ու տնտեսվարող սուբյեկտ-ների իրազեկվածության անբավարար մակարդակ: | Միջին | Միջին | Երևանում և մարզերում ՓԴԾ ԳՓ-7 սկզբունքների ու մոտեցումների վերաբերյալ շարունակական քննարկում, խորհրդակցություն և տեղեկատվության տարածում: |
| ՓԴԾ ծրագրի հայտատուների կողմից (ՀԿ-ներ, ՀՀԿ-ներ և այլն) բնա-պահպանական խնդիրների ու ԳՓ-7-ի ռազմավարական ուղղությունների անբավարար ընկալում և հետաքրքրության պակաս: | Միջին | Միջին | Մի շարք խորհրդատվական հանդիպումների իրականացում, կարողությունների զարգացում, հաջողված ՓԴԾ ԳՓ-6-ծրագրերի դեպքերի ուսումնասիրություն-ների ներկայացում՝ ՓԴԾ գործընթացում ակտիվ մասնակ-ցության խթանման նպատակով: |
| Համայնքային մակարդակի շահագրգիռ կողմերը չեն գիտակցում բնական ռեսուրսների կայուն օգտագործման օգուտները, որի արդյունքում ծրագրային գործողություններին մասնակցելու քիչ շարժառիթներ ունեն: | Միջին | Միջին | Բնական պաշարների ռացիոնալ օգտագործման համայնքային մակարդակի շահագրգիռ կող-մերի կարողությունների զարգա-ցում և որպես կայուն եկամուտի աղբյուր բնապահպանական տեսանկյունից անվնաս գործո-ղություններում գործնական ներգրավման աջակցություն: |
| Կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած արտադրական լանդշաֆտ-ների դեգրադացիան հատել է սահմանը, երբ դեռ հնարա-վոր էր մեղմել հետևանքները | Ցածր | Ցածր | Քիչ հավանական է, որ դրամաշնորհային ծրագրի իրականացման ողջ ընթացքում արոտավայրերի, անտառների և այլ լանդշաֆտների վրա կլիմայի փոփոխության հետևանքները |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

| Բացահայտված ռիսկի նկարագիր | Ռիսկի աստիճան (ցածր, միջին, բարձր) | Ռիսկի հավանականություն (ցածր, միջին, բարձր) | Ռիսկերի մեղմման նախատեսված միջոցառումներ |
|---|---|---|---|
| հարմարվողականության միջոցառումների միջոցով: | | | լուրջ լինեն: Երկարաժամկետ հեռանկարում այդ ռիսկը կհասցեագրվի ընթացիկ գյուղական զարգացման ծրագրերում կլիմայական տեսանկյունից հաշվարկված ագրո-էկոլոգիական մոտեցում-ների ներգրավման միջոցով: |
| Դրամաշնորհային հայտերի ձևակերպման և ծրագրային առաջարկների մշակման վերաբերյալ շահառու ՀԿ-ների և ՀՀԿ-ների շրջանում համապատասխան մասնա-գիտական գիտելիքների և հմտությունների բացակայություն: | Ցածր | Միջին | *Grantmaker+* նախաձեռնության շրջանակներում աջակցման ծառայությունների ակտիվացում, Ազգային ծրագրի կողմից ՔՀԿ-ների (մասնավորապես ՀՀԿ-ների) աջակցություն՝ ծրագրերի մշակման և ձևակեր-պման ոլորտում, ինչպես նաև ՓԴԾ և գործընկերների ռեսուրս-ների մատչելիության դյուրացում: |
| ՓԴԾ ԳՓ-7-ի շրջանակներում ծրագրերի իրականացման համար տեղական մակար-դակում անբավարար տեխ-նիկական և մարդկային ռեսուրսներ: | Ցածր | Միջին | Հիմնվելով տարիների ընթացքում կուտակված ՓԴԾ փորձի, գիտե-լիքների ու ակտիվների վրա, ծրա-գրերի արդյունավետ իրականաց-ման, այդ թվում՝ տեխնոլոգիանե-րի, ֆինանսական միջոցների և մարդկային ռեսուրսների պատ-շաճ օգտագործման թիրախային կարողությունների զարգացման և ուսուցման ապահովում: |
| ՓԴԾ ԳՓ-7-ի շրջանակներում իրականացված ծրագրերի արդյունքների կայունության ապահովման նկատմամբ ցածր վստահություն: | Միջին | Միջին | Իրականացվող ծրագրերի կայու-նության ձեռքբերման և կրկնօրի-նակման հնարավորության նպա-տակով, որպես ՄԱԳ գործողու-թյունների մի մաս ընտրվելու և համապատասխանաբար հաղոր-դակցվելու են քաղված դասերը, ի թիվս այլ գործողությունների: |
| ՓԴԾ ծրագրերից սերտված դասերը և լավագույն գործելակերպերը արագորեն չեն ընդունվում/յուրացվում ազգային քաղաքականու-թյան կողմից: | Միջին | Բարձր | Ազգային մակարդակում քաղված դասերի փոխանցման ապահով-ման համար ծրագրի կողմից կօգտագործվեն բոլոր հնարավոր մեխանիզմները: Անհրաժեշտու-թյան դեպքում, ծրագրի կողմից առկա մեխանիզմները կլրացվեն՝ մշակելով տեղականից դեպի ազգային մակարդակ փոխանցման մեխանիզմները, օրինակ՝ տեղա-կան աշխատանքային խմբեր, սե-մինարներ, կամ կոնկրետ հարցերի լոբբինգ: |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

Նշված ռիսկերը, որոնք վերաբերում են սոցիալական և բնապահպանական, կլիմայական, ֆինանսական, իրավական և քաղաքական ասպեկտներին, հաշվի են առնվելու ծրագրերի իրականացման ընթացքում և թարմացվելու են ԱԾՌ վերանայման միջոցով: Այնուհետև, ռիսկի աստիճանը կամ հավանականությունը կարող է ճշգրտվել: Ըստ անհրաժեշտության, ի սկզբանե հայտնաբերված ռիսկերը կարող են նաև հանվել, և դրանց փոխարեն կարող են ավելացվել նորերը՝ համապատասխան մեղմացման միջոցառումներով:

## ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆ

### 8.1 Մոնիտորինգի մոտեցումները նախագծի և երկրի մակարդակով

Մոնիտորիգը և գնահատումը (ՄևԳ)[6] հանդիսանում է ՓԴԾ-ի կարևոր բաղկացուցիչ մասը, որի նպատակն է գնահատել առաջընթացն ու ձեռքբերումները նախագծերի և Ազգային ծրագրի մակարդակներում: Ինչպես նախագծերի, այնպես էլ Ազգային ծրագրի մակարդակում, ՄևԳ-ն կիրականացվի տարբեր փուլերի իրագործման ընթացքում՝ պլանավորման, իրականացման և ավարտական փուլերում: ՄևԳ-ն բացահայտում է իրականացման ընթացքում առաջացած խնդիրները և օգնում է գնահատել նպատակների իրականացման առաջընթացը: ՄևԳ գործողություններն ամփոփվում են տարբեր տիպի հաշվետվություններում, որոնք ծրագրին և դրա նախագծերին օգնում են հաշվետու լինել և հասնել կայունությանը, ստեղծում են կրկնօրինակման, ինչպես նաև դասեր քաղելու և դրանց վերաբերյալ տեղեկատվություն տարածելու հնարավորություններ: ՄևԳ-ի արդյունքները և քաղված դասերը կօգտագործվեն ծրագրի և նախագծերի մշակման ու իրականացման գործընթացները բարելավելու համար, և ՓԴԾ-ի դրամաշնորհառուներին հնարավորություն կտան շարունակել նախագծի աշխատանքները նաև դրամաշնորհային ժամանակաշրջանից հետո:

Ծրագրային սկզբունքներից մեկն այն է, որ ՓԴԾ-ի դրամաշնորհառուները պետք է լիարժեք ներգրավեն տեղական համայնքներին և այլ շահագրգիռ կողմերին նախագծի մակարդակում ինքնուրույն իրականացվող մոնիտորինգի և գնահատման մասնակցային գործընթացում առնվազն երկու անգամ նածագծի իրականացման ընթացքում: Ենթադրվում է, որ նախագծի շահառուների մասնակցությունը ՄևԳ գործընթացում կնպաստի նախագծի մոտեցումների վերաբերյալ փոխադարձ ընկալման ձևավորմանը, համայնքի կողմից «արդյունքների նկատմամբ սեփականության զգացողության դրսևորմանը», ինչպես նաև հնարավորություն կընձեռնի հզորությունների զարգացման և նախագծի ու ծրագրի փորձից քաղված դասերի օգտագործման համար:

Անհրաժեշտության դեպքում և որքան հնարավոր է, ԱՂԿ-ի և ՏԽԹ-ի համապատասխան անդամները նույնպես կմասնակցեն մոնիտորինգի գործողություններին: Բացի այդ, միասնական մոնիտորինգ հնարավորինս կկիրառվի նաև հիմնադրամների, գիտական հաստատությունների, գործընկեր նախագծերի և կազմակերպությունների հետ համատեղ ծախսերի արդյունավետության բարելավման նպատակով: Դրամաշնորհառուների մոնիտորինգի և գնահատման կարողությունների մակարդակի բարձրացման համար

[6] Մոնիտորինգը կենտրոնանում է ծրագրի առաջընթացի գնահատման և ծրագրված արդյունքների ձեռքբերման վրա: Այն թույլ է տալիս ծրագրի մասնակիցներին հետևել ծրագրային գործողություններին, որոշելու, թե արդյոք ծրագրի նպատակները իրականացվում են, և անհրաժեշտ փոփոխություններ կատարել ծրագրի իրականացման գործընթացի բարելավման նպատակով:
Գնահատումը վերաբերում է նշված նպատակների շրջանակներում ծրագրի համապատասխանության, կատարման, հետևանքների և ազդեցության պարբերական գնահատմանը: Այն ներառում է ճշգրիտ գնահատում, թե արդյոք ծրագիրը ապահովում է սահմանված նպատակները ԳԷՀ նպատակային տարածքների ու գործառնական ծրագրերի տեսանկյունից, իսկ եթե ոչ, ապա բացահայտված արդյունքների պատճառները ենթարկվում են վերլուծության.

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

կանցկացվեն ներածական հանդիպումներ, ինչպես նաև գործընկեներների հետ գիտելիքների փոխանակում և դասընթացներ ՄևԳ ռազմավարության և իրականացման մոդելների վերաբերյալ:

Ազգային մակարդակում ՄևԳ գործընթացը հիմնականում ներառում է. ծրագրային ՄևԳ պլանի մշակումը և իրականացումը, որը հիմնված է ԱԾՌ Աղյուսակ 5-ում (Տրամաբանական շրջանակ) սահմանված ցուցանիշների և թիրախների, քաղված դասերի կազմման և հաղորդակցման և ԿԾԿԹ-ի և ԱՂԿ-ին ներկայացվող տարեկան հաշվետվությունների վրա: Ստորև բերված Աղյուսակ 4-ում ներկայացված են Ազգային ծրագրի մակարդակով ՄևԳ առանցքային գործիքները և ձևանմուշները:

Աղյուսակ 4. ՄևԳ պլան Ազգային ծրագրի մակարդակում

| ՄևԳ գործողություն | Նպատակ | Պատասխանատու կողմեր | Բյուջեյի աղբյուր | ժամկետներ |
|---|---|---|---|---|
| Ազգային ծրագրի ռազմավարության մշակում | Համայնքային ծրագրերի նույնականացման շրջանակ | ԱՀ, ԱՂԿ, ազգային շահագրգիռ կողմեր, դրամաշնորհա-ռուներ | Խորհրդատուների ներգրավման նպատակով նախատեսված ՓԴԾ պլանավոր-ման դրամաշնորհի ռեսուրսները կարող են օգտա-գործվել ԳՓ-7 ԱԾՌ արդիականացման նպատակով | ԳՓ-7 մեկնարկին |
| ԱՂԿ հանդիպումների շրջանակում ծրագրի արդյունքների շարունակական ուսումնասիրու-թյուն և վերլուծություն: Սա ներառում է ԱԾՌ տարեկան վերանայումը: | Ծրագրերի,ազգային պորտֆելի արդյունավետության գնահատում, ուսուցում. հարմարվողական կառավարում | ԱՀ, ԱՂԿ, ՄԱՀԾ հայաստանյան գրասենյակ: Վերջնական դիտարկումները տարածվում/վեր-լուծվում են ԿԾԿԹ գործընկերների հետ: | Անձնակազմի աշխատաժամա-նակ, Ազգային ծրագրի գործառնական ծախսերի բյուջե | Վերանայումներն իրականացվելու են տարեկան կտրվածքով, որի նպատակն է ապահովել ԳՓ-7 ԱԾՌ-ը կողմից իր նախանշած արդյունքների իրագոր-ծումը համաձայն սահ-մանված ժամանակա-ցույցի, և ըստ անհրա-ժեշտության կատարել ԱԾՌ ապացուցահենք փոփոխություններ |
| Տարեկան մոնիտորինգի հաշվետվության հետազոտություն | Արդյունավետ հաշվետվայնության խթանում ԿԾԿԹ-ին և ԳԷՀ-ին: Այն ծառայում է որպես առաջնային գործիք՝ արդյունքների գրանցման և վերլուծականորեն դոնորին ներկայացման համար | ԱՀ/ՊՏ՝ ԱՂԿ հետ սերտ համագոր-ծակցությամբ: ԿԾԿԹ տրամա-դրում է տեխնի-կական ուղղորդիչ օժանդակություն և ստանում է երկրի ներկայացրած վերջնական հաշ-վետվությունը հե-տագա գործողու-թյունների համար | Անձնակազմի աշխատաժամա-նակ | Տարեկան մեկ անգամ՝ հունիս-հուլիս ամիսներին |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

| ՄԱԳ գործողություն | Նպատակ | Պատասխանատու կողմեր | Բյուջեյի աղբյուր | Ժամկետներ |
|---|---|---|---|---|
| Ազգային պորտֆելի վերանայում | Մեթոդաբանական արդյունքների միջոցով կատարվում է պորտֆելի իրավիճակի ամրագրում որոշակի կոնկրետ պահի դրությամբ՝ ազդեցության մակարդակի փոփոխությունը, ինչպես նաև ընդունման ավելի լայն շրջանակը արձանագրելու նպատակով: Առաջնահերթ խնդիրն է՝ աջակցել շահագրգիռ կողմերի հաշվետվողականությանը, ուսուցմանը, և ԱԾՌ-ի ռազմավարական զարգացմանը / իրականացմանը: | ԱՀ, ԱՂԿ | Խորհրդատուների ներգրավման նպատակով նախատեսված ՓԴԾ պլանավորման դրամաշնորհի ռեսուրսները կարող են օգտագործվել նախորդ գործառնական փուլերի ազդեցության դիտարկման, ինչպես նաև քաղած դասերը ԳՓ-7 ԱԾՌ զարգացման և ներդրման փուլերում օգտագործելու նպատակներով<br>Կարող է ակնկալվել գլոբալ տեխնիկական աջակցություն ՄԱԳ գծով | Գործառնական յուրաքանչյուր փուլի ընթացքում մեկ անգամ |
| ՓԴԾ տվյալների բազա | Ապահովել Ծրագրի և Ազգային ծրագի բոլոր ելակետային տվյալների մուտքագրումը ՓԴԾ տվյալների բազայում: | ԱՀ-ներ, ՊՏ-ներ | Անձնակազմի աշխատաժամանակ | Գործառնական փուլի տևողության ընթացքում: Ապահովել տվյալների որակի և ամբողջականության հավաստիացում նախքան տարեկան մոնիտորինգի փուլի մեկնարկը (յուրաքանչյուր տարվա մայիս-հունիս): |
| Աուդիտ | Ապահովել համապատասխանությունը ծրագրի իրականացման/ կառավարման ստանդարտներին և չափանիշներին | ՄԱԿ-ի ծրագրերի սպասարկման գրասենյակ/ արտաքին կապալառու: ԱՀ-ների, ՊՏ-ների կողմից կապահովվի պահանջվող աջակցությունը | Գլոբալ գործառնական բյուջե | Տարեկան՝ ընտրված երկրների համար, համաձայն ռիսկերի գնահատման |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

### 8.2 ԱԾՌ արդյունքների շրջանակ

Ստորև ներկայացված Աղյուսակ 5-ում ցուցադրված են ԳՓ7-ի գլոբալ ծրագրի բաղադրիչները և թիրախները (մի շարք երկրներում), որը նկարագրված է ԳԷՀ Գործառնական Տնօրենի հաստատման փաստաթղթում: Օգտագործելով տրամաբանական կառուցվածքի մոտեցումը, այն ներկայացնում է ազգային մակարդակում մի շարք արդյունքներ, որոնք անդրադառնում են Ելակետային գնահատման հաշվետվության (Հավելված 4) մեջ մանրամասնորեն ներկայացված ԳՓ-7 կիզակետային ոլորտների իրավիճակային վերլուծությանը: Մասնավորապես, տրամաբանական շրջանակի աղյուսակը ներկայացնում է ՓԴԾ-ի հայաստանյան ծրագրի ընդհանուր նպատակը, մանրամասնում է ակնկալվող արդյունքները՝ դրամաշնորհային ծրագրի (միջանկյալ արդյունք) և Ազգային ծրագրի (վերջնական արդյունք) մակարդակներում, սահմանում է ծրագրերի մոտավոր թվաքանակը և տիպաբանությունը, ինչպես նաև առանձնացնում է համապատասխան նպատակային արդյունքի շրջանակներում նախատեսված գործողությունները: Փաստորեն, սրանք այն հիմնական տարրերն են, որոնք օգտագործվում են ՓԴԾ-ի ծրագրերի պլանավորման, հաստատման, գնահատման և մոնիտորինգի համար:

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

Աղյուսակ 5: ՓԴԾ ԳՓ-7 Ազգային ծրագրի ռազմավարության արդյունքների շրջանակ

| 1<br>ԱԾՌ արդյունքներ | 2<br>Նախագծի մակարդակով իրականացվող գործողություններ, որոնք բերում են արդյունքների/վերջնական արդյունքների | 2<br>Ազգային ծրագրի վերջնական արդյունք/ազդեցության ցուցանիշներ | | 3<br>Ստուգման միջոցներ |
|---|---|---|---|---|
| | | Երկրին բնորոշ ցուցանիշներ և թիրախներ | ԳԷՀ-7 հիմնական և ՓԴԾ գլոբալ ցուցանիշներ | |
| **ԳՓ-7 ԱԾՌ ՆՊԱՏԱԿ:** ***Աջակցել նորարարական և մասշտաբային նախաձեռնություններին համայնքային մոտեցումների և գործողությունների միջոցով, ինչպես նաև խրախուսել շահագրգիռ կողմերի բազմակողմ համագործակցությունը բնապահպանական հիմնահարցերին արձագանքելու համար*** | | | | |
| **Փոխլրացում Համագործակցության ծրագրի փաստաթղթին (ՀԾՓ)**<br>- **ՀԾՓ արդյունք 4.5**: Ստեղծված են նոր արտադրական և սպառողական մոդելներ, ստեղծված են նոր, «կանաչ» աշխատատեղեր | | | | |
| **ԳՓ-7 ՓԴԾ ԱԾՌ Ռազմավարական նախաձեռնություն 1: Հ***ամայնքային մակարդակով վտանգված էկոհամակարգերի և տեսակների պահպանություն*<br>Հիմնական նպատակներ/կիզակետ<br>- Բարելավել կենսաբազմազանության համար անվտանգ համայնքային գործելակերպերը և մոտեցումները, ներառյալ «կապույտ» տնտեսության խթանումը (օր.՝ գյուղատնտեսություն, ձկնարդյունաբերություն, անտառային տնտեսություն, տուրիզմ, ենթակառուցվածքներ և այլն)<br>- Բարելավել համայնքային գործողությունները՝ ուղղված վտանգված տեսակների պահպանությանը<br>- | | | | |
| <u>ԱԾՌ արդյունք 1:</u><br>*Համայնքային գործողությունների միջոցով կարևոր ցամաքային էկոհամակարգերի պահպանություն, կայուն օգտագործում և կառավարում* | *1.1 Կենսառեսուրսների կայուն օգտագործման և էկոհամակարգերի կառավարման նպատակով էկոլոգիապես անվտանգ գործելակերպերի ներառում՝ ի նպաստ համայնքների ապրուստի միջոցների ապահովման*<br>*(Ծրագրերի մոտավոր քանակը՝ **1**)*<br><br>*1.2 Համայնքային ուղղվածության արդյունավետ պահպանության ձևերի խթանում կրիտիկական վիճակում գտնվող պահպանվող* | *1.1.1 Առնվազն **250** հա լանդշաֆտային տարածք ենթարկվել են դրական ազդեցության՝ կենսաբանական ռեսուրսների պահպանման և կայուն օգտագործման վրա հիմնված ապրուստի միջոցներ ստեղծելու գործելակերպերի ցուցադրման միջոցով*<br><br>*1.2.1 Պետական ՊՏ-ների և/կամ համայնքների կողմից պահպանվող տարածքների (ներառյալ՝ էկոմիջանցքների) առնվազն **1500** հա ենթարկվել* | ***250** հա լանդշաֆտներ գտնվում են բարելավված կառավարման ներքո՝ ի նպաստ կենսաբազմազանության (ԳԷՀ հիմնական ցուցանիշ 4.1)*<br><br>*Ամրապնդվել է առնվազն **1** համայնքային պահպանվող տարածք և /կամ տարածքների ցանց* | *ՓԴԾ ազգային թիմերի կողմից անհատական նախագծերի հաշվետվությունների ներկայացում (միջանկյալ և վերջնական առաջընթացի հաշվետվությունների շրջանակներում)*<br><br>*Ելակետային գնահատման համեմատական փոփոխականներ (անհրաժեշտության դեպքում* |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

| 1<br>ԱԾՌ արդյունքներ | 2<br>Նախագծի մակարդակով իրականացվող գործողություններ, որոնք բերում են արդյունքների/վերջնական արդյունքների | 2<br>Ազգային ծրագրի վերջնական արդյունք/ազդեցության ցուցանիշներ | | 3<br>Ստուգման միջոցներ |
|---|---|---|---|---|
| | | Երկրին բնորոշ ցուցանիշներ և թիրախներ | ԳԷՀ-7 հիմնական և ՓԴԾ գլոբալ ցուցանիշներ | |
| | *տարածքներում, կենսաբազմազանության թեժ կետերում և էկոլոգիական միջանցքներում*<br>*(Ծրագրերի մոտավոր քանակը՝ 1)*<br><br>*1.3 Զգայուն տարածքների և կենսամիջավայրերի պահպանության վերաբերյալ իրազեկվածության մակարդակի և կենսաբազմազանության կարևորության ու արժեքի ընկալման, ինչպես նաև համայնքային մակարդակում դրա պահպանմանը նպաստող տնտեսական գործունեության ընկալման բարձրացում* | *են դրական ազդեցության՝ վայրի բնության կառավարման և պահպանման ֆինանսապես կենսունակ մոդելների ներդրմամբ*<br><br>*1.3.1 Համայնքի առնվազն 200 անդամներ ձեռք են բերել գիտելիքներ կենսաբազմազանությանը չվտանգող ապրուստի միջոցներ ստեղծելու գործելակերպերի վերաբերյալ, ներառյալ գյուղատնտեսության, ձկնարդյունաբերության, անտառաբուծության և էկոտուրիզմի բնագավառներում* | | *հայեցակարգային մոդելների և գործընկերների տվյալների օգտագործում)*<br><br>*Տարեկան Մոնիտորինգի Հաշվետվություն (ՏՄՀ), ՓԴԾ տվյալների գլոբալ բազա*<br><br>*Ազգային ծրագրի վերանայում* |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

| 1<br>ԱԾՌ արդյունքներ | 2<br>Նախագծի մակարդակով իրականացվող գործողություններ, որոնք բերում են արդյունքների/վերջնական արդյունքների | 2<br>Ազգային ծրագրի վերջնական արդյունք/ազդեցության ցուցանիշներ | | 3<br>Ստուգման միջոցներ |
|---|---|---|---|---|
| | | Երկրին բնորոշ ցուցանիշներ և թիրախներ | ԳԷՀ-7 հիմնական և ՓԴԾ գլոբալ ցուցանիշներ | |
| **ԳՓ-7 ՓԴԾ ԱԾՌ Ռազմավարական նախաձեռնություն 2:** *Կայուն գյուղատնտեսություն և ձկնարդյունաբերություն, պարենային անվտանգություն*<br>Հիմնական նպատակներ/կիզակետ<br>- Բարձրացնել սննդի ընդհանուր արտադրության և արժեշղթայի արդյունավետությունը՝ ներառյալ խոցելի էկոհամակարգերում<br>- Բարձրացնել դիվերսիֆիկացումը և կենսապահովման բարելավումը<br>- Դուրս մղել անտառհատումը մատակարարման շղթայից և ընդլայնել դեգրադացված հողերի վերականգնման ծավալները | | | | |
| <u>ԱԾՌ արդյունք 2:</u><br>*Կլիմայական ռիսկերի տեսանկյունից դիմակայուն նորարարական գյուղատնտեսական գործելակերպերի ներդրում՝ հողի դեգրադացիայի մեղմման, արտադրողականության կայուն աճի, ֆերմերների դիմակայունության ամրապնդման, գյուղատնտեսական արտանետումների կրճատման և ածխածնի կլանումն ավելացնելու նպատակով* | *2.1 Կլիմայական ռիսկերի տեսանկյունից խելամիտ ագրո-էկոլոգիական մոտեցումների և գործելաոճերի խթանում՝ արոտավայրերից, խոտհարքներից, ջրային մարմիններից և այլ արտադրական լանդշաֆտներից ստացվող ագրոէկոհամակարգային ծառայությունների վերականգնման և պահպանման նպատակով*<br>*(Ծրագրերի մոտավոր քանակը՝ **3**)* | *2.1.1 Ցուցադրվել են մթերքի արտադրության և արժեշղթաների հավելումների արդյունավետության բարձրացմանն ուղղված առնվազն **3** փորձված մեթոդներ և գործնական մոտեցումներ (օր.՝ ցանքածածկում, մշակաբույսերի միջշարային ցանքս, ռեսուրս խնայող գյուղատնտեսություն, օրգանական գյուղատնտեսություն, ցանքաշրջանառություն, հետբերքահավաքյա կառավարում, դիմակայուն պարենային մշակաբույսեր, մշակաբույսերի և անասունների համապարփակ կառավարում, ագրո-անտառաբուծություն, բարելավված արածեցում, ձկնարդյունաբերություն և ջրերի կառավարում)*<br><br>*2.1.2 Առնվազն **300** ֆերմերներ և / կամ ձկնորսներ ունեն բավարար կարողություններ՝* | ***300** հա լանդշաֆտների հողերի կայուն կառավարումը ապահովվում է արդյունագործական համակարգերում (ԳԷՀ հիմնական ցուցանիշ 4.3)*<br><br>*Վերականգնվել է **150** հա դեգրադացված գյուղատնտեսական նշանակության հողեր (ԳԷՀ հիմնական ցուցանիշ 3.1)*<br><br>***100** մանր տնտեսություն ունեցող ֆերմերներ ստացել են աջակցություն՝ ուղղված հողերի չեզոք դեգրադացիայի (LDN) ազգային նպատակների իրականացմանը*<br><br>*Առնվազն **1** նախագիծ օժանդակում է սննդի արտադրության կայուն գործելակերպի կապերի ստեղծմանը և գործընկերությունը (օրինակ՝ դիվերսիֆիկացում և կայուն* | *ՓԴԾ ազգային թիմերի կողմից անհատական նախագծերի հաշվետվությունների ներկայացում (միջանկյալ և վերջնական առաջընթացի հաշվետվությունների շրջանակներում)*<br><br>*Տարեկան Մոնիտորինգի Հաշվետվություն (ՏՄՀ), ՓԴԾ տվյալների գլոբալ բազա*<br><br>*Ազգային ծրագրի վերանայում*<br><br>*Արտադրական լանդշաֆտների սոցիալ-էկոլոգիական դիմակայունության* |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

| 1<br>ԱԾՌ արդյունքներ | 2<br>Նախագծի մակարդակով իրականացվող գործողություններ, որոնք բերում են արդյունքների/վերջնական արդյունքների | 2<br>Ազգային ծրագրի վերջնական արդյունք/ազդեցության ցուցանիշներ | | 3<br>Ստուգման միջոցներ |
|---|---|---|---|---|
| | | Երկրին բնորոշ ցուցանիշներ և թիրախներ | ԳԷՀ-7 հիմնական և ՓԴԾ գլոբալ ցուցանիշներ | |
| | | *իրականացնելու կլիմայական ռիսկերի տեսանկյունից դիմակայուն գյուղատնտեսական, ձկնարդյունաբերական և պարենով ապահովման գործելակերպեր, որոնք ներառում են հողի, ջրի, անասնապահության, կենսաբազմազանության և շրջակա միջավայրի կառավարման բաղադրիչը, բարելավում են էկոհամակարգի գործառնությունը, ամրապնդում են գյուղատնտեսական սննդի արժեշղթան և պահպանում տեղական բնակչության ապրուստի միջոցները* | *ինտենսիֆիկացում) և մատակարարման ցանցի կառավարմանը՝ ներառյալ ձկնարդյունաբերության կայուն կառավարումը* | *ցուցանիշներ (USAL-եր)* |
| **ԳՓ-7 ՓԴԾ ԱԾՌ Ռազմավարական նախաձեռնություն 3:** *Ցածր ածխածնային էներգիայի մատչելիության ուղեկցող օգուտները*<br>Հիմնական նպատակներ/կիզակետ<br>- Աջակցել Փարիզի համաձայնագրի և ԱՄՍՆ-ների իրականացմանը<br>- Խթանել վերականգնվող և էներգաարդյունավետ տեխնոլոգիաները, որոնք ապահովում են սոցիալ-տնտեսական օգուտներ և կենսամակարդակի բարելավում | | | | |
| <u>ԱԾՌ արդյունք 3:</u><br>*Տեղայնացված ցածր ածխածնային տեխնոլոգիաները ցուցադրված, տարածված և առևտրայնացված են* | *3.1 Տեղական համայնքների կարողությունների հզորացում՝ կիրառելու տեղայնացված ցածր ածխածնային կենսունակ և համապատասխան տեխնոլոգիաներ և մոտեցումներ (Ծրագրերի մոտավոր քանակը՝ 3)* | *3.1.1 Ցածր ածխածնային տեխնոլոգիաների առնվազն **1** տեղայնացված կիրառություն (միկրո-արեգակնային, միկրոՀԷԿ, կենսագազից և մեթանից էներգիայի ստացում, էներգաարդյունավետ վառարաններ) մշակվել, փորձարկվել և ընդունվել է* | *Առնվազն **150 ԿՎտ** հզորությամբ վերականգնվող էներգիայի տեղադրված համակարգեր՝ տեղական լուծումների կիրառմամբ (օրինակ ՝ վերականգնվող էներգիայի տեխնոլոգիայի տեսակներ՝ կենսազանգված, փոքր հիդրո, արևային կայանքները)* | *ՓԴԾ ազգային թիմերի կողմից անհատական նախագծերի հաշվետվությունների ներկայացում (միջանկյալ և վերջնական առաջընթացի* |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

| 1<br>ԱԾՌ արդյունքներ | 2<br>Նախագծի մակարդակով իրականացվող գործողություններ, որոնք բերում են արդյունքների/վերջնական արդյունքների | 2<br>Ազգային ծրագրի վերջնական արդյունք/ազդեցության ցուցանիշներ | | 3<br>Ստուգման միջոցներ |
|---|---|---|---|---|
| | | Երկրին բնորոշ ցուցանիշներ և թիրախներ | ԳԷՀ-7 հիմնական և ՓԴԾ գլոբալ ցուցանիշներ | |
| | | *ընդլայնման և կրկնօրինակման նպատակով*<br>*3.1.2 Առնվազն **30** ՀԿ-ներ/ՀՀԿ-ներ, տեղական ինքնակառավարման մարմիններ և/կամ համայնքային մակարդակի շահագրգիռ կողմեր ցուցադրել են տեղերում իրագործելի ցածր ածխածնային տեխնոլոգիաներ*<br><br>*3.1.3 Առնվազն 10 ծրագրային համայնքներում բարձրացվել է տեղի բնակչության իրազեկվածության մակարդակը ցածր ածխածնային էներգիայի օգտագործման ուղեկցող օգուտների վերաբերյալ (դիմակայունության, էկոհամակարգային ազդեցության, եկամուտների և առողջապահության տեսանկյունից)* | *Համայնքներում էներգիայի մատչելիության բարձրացման առնվազն **3** տեղայնացված լուծումներ՝ հաջողված ցուցադրություններով ընդլայնման և կրկնօրինակման համար*<br><br>*Առնվազն **200** տնային տնտեսություններ ապահովվել են մատչելի էներգիայով, հաշվարկվել և գնահատվել են ուղեկցող օգուտները* | *հաշվետվությունների շրջանակներում)*<br>*Տարեկան Մոնիտորինգի Հաշվետվություն (ՏՄՀ), ՓԴԾ տվյալների գլոբալ բազա*<br><br>*Ազգային ծրագիր ռազմավարական վերանայում (ԱՌԿ տվյալներ)* |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

| 1<br>ԱԾՌ արդյունքներ | 2<br>Նախագծի մակարդակով իրականացվող գործողություններ, որոնք բերում են արդյունքների/վերջնական արդյունքների | 2<br>Ազգային ծրագրի վերջնական արդյունք/ազդեցության ցուցանիշներ | | 3<br>Ստուգման միջոցներ |
|---|---|---|---|---|
| | | Երկրին բնորոշ ցուցանիշներ և թիրախներ | ԳԷՀ-7 հիմնական և ՓԴԾ գլոբալ ցուցանիշներ | |
| | | | | |
| **ԳՓ-7 ՓԴԾ ԱԾՌ Ռազմավարական նախաձեռնություն 4:** *Քիմիական նյութերի և թափոնների կառավարման կոալիցիաներ՝ տեղականից դեպի գլոբալ*<br>Հիմնական նպատակներ/կիզակետ<br>- Նպաստել պլաստիկի/կոշտ թափոնների կառավարման և շրջանաձև տնտեսությանը<br>- Կրճատել/դուրս մղել գյուղատնտեսության մեջ քիմիական նյութերի օգտագործումը | | | | |
| ԱԾՌ արդյունք 4:<br>*Քիմիական նյութերի և թափոնների կառավարման նորարարական և գործնական լուծումները ներդրված են՝ աջակցելով գիտելիքների փոխանակմանը և համագործակցությանը տեղական և համաշխարհային համագործակցության շրջանակներում* | 4.1 Վտանգավոր քիմիական նյութերի և թափոնների անվտանգ կառավարման նորարարական, մատչելի և գործնական համայնքային գործիքների և մոտեցումների խթանում<br><br>*(Ծրագրերի մոտավոր քանակը՝ 2)* | 4.1.1 Քիմիական նյութերի և թափոնների (թունաքիմիկատներ, պոլիմերային նյութեր /պլաստմասսաներ, էլեկտրոնային թափոններ) անվտանգ կառավարման առնվազն **1** նորարարական և գործնական լուծում փորձված/փորձարկված, փաստագրված և տարածված է քիմիական նյութերի տեղական և գլոբալ կոալիցիաների և/կամ ցանցերի աջակցությամբ<br>4.1.2 Առնվազն **200** համայնքի անդամներ և տեղական մակարդակի շահագրգիռ կողմեր բարձրացրել են իրազեկվածություն և ձեռք են բերել գիտելիքներ քիմիական նյութերի գործածության անվտանգության և թափոնների կառավարման հարցերի վերաբերյալ | *Առնվազն **5** համայնքներ ներգրավված են են քիմիական նյութերի, թափոնների և սնդիկի անվտանգ կառավարման վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացման աշխատանքներում* | *ՓԴԾ ազգային թիմերի կողմից անհատական նախագծերի հաշվետվությունների ներկայացում (միջանկյալ և վերջնական առաջընթացի հաշվետվությունների շրջանակներում)*<br><br>*Ռազմավարական գործընկերություն ԿՎՄՑ (IPEN) և Mercury GOLD երկրի գործընկերների հետ*<br><br>*Տարեկան Մոնիտորինգի Հաշվետվություն (ՏՄՀ), Ազգային ծրագրի վերանայում* |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

| 1<br>ԱԾՌ արդյունքներ | 2<br>Նախագծի մակարդակով իրականացվող գործողություններ, որոնք բերում են արդյունքների/վերջնական արդյունքների | 2<br>Ազգային ծրագրի վերջնական արդյունք/ազդեցության ցուցանիշներ | | 3<br>Ստուգման միջոցներ |
|---|---|---|---|---|
| | | Երկրին բնորոշ ցուցանիշներ և թիրախներ | ԳԷՀ-7 հիմնական և ՓԴԾ գլոբալ ցուցանիշներ | |
| **ԳՓ-7 ՓԴԾ ԱԾՌ Ռազմավարական նախաձեռնություն 5:** *ՔՀԿ-պետություն-մասնավոր հատվածի միջև քաղաքականության և պլանավորման ոլորտում երկխոսության հարթակներ*<br>Հիմնական նպատակներ/ կիզակետ<br>- Խթանել/ուժեղացնել համայնքի ձայնը և մասնակցությունը գլոբալ և ազգային քաղաքականության, ռազմավարության մշակմանը՝ կապված գլոբալ էկոլոգիական և կայուն զարգացման խնդիրների հետ | | | | |
| <u>ԱԾՌ արդյունք 5:</u><br>*ՔՀԿ-ների և համայնքային մակարդակի շահագրգիռ կողմերի հզորացված կարողություններ՝ ազգային քաղաքականության վերլուծության և բնապահպանական ու կայուն զարգացման վերաբերյալ երկխոսության գործընթացում բովանդակալից ներգրավման նպատակով* | *5.1 ՔՀԿ-պետություն-մասնավոր հատված համագործակցային մոդելների և մոտեցումների խթանում տեղական, տարածաշրջանային և ազգային մակարդակներում քաղաքականության վերաբերյալ տեղեկացման ու դրա վրա ազդելու, ՓԴԾ նորարարությունների ընդլայնման և առևտրայնացման նպատակով*<br><br>*(Ծրագրերի մոտավոր քանակը՝ **1**)* | *5.1.1 Աջակցվել է ՔՀԿ-պետություն-մասնավոր հատվածի միջև քաղաքականության պլանավորման առնվազն **1** երկխոսություն, որը առնչվում է բնապահպանական և կայուն զարգացման գործընթացներին ուղղությամբ*<br>*5.1.2 Առնվազն **1** ՓԴԾ փորձ կամ լավագույն գործելակերպը տրամադրվել է կառավարությանը՝ ներգործելու կենտրոնական և/կամ տեղական քաղաքականության մշակման կամ ձևակերպման վրա, ՓԴԾ նորարարությունների ընդլայնման և առևտրայնացման նպատակով* | *Առնվազն **1** ՔՀԿ-պետություն-մասնավոր հատվածի երկխոսություն, որը հրավիրվել է աջակցելու համայնքի կողմից բարձրաձայնած խնդիրներին և ներկայացուցչությանը ազգային/ենթապետական քաղաքականության մշակման գործում* | *ՓԴԾ ազգային թիմերի կողմից անհատական նախագծերի հաշվետվությունների ներկայացում*<br><br>*Տարեկան Մոնիտորինգի Հաշվետվություն (ՏՄՀ), ՓԴԾտվյալների գլոբալ բազա*<br><br>*Ազգային ծրագրի վերանայում* |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

| 1<br>ԱԾՌ արդյունքներ | 2<br>Նախագծի մակարդակով իրականացվող գործողություններ, որոնք բերում են արդյունքների/վերջնական արդյունքների | 2<br>Ազգային ծրագրի վերջնական արդյունք/ազդեցության ցուցանիշներ | | 3<br>Ստուգման միջոցներ |
|---|---|---|---|---|
| | | Երկրին բնորոշ ցուցանիշներ և թիրախներ | ԳԷՀ-7 հիմնական և ՓԴԾ գլոբալ ցուցանիշներ | |
| **ԳՓ-7 ՓԴԾ ԱԾՌ Ռազմավարական նախաձեռնություն 6:** *Սոցիալական ներառականության խթանում*<br>Հիմնական նպատակներ/կիզակետ<br>- Նպաստել նպատակային նախաձեռնություններին<br>- Խթանել սոցիալական ներառականությունը բոլոր նախագծերում | | | | |
| <u>ԱԾՌ արդյունք 6:</u><br>*ՓԴԾ հայաստանյան ծրագիրը խթանում և կիրառում է ներառական մոտեցումներ* | | *6.1 ԳՓ-7-ում ֆինանսավորված ՓԴԾ ծրագրերի* **100**% որպես պարտադիր խաչաձևվող պահանջ անդրադարձել են գենդերային հավասարության խնդիրներին<br><br>*6.2 ԱՂԿ-ի Գենդերային հարցերի համակարգողը տրամադրել է խորհրդատվություն գենդերային խնդիրների վերաբերյալ և իրականացրել է յուրաքանչյուր նախագծի գենդերային բաղադրիչի գնահատումը*<br><br>*6.3 ԳՓ-7-ում ֆինանսավորված առնվազն* **1** *ծրագրում ընդգրկվել են երիտասարդներ կամ հաշմանդամություն ունեցող անձինք*<br><br>*6.4 ԱՂԿ-ի երիտասարդության և երեխաների հարցերով համակարգողը խթանել է ծրագրերում երիտասարդության մասնակցությանը և առաջնորդությանը* | *Առնվազն* ***1*** *ՓԴԾ նախագիծ ղեկավարվել է կանանց կողմից և/կամ կիրառում է հստակ մեխանիզմներ կանանց մասնակցության ընդլայնման համար*<br><br>*Առնվազն* ***1*** *ՓԴԾ նախագիծ նպաստում է բնական ռեսուրսների հասանելիության և վերահսկման հետ կապված գենդերային բացերի վերացմանը*<br><br>*Առնվազն* ***1*** *նախագիծ բարելավում է բնական ռեսուրսների կառավարման ասպարեզում կանանց մասնակցությունը և որոշումների կայացումը*<br><br>*Առնվազն* ***2*** *նախագիծ ուղղված է կանանց սոցիալ-տնտեսական օգուտներին և ծառայություններին*<br><br>*Առնվազն* ***1*** *ՓԴԾ նախագիծ ցույց է տալիս երիտասարդության* | *ՓԴԾ ազգային թիմերի կողմից անհատական նախագծերի հաշվետվությունների ներկայացում*<br><br>*Տարեկան Մոնիտորինգի Հաշվետվություն (ՏՄՀ), ՓԴԾ տվյալների գլոբալ բազա*<br><br>*Ազգային ծրագրի վերանայում* |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

| 1<br>ԱԾՌ արդյունքներ | 2<br>Նախագծի մակարդակով իրականացվող գործողություններ, որոնք բերում են արդյունքների/վերջնական արդյունքների | 2<br>Ազգային ծրագրի վերջնական արդյունք/ազդեցության ցուցանիշներ | | 3<br>Ստուգման միջոցներ |
|---|---|---|---|---|
| | | Երկրին բնորոշ ցուցանիշներ և թիրախներ | ԳԷՀ-7 հիմնական և ՓԴԾ գլոբալ ցուցանիշներ | |
| | | | *ներգրավման պատշաճ մոդելներ*<br><br>*Առնվազն 1 ՓԴԾ նախագիծ ցուցադրում է հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավման համապատասխան մոդելներ*<br><br>*Առնվազն 500 ուղիղ շահառուներ, որոնք բաժանված են ըստ սեռի*<br><br>*Առնվազն 1500 անուղղակի շահառուներ, որոնք բաժանված են ըստ սեռի* | |
| **ԳՓ-7 ՓԴԾ ԱԾՌ Ռազմավարական նախաձեռնություն 7:** *Մոնիտորինգ և գնահատում, գիտելիքների կառավարում*<br>Հիմնական նպատակներ/կիզակետ<br>- Ձեռք բերել գիտելիքներ և քաղել դասեր իրականացված նախագծերից և գործողություններից<br>- Բարելավել ՔՀԿ/ՀԿ-ների կարողությունները<br>- Իրականացնել հարավ-հարավ փոխանակումներ՝ խթանելու տեխնոլոգիաների փոխանակումը և լավ գործելակերպերի կրկնօրինակումը<br>- Գործարկել ՄևԳ նոր ռազմավարություն ազգային ծրագրի և նախագծերի մշակման, իրականացման և որոշումների կայացման ընթացքում՝ կիրառելով մասնակցային մեխանիզմներ | | | | |
| <u>ԱԾՌ արդյունք 7:</u><br>*Մոնիտորինգի և գնահատման, և գիտելիքների կառավարման ռազմավարությունը կիրառվում է ՓԴԾ հայաստանյան* | | *7.1 Մոնիտորինգի և գնահատման, և գիտելիքների կառավարման ռազմավարությունը կիրառվում է **բոլոր** ՓԴԾ նախագծերի կողմից որպես ԳՓ-7 պարտադիր պահանջ* | *Մոտավորապես **14** նախագիծ գործարկում է արդյունքների կառավարման մոտեցում ծրագրի մշակման, իրականացման և ընդհանուր որոշումների կայացման ընթացքում՝ կիրառելով մասնակցային մեխանիզմներ* | *ՓԴԾ ազգային թիմերի կողմից անհատական նախագծերի հաշվետվությունների ներկայացում*<br><br>*Տարեկան Մոնիտորինգի* |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

| 1<br>ԱԾՌ արդյունքներ | 2<br>Նախագծի մակարդակով իրականացվող գործողություններ, որոնք բերում են արդյունքների/վերջնական արդյունքների | 2<br>Ազգային ծրագրի վերջնական արդյունք/ազդեցության ցուցանիշներ | | 3<br>Ստուգման միջոցներ |
|---|---|---|---|---|
| | | Երկրին բնորոշ ցուցանիշներ և թիրախներ | ԳԷՀ-7 հիմնական և ՓԴԾ գլոբալ ցուցանիշներ | |
| *ազգային ծրագրի կողմից* | | *7.2 ՓԴԾ թվային գրադարանում վերբեռնվել են ՔՀԿ-ների և ՀԿ-ների կողմից մշակված համայնքային նորարարությունների առնվազն **10** տեղեկատվական նյութեր կամ փաստաթղթեր՝ շահագրգիռ կողմերի և գործընկերների միջև առցանց փոխանակման համար*<br><br>*7.3 Իրականացվել է ծրագրի մշակման առնվազն **1** աշխատաժողով կամ կարողությունների զարգացման այլ գործողություն ՓԴԾ թիմի և / կամ ԱՂԿ անդամների կողմից յուրաքանչյուր մարզում* | *ՓԴԾ տվյալների գլոբալ բազայի հաճախակի թարմացում՝ տվյալների արդյունավետ հավաքագրման, կառավարման և վերլուծության համար՝ նպաստելու ծրագրի կատարողականին և գիտելիքի ձեռքբերմանը (Եռամյակային)*<br><br>*Առնվազն 1 հարավ-հարավ փոխանակում գլոբալ և տարածաշրջանային մակարդակներում՝ գլոբալ բնապահպանական խնդիրներին առնչվող գիտելիքի փոխանակման, տեխնոլոգիայի, գործիքների և մոտեցումների կրկնօրինակման նպատակով* | *Հաշվետվություն (ՏՄՀ), ՓԴԾ տվյալների գլոբալ բազա*<br><br>*Ազգային ծրագրի վերանայում* |

## 9. ԱԶԳԱՅԻՆ ՂԵԿԱՎԱՐ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

| ԱՂԿ անդամներ, ովքեր մասնակցել են ԳՓ-7 ԱԾՌ մշակմանը, վերանայմանը և հաստատմանը | Ստորագրություն |
|---|---|
| Արմեն Մարտիրոսյան | Armen Martirosyan |
| Արմեն Գևորգյան | |
| Ալվինա Ավագյան | |
| Գոհար Գրիգորյան | |
| Մարգարիտ Փիլիպոսյան | |
| Նատալյա Թադևոսյան | |
| Լուսինե Ավետիսյան | |
| Նորայր Հարությունյան | |
| Սիրանուշ Գալստյան | |
| Սիմոն Սարգսյան | |
| Զառա Ալլահվերդյան | |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

## ՀԱՎԵԼՎԱԾ 1: ԾՐԱԳՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՁՆՆՄԱՆ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | |
| **Կազմակերպության անվանում** | |

| | Այո | Ոչ | Մեկնաբանու-թյուններ |
|---|---|---|---|
| **Ծրագրի ընդհանուր որակ** | | | |
| Ծրագրային նպատակների հստակ ձևակերպում ԳՓ-6-ի ռազմավարական նախաձեռնություններին համապատասխան | | | |
| Գործողությունների և արդյունքների իրատեսական պլանավորում | | | |
| Բյուջեի իրատեսական սահմանում ծրագրի նպատակներին և գործողություններին համահունչ | | | |
| Ծրագրի նախագծման հետ կապված ռիսկերի և մարտահրավերների խելամիտ գնահատում և համապատասխան լուծումների նախագծում | | | |
| Արդյո՞ք կանխվել, կառավարվել և մեղմվել են մարդկանց և շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները ՄԱԶԾ սոցիալական ու բնապահպանական ստանդարտների համաձայն | | | |
| **Կառավարման կարողություններ** | | | |
| Ծրագրի արդյունավետ իրականացմանն ուղղված կառավարման և կազմակերպչական գործիքների արդյունավետ օգտագործում | | | |
| Պարտականությունների / առաջադրանքների / գործողությունների հստակ սահմանում | | | |
| ՄԵԳ պլանի, ներառյալ՝ առաջընթացի վերահսկման հստակ ցուցանիշների խելամիտ նախագծում | | | |
| Գիտելիքների և կառավարման պլանի խելամիտ նախագծում գիտելիքների փոխանակման նպատակով | | | |
| Հաղորդակցության պլանի խելամիտ նախագծում տարածման և քաղաքականության քարոզման համար | | | |
| **Կայունություն** | | | |
| Հնարավոր համաֆինանսավորման աղբյուրների բացահայտում | | | |
| Կայունության ձեռքբերում կոոպերատիվ ֆոնդերի, միկրովարկերի տրամադրման և այլնի միջոցով | | | |
| Ծրագրի կարևորության գիտակցում և համայնքի հետ առնչության ճանաչում | | | |
| **Ներգրավվածություն** | | | |
| Կանանց ակտիվ ներգրավում որոշումների կայացման գործընթացում և ընդհանուր գործողություններում | | | |
| Բնիկների ակտիվ ներգրավում որոշումների կայացման գործընթացում և ընդհանուր գործողություններում | | | |
| Երիտասարդների ակտիվ ներգրավում որոշումների կայացման գործընթացում և ընդհանուր գործողություններում | | | |
| **Գենդերային հավասարության բաղադրիչի ինտեգրում** | | | |
| Տղամարդիկ և կանայք ակտիվ մասնակցություն են ունեցել ծրագրի նախագծմանը և այն արձագանքում է նրանց կարիքներին | | | |
| Տղամարդկանց և կանանց վրա ծրագրի ազդեցությունը ենթարկվել է վերլուծության (խնդրում ենք նայել աշխատանքի բաժանմանը, աշխատանքային ծանրաբեռնվածությանը և ռեսուրսների ու ծառայությունների հասանելիությանը) | | | |
| Տղամարդկանց և կանանց համար ակնկալվող արդյունքները բացատրվել են, և ծրագիրը պետք է նպաստի երկուսին էլ | | | |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

| | | | |
|---|---|---|---|
| Ծրագիրը պարունակում է գենդերային տարաբաժանումով տվյալներ ակտիվ մասնակիցների և շահառուների վերաբերյալ | | | |
| Տղամարդիկ և կանայք ունեն հավասարակշիռ ներկայացվածություն ծրագրի կառավարման կառուցվածքում (օրինակ՝ ծրագրի կառավարման թիմը պետք է կազմված է լինի և տղամարդկանցից և կանանցից, և որոշումների կայացման մեջ հավասար մասնակցության ապահովման նպատակով ըստ հնարավորության ապահովվի նրանց հավասար ներկայացվածությունը) | | | |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

## ՀԱՎԵԼՎԱԾ 2: ՓԴԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԿԶՆ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ

| Կայուն զարգացման նպատակներ | Ակնկալվող ներդրում |
|---|---|
| **ԿԶՆ 1: ՈՉ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆԸ**<br>Ամենուրեք վերացնել աղքատությունը՝ իր բոլոր ձևերով ու դրսևորումներով | ✓ Եկամտաբեր հնարավորությունների դիվերսիֆիկացիա<br>✓ Կենսունակ տնտեսական գործելակերպերի կարողությունների զարգացում<br>✓ Նոր աշխատատեղերի ստեղծում |
| **ԿԶՆ 3: ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ**<br>Ապահովել առողջ կյանք և խթանել բարեկեցություն բոլորի համար՝ անկախ տարիքից | ✓ Բնակչության կենսապայմանների բարելավում ծախսերի կրճատման կամ եկամուտների ավելացման միջոցով<br>✓ Կայուն գյուղատնտեսության խթանում պարենային անվտանգության, առողջ գյուղատնտեսական արտադրանքի և առողջություն ապահովման նպատակով<br>✓ Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ մարդկանց և էկոհամակարգերի ճկունության խթանում |
| **ԿԶՆ 4: ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**<br>Ապահովել ներառական ու որակյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորություններ | ✓ ՓԴԾ-ի կողմից պատրաստված կրթական նյութերի էկոլոգիական բաղադրիչի ընդգրկում տարրական դպրոցի կրթական ծրագրում<br>✓ Հասարակական բնապահպանական գիտակցության ձևավորում |
| **ԿԶՆ 5: ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ**<br>Հասնել գենդերային հավասարության և զորացնել բոլոր կանանց ու աղջիկներին | ✓ Տղամարդկանց և կանանց հավասար ներգրավվածության խթանում ՓԴԾ կողմից ֆինանսավորվող ծրագրային գործունեության մեջ |
| **ԿԶՆ 6: ՄԱՔՈՒՐ ՋՈՒՐ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**<br>Ապահովել բոլորի համար ջրի ու սանիտարական պայմանների հասանելիություն | ✓ Ջրային ռեսուրսների կառավարման և ջրամատակարարման ու ջրահեռացման ապակենտրոնացված, պահանջարկի վրա հիմնված, նորարարական, ցածրարժեք համայնքային նախագծերի օժանդակում գյուղական վայրերում<br>✓ Ջրերի հետ կապված էկոհամակարգերի վերականգնում և համայնքների մասնակցության խթանում ջրամատակարար-ման ու ջրահեռացման կառավարման բարելավման ոլորտում |
| **ԿԶՆ 7: ՄԱՏՉԵԼԻ ԵՎ ՄԱՔՈՒՐ ԷՆԵՐԳԻԱ**<br>Ապահովել բոլորի համար մատչելի, հուսալի, կայուն և ժամանակակից էներգիայի հասանելիություն | ✓ Տեղական իրագործելի ցածր ածխածնային տեխնոլոգիաների ցուցադրման, վերարտադրության և ընդլայնման խթանում<br>✓ Գիտելիքների փոխանակման և կարողությունների զարգացման խթանում նորարարական ցածր-ՋԳ տեխնոլոգիաների զարգացման և իրականացման համար |
| **ԿԶՆ 11: ԿԱՅՈՒՆ ՔԱՂԱՔՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**<br>Քաղաքները և մարդկային այլ բնակավայ-րերը դարձնել ներառական, դիմակայուն, անվտանգ և կայուն | ✓ Տեղական համայնքների կարողությունների զարգացում՝ կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության և դիմակայունության բարելավման նպատակով |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

| | |
|---|---|
| **ԿԶՆ 12: ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՊԱՌՈՒՄ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ**<br>Ապահովել սպառման և արտադրության կայուն մոդելներ | ✓ Բնական պաշարների կայուն օգտագործման խթանում՝ ուղղված էկոհամակարգերի վիճակի բարելավմանը<br>✓ Քիմիական նյութերի և թափոնների կառավարման նորարարական և գործնական լուծումների ներդրում |
| **ԿԶՆ 13: ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՆՊԱՍՏ ԿԼԻՄԱՅԻ**<br>Ձեռնարկել անհապաղ գործողություններ՝ պայքարելու կլիմայի փոփոխության և դրա ազդեցությունների դեմ | ✓ ԶԳ արտանետումների կրճատում՝ մաքուր էներգիայի, կայուն տրանսպորտի, էներգաարդյունավետության բարձրացման և հողօգտագործման գործելակերպերի մատչելիության միջոցով<br>✓ Ագրո-էկոլոգիական նորարարությունների խթանում, որոնք նվազեցնում են գյուղատնտեսական արտանետումները և նպաստում կենսազանգվածում և հողում ածխածնի կուտակմանը<br>✓ Տեղական համայնքների կարողությունների ամրապնդում ՝ դիմակայելու կլիմայական փոփոխություններին |
| **ԿԶՆ 15: ԿՅԱՆՔԸ ՑԱՄԱՔՈՒՄ**<br>Պաշտպանել և վերականգնել ցամաքային էկոհամակարգերն ու խթանել դրանց կայուն օգտագործումը, ապահովել անտառների կայուն կառավարումը, պայքարել անապատացման դեմ, դադարեցնել և շրջադարձել հողերի վատթարացումը, կասեցնել կենսաբազմազանության կորուստը | ✓ Կենսաբազմազանության տեսանկյունից անվտանգ գործելակերպերի ներառում կենսամիջոցների ապահովման համայնքային գործընթացում՝ արտադրական լանդշաֆտներում և կառավարման էկոհամակարգերում կենսաբանական ռեսուրսների կայուն օգտագործման նպատակով<br>✓ Համայնքային պահպանության արդյունավետ ձևերի խթանում՝ ուղղված կրիտիկական պահպանվող տարածքների, կենսաբազ-մազանության թեժ կետերի և էկոլոգիական միջանցքների աջակցությանը<br>✓ Տեղական կարողությունների զարգացում՝ շրջակա միջավայրի դեգրադացիային արձագանքելու համար |
| **ԿԶՆ 17: ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ**<br>Կատարելագործել կայուն զարգացման նպատակների իրականացման միջոցներն ու ակտիվացնել գլոբալ գործընկերությունը՝ հանուն կայուն զարգացման | ✓ ՔՀԿ-ների և համայնքային մակարդակի գործընկերների ջանքերի համադաշնեցում՝ ազգային և գլոբալ մակարդակներում ԿԶՆ-երի ձեռքբերմանը օժանդակելու նպատակով<br>✓ ՓԴԾ-ի լավագույն փորձի զարգացման, փոխանցման և տարածման խթանում, որպեսզի քաղաքացիական հասարակության և համայնքային կազմակերպությունների կողմից ստացված գիտելիքները հասցվեն լայն լսարաններին՝ նպատակ ունենալով ազդել գլոբալ բնապահպանական և կառավարման նպատակների վրա |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

# ՀԱՎԵԼՎԱԾ 3: ԼԱՆԴՇԱՖՏԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԷՀ ՓԴԾ ԳՓ-7 ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԸՆՏՐՎԱԾ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

## ՄԻՋԻՆ ԼԵՌՆԱՅԻՆ ԳՈՏՈՒ ՏԱՓԱՍՏԱՆԱՅԻՆ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏՆԵՐ

### 1. Ներածություն

Ի սկզբանե, նպատակային լանդշաֆտային տարածքի ընտրությունն իրականացվել է ԳՓ-6-ում՝ 2016թ.-ին, հաշվի առնելով դրամաշնորհային գործունեության, նիշայի, հնարավորությունների, մարտահրավերների և համագործակցության հնարավորությունների համար մատչելի ֆինանսավորումը, ինչպես նաև հիմք ընդունելով ազգային իշխանությունների և տեղական շահագրգիռ կողմերի հետ հանրային խորհրդակցություններն ու քննարկումները: Այս գործընթացը ներառել է 6 մարզերում կազմակերպված կարողությունների զարգացման և խորհրդատվական հանդիպումներ, «Ռիոյի» կոնվենցիաների (ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա, ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա, ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի մասին» կոնվենցիա, Ստոկհոլմի «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա) ազգային համակարգողների հետ պաշտոնական հանդիպումներ և ՓԴԾ ԱՂԿ հանդիպումը:

Ընդհանուր առմամբ, քննարկվել են թիրախային տարածքի 7 (յոթ) տարբերակներ: Քննարկումների արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել որպես ԳԷՀ ՓԴԾ նպատակային տարածք ընտրել **միջին լեռնային գոտու տափաստանային և անտառային լանդշաֆտները** (1400-2400 մ. բարձրությունների վրա, ընդգրկում է Հայաստանի տարածքի մոտ 60%-ը): Այս գոտին ընտրվել է նաև հաշվի առնելով ավելի շատ գումարային և նպատակային ազդեցություններ ունենալու անհրաժեշտությունը և հիմնվելով այն փաստի վրա, որ այս տարածքը ներառում է կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելի ավելի շատ էկոհամակարգեր, որտեղ կենտրոնացած է կենսազանգվածի արտադրության ամենաբարձր ցուցանիշը:



DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

ԳՓ-7-ի ընթացքում առավել մեծ ուշադրություն դարձնելով տեղական մակարդակում ռազմավարական և արդյունքների վրա հիմնված միջամտությունների ապահովման վրա, ՓԴԾ հայաստանյան ծրագիրը կշարունակի իր գործունեությունը ԳՓ-6-ի համար ընտրված առաջնահերթ թիրախային տարածքում, այն է՝ **միջին լեռնային գոտու տափաստանային և անտառային լանդշաֆտներ** (տես Գծապատկեր 2): Այս մոտեցումը պայմանավորված է մի շարք սոցիալ-տնտեսական և կլիմայական սպառնալիքներով, որոնք դեռ առկա են տվյալ ոլորտում, ազդեցություն ունեն բնական ռեսուրսների վրա և հանգեցնում են էկոհամակարգերի գործողության անկմանը, վայրի բնության և բնակավայրերի դեգրադացիային: Վերջինիս մասին են վկայում նաև Կոնվենցիաների ուղղությամբ ներկայացված վերջին զեկույցները/հաղորդագրությունները (օր.՝ ՀԴՉ- ի կատարման ազգային զեկույցի նախագիծը, ԿԲԿ- ի 6-րդ ազգային զեկույցը, ՄԱԿ ԿՓԾԿ- ի 4-րդ ազգային հաղորդագրությունը, 2030 ԱՄՍՆ-ն և այլն), ինչպես նաև ԱՂԿ-ի, ՄԱԶԾ-ի, դոնոր գործընկերների և այլ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ ՓԴԾ-ի մասնակցային մոնիտորինգի արդյունքները: Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև այն սահմանափակ ժամանակահատվածը, որի ընթացքում ՓԴԾ-ն իր ռեսուրսները կենտրոնացրել է թիրախային գոտում (2016-ի վերջից), ակնհայտ է հետագա ներդրումների անհրաժեշտությունը՝ ուղղված համաշխարհային մակարդակում ընդունված էկոհամակարգերի, դեգրադացված անտառային և ոչ անտառային հողերի վերականգնման աջակցությանը, և մաքուր էներգիայի տեխնոլոգիաների տեղակայման օժանդակությանը սոցիալապես անապահով համայնքներում, որոնք զգալի չափով հիմնվում են բնական ռեսուրսների վրա: Դա համաձայնեցվել է ԱՂԿ-ի և հիմնական շահագրգիռ կողմերի հետ, ներառյալ Կոնվենցիայի համակարգող մարմինների հետ:

## 2. Ելակետային վերլուծություն

### 2.1. Թիրախային տարածքի ընդհանուր նկարագրություն

Ընտրված թիրախային գոտու ընդհանուր տարածքը կազմում է 17702 կմ$^2$ կամ ՀՀ ընդհանուր տարածքի 59.5%-ը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է նպատակային տարածքի ամփոփ վիճակագրությունը:

| | | |
|---|---|---|
| Բնակավայրեր | ընդհանուր | **575** |
| որից | քաղաքներ | 21 |
| | գյուղեր | 554 |
| Բնակչության թիվը | ընդհանուր | 895,600 |
| որից | քաղաքային | 397,800 |
| | գյուղական | 497,800 |
| Խոշոր քաղաքներ և դրանց բնակչության թիվը թիրախային տարածքում | Գյումրի | 122,000 |
| | Աբովյան | 43,500 |
| | Հրազդան | 41,800 |
| | Գավառ | 20,800 |
| | Չարենցավան | 20,400 |

*<u>Արդյունաբերություն</u>*

Թիրախային տարածքում արդյունաբերությունը հատկապես զարգացած է Սյունիքի և Լոռու մարզերում, այնինչ Տավուշի, Վայոց Ձորի և Գեղարքունիքի մարզերում արդյունաբերության ծավալներն աննշան են: Արդյունաբերության հիմնական ճյուղերը ներառում են լեռնահանքային և վերամշակող արդյունաբերությունը: Թիրախային տարածքում հիմնական արդյունաբերական ձեռնարկությունները կենտրոնացած են Լոռու մարզի Ալավերդի և Ախթալա քաղաքներում և

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

Սյունիքի մարզի Քաջարան և Ագարակ քաղաքներում: Չնայած նրան, որ Հայաստանի կառավարությունը հանքարդյունաբերությունը ճանաչել է որպես տնտեսության գերակա ճյուղ, այն հիմնականում զարգանում է առանց ռեսուրսների կայուն օգտագործման երկարաժամկետ ծրագրի, պատշաճ հարկման, շրջակա միջավայրի պահպանության համապատասխան օրենսդրության և բնապահպանական ու սոցիալական ազդեցությունների միասնական գնահատման: Որպես հետևանք, հանքարդյունաբերությունը շարունակում է ունենալ կործանարար ազդեցություն, այդ թվում հանգեցնում է հողային ծածկույթի ֆիզիկական խախտման, պոչամբարների ընդլայնման, հանքարդյունաբերական թափոնների կուտակման, ջրային ռեսուրսների աղտոտվածության, բուսական և կենդանական աշխարհի պոպուլյացիաների և կենսամիջավայրերի մասնատմանն ու ոչնչացմանը, և այլ:

*Գյուղատնտեսություն*

Հայաստանի ընդհանուր բնակչության մոտ 36%-ը ապրում է նոսր բնակեցված և լեռնային գյուղական բնակավայրերում, որտեղ գյուղատնտեսությունը եկամուտի կարևոր աղբյուր է: Թիրախային տարածքի գյուղական բնակավայրերում եկամուտների մեծ մասը բաժին է ընկնում բուսաբուծությանը, անասնաբուծությանը, ինչպես նաև վճարովի գյուղատնտեսական աշխատանքներին: Այդ գյուղական համայնքներում բնակչության մոտ 80%-ը զբաղվում է գյուղատնտեսական գործունեությամբ, որտեղ բուսաբուծության մասնաբաժինը կազմում է 63%, իսկ անասնաբուծությանը՝ 37%:

Հողը համարվում է գյուղատնտեսական գործունեության հիմնական աղբյուր և ակնհայտ է, որ հողի պահպանությունը, հողային ռեսուրսների ռացիոնալ և արդյունավետ օգտագործումը կարևոր են ոչ միայն գյուղատնտեսական, այլև բնապահպանական տեսանկյունից: Հողերի դեգրադացիան անմիջական ազդեցություն ունի գյուղատնտեսության ոլորտի աճի տեմպի, ներառյալ՝ մշակաբույսերի արտադրողականության, խոտհարքների և արոտավայրերի վրա:

Թիրախային տարածքում գյուղատնտեսության բացասական ազդեցությունը դիտարկվում է հողերի դեգրադացիայի, այդ թվում՝ հողի էրոզիայի, արոտավայրերում բուսածածկի ոչնչացման, բազմաթիվ բուսատեսակների ոչնչացման, միջատների և հիվանդությունների տարածման, ինչպես նաև ոչ պատշաճ գյուղատնտեսական գործելակերպերի ու ոռոգման համար արդյունաբերական ու կենցաղային կեղտաջրերի կիրառման արդյունքում հողի, ջրի և մթնոլորտի աղտոտման միջոցով: Ամեն տարի ջրի, քամու և ոչ պատշաճ ոռոգման արդյունքում առաջացած էրոզիան զգալի կերպով վնասում է գյուղատնտեսությանը: Էրոզացված հողերից ստացված բերքը 3-4 անգամ պակաս է էրոզիայի ազդեցությանը չենթարկված հողերի բերքատվությունից:

Թիրախային տարածքում թերզարգացած ենթակառուցվածքների պատճառով հեռագնա արոտներն ու խոտհարքները որպես կանոն քիչ են օգտագործվում: Սա հանգեցնում է բնակավայրերին մոտ գտնվող արոտավայրերի գերօգտագործմանն ու դեգրադացմանը, իսկ հեռագնա արոտները մնում են թերօգտագործված և հաճախ դառնում են լքված: Արդյունքում, մոտ 150000հա տարածք այլևս ենթակա չէ օգտագործման:

*Անտառաբուծություն*

Տնտեսական տեսանկյունից Հայաստանում անտառը առավել կարևոր բնական էկոհամակարգ է հանդիսանում: Այն հիմնականում օգտագործվում է որպես վառելափայտի և շինանյութի աղբյուր, իսկ անտառային կողմնարդյունքը (վայրի պտուղներ, ընկույզ, սունկ, հատապտուղ և այլ պարենային ապրանքներ, դեղաբույսեր) կենցաղային օգտագործման և առևտրի նպատակով հավաքվում է տեղական բնակչության կողմից:

Անտառի օժանդակ օգտագործումը ներառում է ռեկրեացիան, խոտհունձը, անասունների արածեցումը և մեղվաբուծությունը: Թիրախային տարածքում անտառները զբաղեցնում են 2154 կմ$^2$ կամ Հայաստանի անտառային ընդհանուր տարածքի 64.6%-ը:

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

Անտառների մեծ մասը (1281 կմ$^2$ կամ թիրախային տարածքի անտառային ընդհանուր տարածքի 59.5%-ը) տեղաբաշխված է հյուսիս-արևելյան հատվածում, իսկ 22.3%-ը (482 կմ$^2$)՝ հարավ-արևելյան հատվածում, այնինչ ծավալուն կենտրոնական հատվածում, այդ թվում Սևանա լճի ավազանում և Շիրակի սարահարթում, անտառները զբաղեցնում են թիրախային տարածքի անտառային ընդհանուր տարածքի մոտ 18.2% (391 կմ$^2$): Անտառային տարածքները հիմնականում օժտված են մեղմ կլիմայով, խիտ հիդրոլոգիական ցանցով և կտրտված տեղագրությամբ:

Չնայած նրան, որ ըստ պաշտոնական վիճակագրության ապօրինի անտառահատումները Հայաստանում երկու անգամ կրճատվել են, թիրախային տարածքում անտառահատումների արդյունքում առաջացած բացասական բնապահպանական փոփոխությունները երկարաժամկետ բնույթ ունեն՝ հանգեցնելով դեգրադացված անտառների և ոչ անտառային հողերի ընդլայնման, կիրճերի ձևավորման, սողանքային և էրոզիոն-սելավային պրոցեսների առաջացման, աղբյուրների չորացման, փոշու ամպերի և այլ ազդեցությունների: Այդ հետևանքները զգալիորեն խաթարում են ագրո- և անտառային էկոհամակարգային ծառայությունները, որոնք վճռորոշ են կայուն ապրուստի միջոցների ապահովման տեսանկյունից:

Տարբեր սոցիալ-տնտեսական խնդիրների և փայտանյութի մեծ պահանջարկի արդյունքում անտառահատումները դեռևս գերազանցում են անտառների բնական վերականգնման կարողությունը: Սա բացատրվում է թիրախային տարածքում գյուղաբնակ տնային տնտեսությունների ջեռուցման և պատրաստման համար որպես էներգիայի առաջնային աղբյուր վառելափայտի աճող կախվածությամբ: Ամենայն հավանականությամբ, էներգիայի սպառման նպատակով վառելափայտից այսպիսի կախվածությունը կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ գազի և էլեկտրաէներգիայի գները շարունակում են աճել: «Անտառային պետական մոնիտորինգ» ՊՈԱԿ-ի կողմից կատարված ուսումնասիրության համաձայն բնակչության կողմից սպառվող վառելափայտը 20 անգամ գերազանցում է պաշտոնապես վաճառվող վառելափայտի ցուցանիշերը: Արդյունքում, տեղի է ունենում տեսակային կազմի փոփոխություն և բարձրարժեք կաղնին ու հաճարենին փոխարինվում են համեմատաբար ցածրարժեք բոխի տեսակով: Բնականաբար, տեղի է ունենում նաև անտառային պաշարների հյուծում, որի արդյունքում ստորին անտառային գոտին բարձրանում է վերև:

*<u>Էներգետիկա</u>*

Հայաստանը չունի նավթի կամ բնական գազի ապացուցված պաշարներ և ներկայումս մոտ 80%-ը ներկրում է Ռուսաստանից և համեմատաբար փոքր քանակությամբ՝ Իրանից: Չնայած երկրում էներգակիրների բարձր արժեքի, կա վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործման և շենքերում էներգիայի սպառման նվազեցման մեծ ներուժ:

Ներկայումս, հիդրոէներգառեսուրսները հիմնականում օգտագործվում են Հայաստանի վերականգնվող էներգետիկայի ոլորտի, իսկ այլ աղբյուրների ներուժը համարժեքորեն չի օգտագործվում: 2015թ. դրությամբ, թիրախային տարածքում շահագործվում են 63 ՓՀԷԿ-եր, իսկ 6-ը կառուցվում են: Թեև ՓՀԷԿ-երի զարգացումը համարվում է այլընտրանքային էներգիայի կարևոր աղբյուր, դրանց կառուցումը և շահագործումը շատ հաճախ տեղի է ունենում բնապահպանական նորմերի բացահայտ խախտմամբ՝ բացասական ազդեցություն ունենալով ջրային էկոհամակարգերի վրա: Շատ դեպքերում ՓՀԷԿ-երը կառուցվում են խոցելի էկոհամակարգերի տարածքներում (ինչպիսիք են գետերի ուղեկցող անտառները), որը հանգեցնում է անտառի և կենսաբազմազանության դեգրադացիայի, տեղական բնակչության ապրուստի միջոցների և եկամուտների կրճատման, ինչպես նաև բնական աղետների ռիսկերի ավելացման: Ջրառի թույլատվությունների գերազանցման արդյունքում ՀԷԿ-երը խախտում են էկոլոգիական թողքի պահանջները և ստեղծում են զգալի էկոլոգիական, սոցիալական և

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

տնտեսական լարվածություն: Այսպիսով, պետք է նաև դիտարկվեն և խթանվեն վերականգնվող էներգիայի այլընտրանքային աղբյուրներ, այդ թվում՝արևային, կենսազանգվածի և այլն: Նախորդ փուլերի ՓԴԾ-ի փորձի համակողմանի վերանայման արդյունքում արևային[1] ջեռուցման սարքերի և շենքերի էներգախնայողության բարելավման ծրագրերը գնահատվել են որպես ամենակենսունակ շոշափելի տնտեսական և բնապահպանական օգուտներով ծրագրերը:

*Կենսաբազմազանություն, հատուկ պահպանվող տարածքներ*

Թիրախային տարածքը հիմնականում ներկայացված է տափաստանային ու անտառային լանդշաֆտներով: Թիրախային տարածքում տափաստանային գոտին սկսվում է 1500-1600 մ բարձրությունից՝ հյուսիսում հասնելով մինչև 2000մ, իսկ հարավում՝ 2400-2500մ: Ստորին հատվածներում գոտին տիպիկ տափաստանային է, իսկ վերին հատվածներում՝ մարգագետնատափաստանային: Այն առանձնանում է կենսամիջավայրերի և տեսակների բազմազանությամբ, այդ թվում՝ 600 բարձրարժեք բուսատեսակներով, որոնցից 46 էնդեմիկ տեսակներ են: Կենդանական աշխարհը ներկայացված է 96 ողնաշարավոր տեսակներով (4 երկկենցաղների, 32 մողեսների, 19 թռչունների և 41 կաթնասունների տեսակներ) և 992 անողնաշարավորների տեսակներով (81 կակղամորթերի, 126 արախնիդների և 785 միջատների տեսակներ):

Ներկայումս, թիրախային տարածքի տափաստանները կորցնում են մի շարք էկոհամակարգային գործառույթներ, ինչպիսիք են՝ ջրային ռեսուրսների պահպանությունը և գոլորշիացման կարգավորումը, հողի պաշտպանությունը, արոտավայրերի դիգրեսիայի ռիսկի կրճատումը, ջրի և քամու էրոզիայի կանխարգելումը, աղտոտման կանխարգելումը, այդ թվում՝ հողում, բիոտայում և գյուղատնտեսական արտադրանքում, հազվագյուտ տեսակների կենսամիջավայրի պաշտպանությունը, բնական բուսականության վերականգնման համար փոշոտողների քանակության ապահովումը և այլն:

Անտառային բազմազանությունը ներկայացված է բարձրարժեք բույսերի 870 տեսակներով, այդ թվում՝ 23 էնդեմիկ տեսակներով: Անտառային կենդանական աշխարհը ներկայացված է շուրջ 2000 տեսակի միջատներով, 90 տեսակի ողնաշարավորներով, այդ թվում՝6 տեսակի երկկենցաղներով, 25 տեսակի մողեսներով, 42 տեսակ թռչուններով և 17 տեսակի կաթնասուններով: Կենդանատեսակների մոտ 50 տեսակներ գրանցված են Հայաստանի Կարմիր Գրքում: Տեղական բնակչության կողմից անտառները հիմնականում օգտագործում են որպես վառելափայտի աղբյուր, իսկ նոսր անտառներով լանջերը՝ գարնանային և ամառային արոտներ: Ի լրումն, տեղական բնակչության կողմից կենցաղային օգտագործման կամ ներքին շուկաներում վաճառքի նպատակով հավաքվում են դեղաբույսեր և ուտելի բույսեր, այդ թվում՝հատապտուղներ:

Թիրախային գոտում պահպանվող տարածքները զբաղեցնում են մոտ 356065 հա տարածք: Այս տարածքը ներառում է երկու արգելոցներ (35351 հա), 4 ազգային պարկեր (236802 հա) և 19 արգելավայրեր (83912 հա): Պահպանվող տարածքների սահմաններում տափաստանային լանդշաֆտները զբաղեցնում են տարածքի 15%-ը, իսկ անտառային լանդշաֆտները՝ մոտ 28%-ը: Նպատակային գոտու Բնության հատուկ պահպանվող տարածքներն ամփոփված են Հավելված 1-ի աղյուսակում:

*Ջրային ռեսուրսներ*

Միջին հաշվով, Հայաստանն ունի բավարար ջրային ռեսուրսներ: Հաշվի առնելով երկրում առկա

[1] Հայաստանն ունի արեգակնային էներգիայի զգալի ներուժ՝ արևափայլի տարեկան մոտ 2500 ժամ տևողություն, իսկ 1քմ հորիզոնական մակերևույթի վրա արևային էներգիայի հոսքի միջին տարեկան արժեքը կազմում է 1720 կՎտժ:

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863



բոլոր ջրային ռեսուրսները, մեկ շնչի հաշվով ջրի տարեկան մատչելի ծավալը կազմում է 3100 մ$^3$, որը բավականին բարձր է 1700 մ$^3$ ջրային բեռնվածության ցուցանիշից: Սակայն, այդ ջրային ռեսուրսները հավասարաչափ չեն բաշխված տարածության և ժամանակի մեջ, և առկա է գետային հոսքի զգալի սեզոնային և տարեկան փոփոխականություն: Թիրախային տարածքն ընդգրկում է երկրի բոլոր 6 գետավազանային տարածքները. Հյուսիսային, Ախուրյանի, Սևանի, Հրազդանի, Արարատի և Հարավային: Բոլոր այս 6 գետավազանային տարածքները, բացառությամբ Սևանա լճի ավազանից, անդրսահմանային են և անցնում են Թուրքիայի, Իրանի, Վրաստանի կամ Ադրբեջանի տարածքով: Համօգտագործվող ստորերկրյա ջրային ռեսուրսներն էլ ավելի են բարդացնում ջրային ռեսուրսների պատշաճ կառավարումը, որն առանցքային դեր է խաղում Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Այսպիսով, Թուրքիայի կողմից Արաքս գետի վրա 1.3 մլրդ մ$^3$ ծավալով 2 խոշոր ջրամբարների կառուցման հետևանքով մատչելի ջրային ռեսուրսների նվազումը Հայաստանի կառավարության կարևոր խնդիրներից է: Սպառման (ոռոգման և ջրամատակարարման) և ոչ-սպառման (հիդրոէներգետիկա) նպատակով Թուրքիայի կողմից Արաքսի ավազանում գոյություն ունեցող և նախատեսվող հիդրավլիկ ենթակառուցվածքի կառուցումը կհանգեցնի գետի հոսքի ռեժիմի, ինչպես նաև դինամիկայի և մորֆոլոգիայի փոփոխությունների:

Անդրսահմանային գետերի ջրի որակի վատթարացումը ևս մտահոգություն է առաջացնում, օրինակ, գյուղատնտեսություն և անասնաբուծություն արդյունքում ոչ-կետային աղբյուրներից Արաքս և Ախուրյան գետերի աղտոտումը: Հանքարդյունաբերությունը ևս խնդրահարույց է, քանի որ այն վերաբերում է համօգտագործվող ջրատար հորիզոններին, ինչպիսիք են Աղստև-Տավուշ և Փամբակ-Դեբեդ ջրատար հորիզոնները: Այս երկու անդրսահմանային ջրատար հորիզոնների առկա ռեսուրսների օգտագործման շուրջ պոտենցիալ հակամարտություններ են սպասվում, քանի որ առափնյա երկրներում աճում է ջրի պահանջարկը:

Վերջապես, ի լրումն անդրսահմանային գետերի և ստորգետնյա ջրերի, Արաքս գետի հովտում կան Հայաստանի և Թուրքիայի կողմից համատեղ օգտագործվող կարևոր անդրսահմանային էկոհամակարգեր: Ըստ ՄԱԿ ԵՏՀ, Արաքսի հովտում ներառվում են մի շարք բնական և արհեստական խոնավ տարածքներ, որոնք ապահովում են ջրային թռչունների համար բնադրման կարևոր տարածքներ:

*<u>Զբոսաշրջություն</u>*

Հայաստանն ունի բնական և պատմա-մշակութային զբոսաշրջության մեծ ներուժ և կառավարության կողմից զբոսաշրջության ոլորտը համարվում է առաջնահերթ ուղղություններից մեկը: Ռեկրեացիոն և էկո-տուրիզմի զարգացումն առավել նախընտրելի են տնտեսական և բնապահպանական տեսանկյունից, որի համար անհրաժեշտ է ստեղծել համապատասխան օժանդակ կառույցներ: Ռեկրեացիոն և էկո-տուրիզմի հիմնական ազդեցությունը էկոհամակարգի վրա բուսածածկի ոտնատակումը, ինչպես նաև թափոններով հանգստյան տարածքների աղտոտումն է, հատկապես, եթե վերջիններում տեղադրված չեն աղբարկղեր:

Ընտրված թիրախային տարածքը, մասնավորապես Սևանա լիճը և անտառային լանդշաֆտները, շատ գրավիչ են ժամանցի և զբոսաշրջության համար: Թիրախային տարածքում կան նաև բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններ: Ներկայումս, ջանքեր են գործադրվում՝ ուղղված միջազգային չափանիշներին համապատասխան Ծաղկաձորի զբոսաշրջային կենտրոնի ստեղծմանը, Ջերմուկ և Գորիս քաղաքներում զբոսաշրջության զարգացմանը, ինչպես նաև «Տաթև» զբոսաշրջային կենտրոնի հիմնմանը: Սակայն, անվերահսկելի լայնածավալ զբոսաշրջությունը պոտենցիալ սպառնալիքներ է ստեղծում բազմաթիվ բնական տարածքների համար՝ հանգեցնելով այնպիսի ազդեցությունների, ինչպիսիք են՝ հողի էրոզիան, աղտոտումը, դեպի ջրահոսքեր արտահոսքերը, բնական կենսամիջավայրերի կորուստը և վտանգված տեսակների վրա ճնշման ավելացումը և

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

անտառային հրդեհների նկատմամբ բարձր խոցելիությունը: Հատկապես մտահոգիչ են թիրախային տարածքի արժեքավոր և խոցելի տարածքները, ինչպիսիք են՝ ՊՏ-ները, բուֆերային գոտիները, էկոլոգիական միջանցքները և բնական անտառները:

*Քիմիական նյութեր*

Հայաստանում կայուն օրգանական աղտոտիչներով (ԿՕԱ) և այլ վտանգավոր քիմիական նյութերով շրջակա միջավայրի աղտոտման հիմնական աղբյուրն արդյունաբերությունն է, ներառյալ՝ քիմիական ոլորտը, գյուղատնտեսությունը (հնացած ԿՕԱ-ներ, թունաքիմիկատներ և ագրոքիմիկատներ), էներգետիկայի ոլորտը, արդյունաբերական արտադրության և թափոնների վերամշակման, ինչպես նաև հանածո վառելիքի այրման ժամանակ արտադրվող ԿՕԱ-ներ (դիոքսիններ և ֆուրաններ) և թունավոր նյութեր և այլն: Այսօր, էներգետիկայի ոլորտը Հայաստանում արտադրական հիմնական ոլորտներից մեկն է, այնպես, որ էլեկտրական սարքավորումների օգտագործված հանքային յուղերով (պոլիքլորացված բիֆենիլների հնարավոր աղբյուրները) շրջակա միջավայրի աղտոտվածության խնդիրը արդիական է: Կենսացիկլի տարբեր փուլերում քիմիական նյութերի վերահսկումը և կառավարումը կատարվում է տարբեր պետական կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման կառույցների կողմից:

Ներկայումս, քիմիական նյութերի և քիմիական թափոնների (այդ թվում՝ ԿՕԱ-ների) կառավարման ոլորտի օրենսդրական հենքը պետք է կատարելագործվի: Հայաստանում գործում են քիմիական նյութերի, այդ թվում՝ ԿՕԱ-ների օգտագործումը կարգավորող մի քանի օրենքներ և նորմատիվ ակտեր:

Կենցաղային և գյուղատնտեսական քիմիական նյութերի (այդ թվում, քիմիական պարարտանյութերի, արգելված կամ հնացած ԿՕԱ թունաքիմիկատների կույտերի) ոչ պատշաճ օգտագործումը և կառավարումը գյուղական համայնքներում հսկայական խնդիրներ է ստեղծում՝ հանգեցնելով մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտման, կենսաբազմազանության կորուստի, հողերի դեգրադացիայի, սննդի շղթայում մնացորդային նյութերի կուտակման և, ի վերջո, լուրջ առողջական խնդիրների: Համայնքներում կա քիմիական նյութերի պատշաճ կիրառման, դրանց կառավարման և անվտանգության հարցերի վերաբերյալ իրազեկման և տեղեկատվության գիտելիքների և գործելակերպերի որոշակի պակաս: Այդուհանդերձ, անհրաժեշտություն կա խթանել նորարարական համայնքային գործիքները՝խրախուսելու համար վնասակար քիմիական նյութերի անվտանգ կիրառումը և էկոլոգիապես ողջամիտ կայուն այլընտրանքներով դրանց փոխարինումը:

*Թափոններ*

Ներկայումս, Հայաստանում միջազգային չափանիշներին համապատասխան սանիտարական աղբանոցներ չեն գործում, իսկ առկա աղբանոցները ավելի շուտ թաղման վայրեր կամ լցակույտեր են, որտեղ տեղի է ունենում բացօթյա ցածր ջերմաստիճանային այրում: Բացի այդ, չկան արդյունաբերական և վտանգավոր թափոնների հեռացման պոլիգոններ կամ հանգույցներ:

Չնայած Հայաստանի թափոնների կառավարման ոլորտում ձեռնարկված կարևոր քայլերին, որոշ ոլորտներում դիտարկվում է հետագա գործողությունների անհրաժեշտություն, ներառյալ. բնապահպանական տեսանկյունից ողջամիտ և անվտանգ թափոնների կառավարման համակարգի ստեղծումը, այդ թվում՝ համապատասխան իրավական դաշտի և իրավակիրարկման կատարելագործումը, թափոնների առաջացման, վերամշակման և օգտագործման հանգույցներում և հեռացման վայրերում թափոնների գրանցամատյանների ստեղծումը, թափոնների առաջացման կրճատման ապահովումը, թափոնների առավելագույն օգտագործման և երկրորդային օգտագործման ներդրումը, թափոնների մասնագիտացված հեռացման վայրերի և սանիտարական աղբավայրերի ստեղծումը:

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

Պլաստիկ (ՊԷՏ) շշերը և պլաստիկ (ՊԷ) տոպրակները կազմում են ամբողջ կոշտ կենցաղային թափոնների մոտ 30%-ը: Չնայած պլաստիկ թափոնները (չքայքայվող կամ քիչ քայքայվող) շատ վնասակար չեն շրջակա միջավայրի համար, սակայն շատ ավելի խնդրահարույց են որպես հողի և օդի աղտոտման մշտական աղբյուր՝ համայնքային աղբավայրերում և լցակույտերում բացօթյա այրման ռիսկի պատճառով (դիօքսինների և ֆուրանների արտանետումներ, թունավոր գոլորշի): Համայնքային մակարդակում պլաստիկ թափոնների կրճատման նպատակով թափոնների նվազեցման, վերօգտագործման (օրինակ՝ վերօգտագործվող տոպրակների օգտագործում որպես աղբի հեռացման պոլիէթիլենային տոպրակների այլընտրանք), առանձնացման և վերամշակման գործընթացներում պետք է ներկայացվեն նորարարական գործելակերպեր ու խթաններ: Վերջինս կարող է ձեռք բերվել հանրային իրազեկման և կրթական գործունեության, ինչպես նաև նոր մոտեցումների և պլաստիկի օգտագործումից զերծ գործելակերպերի որդեգրման նպատակով համայնքային արշավների խթանման միջոցով:

*Կլիմայի փոփոխություն*

Հաջորդ դարում ակնկալվում են Հայաստանի կլիմայական պայմանների հսկայական փոփոխություններ: Օդի ջերմաստիճանը կբարձրանա, տեղումները, գետի հոսքի և լճերի մակարդակները կնվազեն: Ջերմային ալիքները, երաշտները, սողանքները, սելավները և ջրհեղեղները ավելի տարածված կդառնան: Սպասվող կլիմայական փոփոխության սոցիալական ազդեցությունները կհանգեցնեն ջերմային ալիքներից բխող հիվանդությունների առաջացման ավելացմանը, կդիտարկվի ջրի սակավության և էլեկտրաէներգիայի սակագների աճ, որը պայմանավորված է ընդհանուր էներգիայի արտադրության ոլորտում հիդրոէներգիետիկայի ծավալների կրճատմամբ, գյուղատնտեսական արտադրողականության անկմանը զուգընթաց կդիտարկվի պարենի պակաս կամ պարենային գնաճ և հուժկու փոթորիկների հետ հողի չորացման, ու անտառների ոչնչացման հանգեցնող էվապոտրանսպիրացիայի մակարդակի աճի համընկնման դեպքում կավելանա վտանգավոր և վնասակար սողանքների, սելավների ու ջրհեղեղների դեպքերի մակարդակը: Ինչ վերաբերում է տնտեսական ազդեցություններին, ապա կլիմայի փոփոխությունը կազդի բիզնես եկամուտների, աշխատատեղերի, տնային տնտեսությունների եկամուտների և սպառման վրա: Այսպես, ակնկալվում է, որ մինչև 2100թ. 10-27% տեղումների և 24% գետերի հոսքի կորուստ տեղի կունենա, եթե հարմարվողականության բարձրացմանն ուղղված միջոցառումներ չիրականացվեն: Մինչև 2100թ. գյուղատնտեսական արտադրության կրճատումն, ի թիվս այլ բաների, կներառի 19-22% -ի ենթալպյան և ալպյան արոտավայրերի և 3% ընդհանուր արոտավայրի կորուստ: Ընդհանուր առմամբ, մինչև 2100թ. գյուղատնտեսական արտադրության նվազեցման արդյունքում դիտարկվող կորուստները կարող են գերազանցել Հայաստանի 8% ՀՆԱ-ը: Եթե չձեռնարկվեն լայնամասշտաբ հարմարվողականության միջոցառումներ, հավանական է, որ հայ ընտանիքները, իրենց ապրուստի միջոցները կամ տնտեսությունները վնասներ կկրեն կլիմայի փոփոխության ազդեցությունից: Կլիմայի փոփոխության ազդեցությունների նկատմամբ հատկապես խոցելի կլինի գյուղական վայրերում բնակվող աղքատ բնակչությունը: Այս ազդեցությունները խաթարում են գյուղատնտեսության համար կարևոր էկոհամակարգային ծառայությունները, որոնք շատ կարևոր են տեղական/համայնքային մակարդակում կայուն կենսամիջոցների ապահովման տեսանկյունից: Այս պատճառով պետք է խթանել ագրո-էկոլոգիական այն գործելակերպերը, որոնք ուղղված են գյուղատնտեսական արտանետումների կրճատմանը, գյուղատնտեսական հողատարածքներում ածխածնի կուտակման մակարդակի և կլիմայի փոփոխության նկատմամբ մարդկանց, ֆերմերային տնտեսությունների և էկոհամակարգերի ճկունության բարձրացմանը:

*Սոցիալական ներառականության համատեքստ*

Չնայած Հայաստանը մարդկային զարգացման առումով կայուն զարգացում է ցուցաբերում, կանանց և տղամարդկանց միջև գենդերային անհավասարությունը շարունակում է գոյություն ունենալ, հատկապես գյուղական վայրերում: Տղամարդիկ համարվում են «տնային

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

տնտեսությունների ղեկավարներ», մինչդեռ կանայք ավելի շուտ ֆերմերների փոխարեն դիտվում են որպես «ֆերմերի կին»: Կանանց և տղամարդկանց գործազրկության մակարդակը համանման է՝ գործազուրկ է կանանց աշխատուժի 17.5%-ը, իսկ տղամարդկանց՝ 18%-ը: Միևնույն ժամանակ, կանայք կազմում են գործազուրկների 54%-ը, իսկ պաշտոնապես գրանցված գործազուրկների 72%-ը: Կանայք գերակշռում են ոչ պաշտոնական զբաղվածության, ընտանեկան գյուղացիական տնտեսություններում չվճարվող աշխատանքի, ինչպես նաև տնային և վերարտադրողական գործունեության առումով: Տնային տնտեսությունում աշխատուժի բաշխման, ռեսուրսների հասանելիության, սեփականության և վերահսկողության գենդերային անհավասարությունները նույնպես անմիջական ազդեցություն են ունենում շրջակա միջավայրի քայքայման և ամբողջ տնային տնտեսության առողջության վրա:

Ցածր է կանանց մասնաբաժինը կառավարման պաշտոններում: Ըստ գնահատումների, 5 միջին փոքր ձեռնարկություններում միայն 1-ի սեփականատերն է կին: Արդյունքում, կանանց վաստակած եկամտի մակարդակը կազմում է տղամարդկանց վաստակած եկամտի 67,5%-ը: Գործարարությամբ զբաղվելու մտադրություն ունեցող կանայք ի սկզբանե բախվում են այնպիսի խոչընդոտների, ինչպիսիք են՝ արմատավորված կարծրատիպերը կանանց դերի և տնտեսության, մասնավորապես բիզնեսում նրանց մասնակցության վերաբերյալ, ինչպես նաև նյութական խոչընդոտների:

Հայաստանում երիտասարդությունը բախվում է բազում մարտահրավերների՝ կենսապահովման հայթայթման առումով: Բարձր է երիտասարդության գործազրկության, ոչ ֆորմալ զբաղվածության և կրթության կամ ուսուցման գործընթացներում չմասնակցող անձանց մակարդակը: Ըստ գենդերային նորմերի կարծրատիպերի, աշխատում են ավելի շատ երիտասարդ տղամարդիկ, քան կանայք, ընդ որում տղամարդիկ գերակշռում են արդյունաբերության ոլորտում, իսկ կանայք ավելի մեծ մասնակցություն ունեն ծառայությունների ոլորտում: Ընդհանուր առմամբ, երիտասարդ տղամարդկանց 29%-ը և երիտասարդ կանանց 19.6%-ը աշխատում են ոչ պաշտոնապես, ինչը նշանակում է, որ նրանք չեն կարող օգտվել աշխատանքային իրավունքների պաշտպանությունից և այլ հարակից օգուտներից: Միևնույն ժամանակ, կա զգալի անհամապատասխանություն գործատուների շրջանում առկա պահանջարկի և այն հմտությունների միջև, որոնք երիտասարդության մեծ մասը ստանում է ուսումնական ծրագրերի ավարտին: Մայրաքաղաքից և այլ խոշոր քաղաքներից դուրս երիտասարդ տղամարդիկ ձգտում են ունենալ սեփական բիզնես՝ համարելով, որ դա առավել ինքնավար, եկամտաբեր և հեղինակավոր է, քան վճարովի աշխատանքը, այսինքն՝ ուրիշի համար աշխատելը:

Որպես խումբ, հաշմանդամություն ունեցող անձինք (ՀՈՒԱ), Հայաստանում հավանաբար, գտնվում են առավել անբարենպաստ պայմաններում: Հայաստանի բնակչության մոտավորապես 6%-ը գրանցված է որպես հաշմանդամ և ստանում է հաշմանդամության կենսաթոշակ և բժշկական ծառայությունների որոշ սահմանափակ փաթեթ: Հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում գործազրկության մակարդակը բարձր է, համաձայն պաշտոնական վիճակագրության ՝ ավելի քան 90%: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Հայաստանը ջանքեր է գործադրում `լուծելու ՀՈՒԱ առջև ծառացած բազմաթիվ խնդիրները, բարելավել նրանց սոցիալ-տնտեսական իրավիճակը և հեշտացնել լայն հասարակության մեջ նրանց ինտեգրումը: Խոցելի խմբերի, ներառյալ ՀՈՒԱ համար զբաղվածության հասանելիությունը նրանց բազմակի խնդիրների լուծման ամենաարդյունավետ ուղիների մեկն է:

### 2.2. Թիրախային գոտում շրջակա միջավայրին և կայուն զարգացմանը սպառնացող գլոբալ մարտահրավերներ

Լեռնային էկոհամակարգերում գլոբալ բնապահպանական մարտահրավերները ներառում են բնական սեյսմիկ ռիսկերը, հրդեհները, կլիմայի փոփոխությունը, բուսականության ծածկույթի փոփոխություններ, գյուղատնտեսական հողերի բնական լանդշաֆտների տրանսֆորմացիան,

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

ենթակառուցվածքների զարգացումը և զինված հակամարտությունները: Այս ճնշումները, կախված նման լանդշաֆտների կողմից տրամադրվող էկոհամակարգային ծառայություններից, հանգեցնում են լեռնային շրջակա միջավայրի դեգրադացիային և ազդում են բնակչության բարեկեցության վրա:
Բոլոր լեռնային շրջանները բնութագրվում են բնական աղետների բարձր ռիսկայնությամբ և, մասնավորապես, ոչ պատշաճ հողօգտագործման մեթոդների և հնացած տեխնոլոգիաների կիրառման դեպքում ուժեղ ազդեցություններով: Հետևաբար, էկոհամակարգերի դեգրադացիայի և աղքատության հետագա սրման կանխման նպատակով անհրաժեշտ է ապահովել լեռնային շրջանների կայուն կառավարումը:

Ստորև բերված աղյուսակում ամփոփված են հիմնական սպառնալիքները, պատճառները, ինչպես նաև նման սպառնալիքների բնապահպանական և սոցիալ-տնտեսական հետևանքները:

| Սպառնա-լիքներ | Պատճառներ | Բնապահպանական հետևանքներ | Սոցիալ-տնտեսական հետևանքներ |
|---|---|---|---|
| Հողերի դեգրադացիա | Գյուղատնտեսության մեջ (մշակաբույսերի արտադրության, անասնապահության) ոչ անպատշաճ մեթոդ-ների և տեխնոլոգիաների կիրառում | Հողի էրոզիա և երկրորդային աղակալում, վերարտադրողականության կորուստ, ագրո-էկոհամակարգի դեգրադացիա, կենսաբազմազանության մասնատում և կորուստ բնական էկոհամակարգերում, հատկապես տափաստաններում Արոտներում բուսածածակի կրճատում, հողի էրոզիայի առաջացում, անապատացում և կենսացենոզների տեսակային կազմի փոփոխություններ | Հողի հումուսային շերտի կորստի պատճառով մշակաբույսերի արտադրողականության կրճատում, անասնապահության արտադրողականության կրճատում, ֆերմերների եկամուտի նվազում և աղքատության մակարդակի բարձրացում, Պարարտանյութերի գերօգտագործման պատճառով առողջական խնդիրների առաջացում՝ վերականգնելու հողի վերարտադրման կարողությունը |
| | Հանքերի բաց շահագործում | Գյուղատնտեսական հողերի օտարում, հողածածկի և բուսածածկի խաթարում, բնական լանդշաֆտների խաթարում, հողի, օդային և ջրային ավազանների աղտոտում, որոշ բուսատեսակների և կենդանիների կենսամիջավայրերի անհետացում | Բնական լանդշաֆտների կրճատում, առանձին հողակտորների չափի/տարածքի կրճատում, գյուղատնտեսական արտադրողականության և գյուղացիական |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

| Սպառնա-լիքներ | Պատճառներ | Բնապահպանական հետևանքներ | Սոցիալ-տնտեսական հետևանքներ |
|---|---|---|---|
| | | | տնտեսություններ ի եկամուտների կրճատում |
| | Անտառհատումներ | Անտառային հողերի էրոզիա/դեգրադացիա և անապատացում, աղբյուրների համալրման կարողության նվազում, բնական աղետների ակտիվացում (սելավներ, սողանքներ) | Գյուղատնտեսական արտադրանքի և անտառային կողմնակի արտադրանքի կրճատում, բնական աղետների ռիսկի աճ, բնակչության եկամուտների կրճատում, աղքատության խորացում |
| Անտառային էկոհամակարգերի դեգրադացիա | Անտառների անկայուն օգտագործում.<br>• Գյուղատնտեսության նպատակով անտառային հողերի օգտագործում<br>• Ապօրինի անտառհատումներ<br>• Կենսառեսուրսների, մասնավորապես վառելափայտի գերօգտագործում<br>• Անտառկառավարման պլանների սխալ օգտագործում<br>• Անտառօգտագործման անարդյունավետ վերահսկողություն<br>• Չկարգավորվող ռեկրեացիա<br>• Անտառային էկոհամակարգի դերի թերագնահատում | Անտառային էկոհամակարգային ծառայությունների քանակական և որակական փոփոխություններ, անտառների տեսակային կազմի փոփոխություն, մարդածին սուկցեսիա և դեգրադացիա, անտառային հողերի էրոզիա և անապատացում, սողանքային և սելավային երևույթների ավելացում, անտառներում հիդրոլոգիական ռեժիմի խաթարում և ջրի պակասի խորացում, նստվածքային հոսքեր հոսանքն ի վար գետերի և ջրամբարների էֆտրոֆացում, կենդանական աշխարհի կենսամիջավայրի անհետացում, փոշոտող կենդանատեսակների կրճատում | Կլիմայի փոփոխության և ջրի դեֆիցիտի պատճառով առողջական խնդիրների վատթարացում, Գյուղատնտեսական արտադրանքի և անտառային կողմնակի արտադրանքի կրճատում, բնակչության եկամուտների կրճատում, աղքատության խորացում |
| Շրջակա միջավայրի աղտոտում | Արդյունաբերական ազդեցություն | Վնասակար նյութերի կուտակում հողում, օդային ավազանի աղտոտում փոշով և թունավոր նյութերով, գետերի և ստորգետնյա ջրերի աղտոտում, արդյունաբերական թափոնների կուտակում, պոչանքների ստեղծում և լանդշաֆտների ոչնչացում, տեսակների աճի, զարգացման և վերականգնման նախապայմանների վատթարա-ցում, անտառում և այլ էկոհամակարգերում արժեքավոր, անհետացող և հազվագյուտ | Լանդշաֆտային էկոհամակարգային ծառայությունների և ագրոկենսաբազմ ազանության որակի վատթարացման պատճառով բնակչության շրջանում առողջական խնդիրների |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

| Սպառնա-լիքներ | Պատճառներ | Բնապահպանական հետևանքներ | Սոցիալ-տնտեսական հետևանքներ |
|---|---|---|---|
| | | տեսակների ոչնչացում, Ագրոցենոզի արտադրողակա-նության նվազում, բերքի որակի վատթարացում | վատթարացում և եկամուտների կրճատում |
| | Գյուղատնտեսական ազդեցություն | Քիմիական պարարտանյութերի, թունաքիմիկատների և այլ ագրոքիմիկատների ոչ պատշաճ օգտագործման արդյունքում հողի և ջրի աղտոտում, հողային կենսաբազմազանության ոչնչացում (անողնաշարավորներ, մանրէներ), բուսածածկի տեսակային կազմի փոփոխություն, տափաստանային էկոհամակարգերում արժեքավոր և հազվագյուտ բուսատեսակների/ պոպուլյացիաների օտարում | Գյուղատնտեսակա ն արտադրանքի, խմելու և ոռոգման ջրի որակի վատթարացման արդյունքում առողջական խնդիրների խորացում |
| | Տրանսպորտ | Հողերի, օդային և ջրային ավազանների աղտոտում, ագրոցենոզներում վնասակար նյութերի կուտակում, էկոհամակարգի դեգրադացիա, տեսակների և պոպուլյացիաների կրճատում | Լանդշաֆտային էկոհամակարգայի ն ծառայությունների խաթարման և գյուղատնտեսակա ն արտադրանքի որակի վատթարացման արդյունքում առողջական խնդիրների խորացում |
| Կլիմայի փոփոխության հետևանքներ | Շրջակա միջավայրի և բնության վրա մարդածին ազդեցության աճ | Մակերևութային և ստորերկրյա ջրային պաշարների կրճատում, խոնավ էկոհամակարգերի առավել ինտենսիվ չորացում, անապատացման գործընթացի տարածում նոր տարածքներում, բնական աղետների հաճախականության աճ, լեռնային էկոհամակարգերի կայունության նվազեցում, կենդանական և բուսական աշխարհի ընդլայն-ման սահմանների ուղղահայաց գոտիականություն, կենսամիջավայրերի կազմի փոփոխություններ, էնդեմիկ տեսակների վերացման բարձր ռիսկ, անտառային հրդեհների դեպքերի ավելացում | Կտրուկ բնապահպանակա ն փոփոխություններ, որոնց արդյունքում խախտվում է հիդրոլոգիական ռեժիմը՝ ազդելով գյուղատնտեսությ ան և անտառային ոլորտների վրա, իրական սպառնալիքներ բնակչության առողջությանը, պարենային և ջրի անվտանգություն, կենսամիջոցների և էկոմիգրացիայի կրճատում |

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

| Սպառնա-լիքներ | Պատճառներ | Բնապահպանական հետևանքներ | Սոցիալ-տնտեսական հետևանքներ |
|---|---|---|---|
| Ջրի պակաս և ջրի որակի վատթարացում | • Մակերևույթային և ստորերկրյա ջրային ռեսուրսների ոչ ռացիոնալ և անվերահսկելի օգտագործում<br>• Կլիմայի գլոբալ փոփոխություն<br>• Աղտոտում կետային և ոչ-կետային աղբյուրներից | Մակերևութային և ստորերկրյա ջրային պաշարների կրճատում, խոնավ էկոհամակարգերի առավել ինտենսիվ չորացում, անապատացման գործընթացի տարածում նոր տարածքներում, էկոհամակարգերին հասցվող էական վնաս | Գյուղաբնակ աղքատների համար գյուղատնտեսական արտադրողականության կրճատում և պարենային անվտանգության կորուստ<br>Էկոհամակարգերի վնասում և մշակութային ժառանգության կորուստ (օր.՝ Սևանա լճի),<br>Խմելու ջրի անբավար որակի/քանակի պատճառով առողջական լուրջ ազդեցություններ,<br>Ջրից առաջացող հիվանդությունների՝ մալարիայի և խոլերայի մակարդակի բարձրացում |

### 3. ՓԴԾ Ռազմավարական նախաձեռնությունների մշակումը 7-րդ գործառնական փուլի համար ըստ ընտրված թիրախային տարածքի

ՓԴԾ հայաստանյան ծրագրի կողմից ընտրվել են ՓԴԾ գլոբալ Ռազմավարական նախաձեռնություններից հետևյալ ծրագրային ուղղությունները (տես՝ ԱԾՌ Աղյուսակ 2), որոնք պետք է կիրառվեն ԳՓ-7 թիրախային տարածքում:

(ա) Համայնքային մակարդակով վտանգված էկոհամակարգերի և տեսակների պահպանություն,
(բ) Կայուն գյուղատնտեսություն և ձկնարդյունաբերություն, պարենային անվտանգություն,
(գ) Ցածր ածխածնային էներգիայի մատչելիության ուղեկցող օգուտներ,
(դ) Քիմիական նյութերի և թափոնների կառավարման կոալիցիաներ՝ տեղականից դեպի գլոբալ

Անհրաժեշտ է ընդգծել, որ վերը նշված ռազմավարական նախաձեռնությունները, որոնք առաջարկվում են ԳՓ-7 լանդշաֆտային ծրագրերի ուղղությամբ, ընդհանուր առմամբ համանման են (գտնվում են նույն հայեցակարգային շրջանակում) նախորդ փուլում ներդրված նախաձեռնություններին՝ ձևակերպումների որոշակի սակավաթիվ վերանայումներով[2]:

[2] *Համայնքային լանդշաֆտների պահպանություն* և *Կլիմայական ռիսկերի տեսանկյունից խելամիտ նորարարական ագրո-էկոլոգիա* ռազմավարական նախաձեռնությունները վերաձևակերպվել են համապատասխանաբար որպես *Համայնքային լանդշաֆտների պահպանություն* և *Կլիմայական ռիսկերի տեսանկյունից խելամիտ նորարարական ագրո-էկոլոգիա:*

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

### 3.1. Համայնքային մակարդակում վտանգված էկոհամակարգերի և տեսակների պահպանություն

Թիրախային տարածքն աչքի է ընկնում գլոբալ, տարածաշրջանային և ազգային նշանակության արժեքավոր կենսաբանական բազմազանությամբ, ինչպես նաև բնակչության բարեկեցության համար էական ծառայություններ տրամադրող էկոհամակարգերի առկայությամբ: Շատ կարևոր է խթանել պահպանության միջոցառումներն ու կայուն օգտագործման գործելակերպերը, որոնք ապահովում են էկոհամակարգի ամբողջականությունը և խթանում են էկոհամակարգային ծառայությունների մատուցմանը: Այդ պատճառով, նախատեսված գործողությունները պետք է հանգեցնեն էկոհամակարգերի ավելի լավ գործունեությանը, կարգավորեն օդի որակը, կլիման, ջրի շրջապտույտը, էրոզիան և բնական աղետները, փոշոտումը և այլն, ինչպես նաև տեղական բնակչությանն ապահովեն սնունդով, վառելափայտով և տրամադրեն այլ նպաստներ: ՓԴԾ գործողություններում տեղական բնակաչության ուղղակի ներգրավման միջոցով կբարձրացվի իրազեկման և էկոհամակարգային ծառայություններից ստացվող օգուտների արժևորման մակարդակը, կենսաբազմազանության տեսանկյունից անվտանգ եկամտաբեր գործողությունների վերաբերյալ ձեռք կբերվեն գիտելիքներ և գործնական փորձ: Ենթադրվում է, որ համայնքի մասնակցությունը կբարձրացնի ծրագրի արդյունավետությունը և արդյունքների կայունությունը:
Թիրախային տարածքում առաջարկվում *է Համայնքային մակարդակով վտանգված էկոհամակարգերի և տեսակների պահպանությանն ուղղված ծրագրերի* հետևյալ տիպաբանությունը՝

- Կենսառեսուրսների կայուն օգտագործման և էկոհամակարգերի կառավարման նպատակով համայնքային կենսամիջոցների ապահովման գործընթացում բնապահպանական տեսանկյունից անվտանգ գործելակերպերի ներառում
- Համայնքային ուղղվածության ադյունավետ պահպանության ձևերի խթանում կրիտիկական պահպանվող տարածքներում, կենսաբազմազանության թեժ կետերում և էկոլոգիական միջանցքներում

Պետք է նշել, որ վերը նշված տիպաբանական խմբերին պատկանող ծրագրերի իրականացումը ԳՓ-7-ում կարող է հատվել ՓԴԾ այլ ռազմավարական նախաձեռնությունների հետ, որը թիրախային տարածքում կապահովի ՓԴԾ կողմից ֆիանանսավորվող նախաձեռնությունների միջև համադաշնեցումն ու կապակցվածությունը:

ԳՓ-7-ում, ազգային ծրագրի գործողությունները կշարունակեն նպաստել ՓԴԾ գլոբալ ծրագրային բաղադրիչ 1-ի հիմնական նպատակների իրագործմանը՝ օժանդակելով համայնքային մակարդակով պահպանության և կայուն օգտագործման գործելակերպերի իրականացմանը՝ լանդշաֆտային մոտեցումների միջոցով: Ակնկալվող ԱԾՌ արդյունքները այս ռազմավարական նախաձեռնության ներքո հետևյալն են՝ *i)* կենսաբազմազանության համար անվտանգ համայնքային գործելակերպերի և մոտեցումների բարելավում, մասնավորապես՝ գյուղատնտեսության, ձկնարդյունաբերության, անտառային տնտեսության, զբոսաշրջության, ենթակառուցվածքների և այլ ուղղություններով, և *ii)* վտանգված տեսակների պահպանության ուղղությամբ համայնքային գործողությունների ուժեղացում (տես՝ Աղյուսակ 5, ԱՌԾ Վերջնական արդյունք 1):

### 3.2. Կայուն գյուղատնտեսություն և ձկնարդյունաբերություն, պարենային անվտանգություն

Թիրախային տարածքում ագրո-էկոլոգիական նորարարությունների միջոցով փորձ կկատարվի լավագույնս օգտագործել կենսաբազմազանության և այլ էկոլոգիական ապրանքներն ու ծառայությունները՝ միաժամանակ նպաստելով գյուղական տարածքների հավասար զարգացմանը և ընդլայնելով պարենային արտադրական համակարգերի ճկունությունը: Այս

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

գործընթացներում առանցքային դեր են խաղալու ֆերմերները, սպառողները և ագրո-էկոլոգիական լուծումների և պարենային կայուն համակարգերի վրա աշխատող այլ դերակատարները: Թիրախային տարածքում կլիմայական ռիսկերի տեսանկյունից խելամիտ նորարական ագրո-էկոլոգիայի կիրառումը կօգնի առաջնորդել գյուղատնտեսական համակարգերի փոխակերպման և վերաուղղորդման գործողությունները՝ փոփոխվող կլիմայի պայմաններում արդյունավետորեն և կայուն կերպով զարգացմանն ու պարենային անվտանգությանը օժանդակելու նպատակով:
Թիրախային տարածքում պարենային անվտանգության ու զարգացման նպատակների համատեքստում դիտարկվելու են 3 հիմնական նպատակներ. Ֆերմերային և ոչ-ֆերմերային գյուղատնտեսական արտադրողականության բարձրացման և ագրոպարենային արժեշղթաների և շուկայական կապերի ուժեղացման միջոցով կայուն կերպով պարենային անվտանգության և եկամուտների բարելավում, կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայունության և հարմարվողականության կառուցում և սպասվող միտումների համեմատ ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման հնարավորությունների զարգացում: Այս պատճառով, թիրախային տարածքում առաջարկվում է *Կայուն գյուղատնտեսություն և ձկնաբուծություն, պարենային անվտանգության* ծրագրերի հետևյալ տիպաբանությունը՝

- Փորձարկել և խթանել համայնքային մակարդակում կլիմայի փոփոխության հանդեպ դիմակայուն գյուղատնտեսության, ձկնարդյունաբերության և պարենային արտադրության գործելակերպերը՝ նպատակ ունենալով բարելավելու արտադրողականությունը, կրճատելու գյուղատնտեսական արտանետումները, մեծացնելու գյուղատնտեսական հողատարածքներում ածխածնի կլանման մակարդակը և բարձրացնելու մարդկանց, տնտեսությունների և էկոհամակարգերի դիմակայունությունը կլիմայի փոփոխության նկատմամբ

ԳՓ-7-ում թիրախային տարածքում իրականացված ծրագրերը նմանատիպ ագրոէկոլոգիական նախաձեռնությունների և գիտելիքների փոխանակման միջոցով նպաստելու են ՓԴԾ գլոբալ ծրագրային Բաղադրիչ 2-ի հիմնական նպատակների իրագործմանը: Այս ռազմավարական նախաձեռնության շրջանակներում իրագործման ենթակա ԱԾՌ արդյունքները ներառում են՝ *i)* սննդի ընդհանուր արտադրության և արժեշղթայի արդյունավետության և նպատակայնության մեծացում, այդ թվում՝ խոցելի էկոհամակարգերում, ii) տեղի բնակչության կենսապայմանների բարելավում՝ կայուն կենսապահովման հնարավորությունների դիվերսիֆիկացման միջոցով, և iii) անտառահատումների նվազեցում և դեգրադացված հողերի վերականգման ծավալների ընդլայնում՝ Կլիմայական ռիսկերի տեսանկյունից խելամիտ գյուղատնտեսության միջոցով (տես՝ Աղյուսակ 5, ԱՌԾ Վերջնական արդյունք 2):

### 3.3. Ցածր ածխածնային էներգիայի մատչելիության ուղեկցող օգուտներ

Հայաստանը ստորագրել է Փարիզի պայմանագիրը 2016թ. սեպտեմբերի 20-ին, որը վավերացվել է Ազգային ժողովի կողմից 08.02.2017թ:. Որպես ՄԱԿ ԿՓՇԿ-ի I Հավելված I-ում չներառված երկիր և Կիոտոյի Արձանագրության Կողմ, Հայաստանը մշակել է և Կառավարության 10.09.2015թ. N41 արձանագրային որոշմամբ հաստատել է իր Նախատեսված Ազգային Մակարդակով Սահմանված Ներդրումները (ՆԱՄՍՆ): Կառավարության 08.12.2016 թ.-ի թիվ 49 որոշմամբ հաստատվել է ՄԱԿ ԿՓՇԿ-ի ներքո սահմանված դրույթների իրականացման գործողությունների ծրագիրը, որն, ի լրումն այլ թիրախների, նախատեսում է փոփոխություններ կատարել ՆԱՄՍՆ և Կառավարության հաստատմանը ներկայացնել Ազգային Մակարդակով Սահմանված Ներդրումների (ԱՄՍՆ) փաստաթուղթը: Որպես Փարիզյան համաձայնագրի Կողմ՝ Հայաստանը պարտավորվում է մինչև հաջորդ տարեվերջ ապահովել ԱՄՍՆ-ի հաջորդ փուլի իրագործումը:
Որպես ՄԱԿ-ի ԿՓՇԿ Հավելված 1-ում չներառված երկիր, Հայաստանը չունի ՋԳ արտանետումների կրճատման քանակական պարտավորություններ: Սակայն, Կոնվենցիայի

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

նպատակին աջակցելու և, հաշվի առնելով, որ ՋԳ արտանետումների դանդաղման միտումները համահունչ են երկրի տնտեսական, էներգետիկ և բնապահպանական նպատակներին, Հայաստանը իրականացնում է և իր զարգացման հեռանկարներում նախատեսում է կլիմայի փոփոխության մեղմման միջոցառումներ: Հայաստանն ընդունել է մի շարք օրենքներ և կանոնակարգեր, ինչպես նաև մշակվել և ներդրվել են կայուն և ցածր ածխածնային զարգացման սկզբունքների հիման վրա ազգային և ոլորտային ծրագրեր: Չնայած նրան, որ այս փաստաթղթերից ոչ մեկը բացահայտ չի վերաբերում կլիմայի փոփոխության մեղմման միջոցառումներին, այդ օրենքների և ծրագրերի կիրարկումը և իրականացումը նպաստում են ՋԳ արտանետումների կրճատմանը, ինչպես նաև ազգային համապատասխան մեղմացնող գործողությունների մշակման ուղու կերտմանը: Վերականգնվող էներգետիկայի ներուժի զարգացման խոչընդոտները ներառում են անբավարար ֆինանսավորման մեխանիզմները, տեխնոլոգիաների բացակայությունը և ցածր ածխածնային էներգիայի առավելությունների վերաբերյալ հասարակության թյուրըմբռնումը: ԳՓ-7-ի թիրախային գոտում ապակենտրոնացված, ցածր ածխածնային տեխնոլոգիաների զարգացման խթանման միջոցով ՓԴԾ ազգային ծրագիրը կօգնի գյուղական բնակավայրերում աղքատության նվազեցմանը, որտեղ էներգակիրների բարձր գները ուղղակիորեն ազդում են խոցելի խմբերի վրա և խթանում են ավելի մեծ էներգետիկ անվտանգությունը: Թիրախային տարածքում առաջարկվում է *Ցածր ածխածնային էներգիայի մատչելիության ուղեկցող օգուտների* ծրագրերի հետևյալ տիպաբանությունը՝

- Տեղական համայնքների կարողությունների զարգացում տեղական կարիքներին համապատասխանեցված ցածր ածխածնային կենսունակ և համապատասխան տեխնոլոգիաների և մոտեցումների կիրառման ուղղությամբ:

ԳՓ-7-ի շրջանակներում իրականացված միկրո մակարդակի համայնքային ծրագրերը պետք է նպաստեն ՓԴԾ գլոբալ ծրագրային Բաղադրիչ 3-ի հիմնական նպատակների իրագործմանը, աջակցելով ցածր արժեքով «ներքևից վերև» եկող կանաչ էներգիայի լուծումների գործադրմանը՝ այդ մոտեցումները ներդաշնակեցնելով և ինտեգրելով ավելի մեծ շրջանակներում, ինչպես, օրինակ, «Կայուն էներգետիկա բոլորի համար[3]» նախաձեռնությունը: Սույն Ռազմավարական Նախաձեռնության ներքո ակնկալվող ԱԾՌ արդյունքը ներառում է i) Փարիզի համաձայնագրի ներքո ԱՄՍՆ-ների արագ իրականացումը, ii) սոցիալ-տնտեսական օգուտներ և կենսապահովման բարելավում ապահովող վերականգնվող և էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ցուցադրում, տարածում և առևտրայնացում՝ հետագա խթանման նպատակով (տես՝ Աղյուսակ 5, ԱՌԾ Վերջնական արդյունք 3):

### 3.4. Քիմիական նյութերի և թափոնների կառավարման կոալիցիաներ՝ տեղականից դեպի գլոբալ

Հայաստանում համայնքային մակարդակի շահագրգիռ կողմերը հաճախ անտեղյակ են ԿՕԱ-ների պոտենցիալ բացասական բնապահպանական և առողջապահական հետևանքների ամբողջական չափի մասին, և չունեն վնասակար քիմիական նյութերի և թափոնների անվտանգ կառավարման և հեռացման տեխնիկական կարողություններ: Նույնը կարելի է ասել նաև ՓԴԾ թիրախային լանդշաֆտային գոտու բնակավայրերի մասին: ՓԴԾ ուշադրության կենտրոնում լինելու է ԿՕԱ-ների մասին Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման նպատակով կարողությունների զարգացումը, ներառյալ՝ այլ վնասակար քիմիական նյութերի և թափոնների

[3] «Կայուն էներգետիկա բոլորի համար» նախաձեռնությունը միավորում է ողջ աշխարհը՝ մինչև 2030թ. կայուն էներգետիկայի հետևյալ երեք նպատակներին հասնելու ուղղությամբ՝ (i) ապահովել ժամանակակից էներգետիկ ծառայությունների համընդհանուր հասանելիությունը, (ii) կրկնապատկել էներգաարդյունավետության բնագավառում կատարվող բարեփոխումների ընթացքը, (iii) կրկնապատկել վերականգնվող էներգիայի մասնաբաժինը գլոբալ էներգետիկ արտադրության շրջանակներում:

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

էկոլոգիապես առողջ կառավարման խթանումը: Ինչպես նախորդ փուլերում, այնպես էլ ԳՓ-7-ում Ազգային ծրագիրը կշարունակի աջակցել ԿՕԱ-ների և այլ վնասակար քիմիական նյութերին առնչվող հիմնախնդիրների լուծմանը՝ ուղղված համայնքային մոտեցումների ցուցադրմանը, կիրառմանն ու փորձարկմանը:
Հաշվի առնելով շատ երկրներում քիմիական նյութերի ու թափոնների կառավարման հարցերի ընդհանուր բնույթը՝ ՓԴԾ-ը կխթանի գիտելիքների փոխանակումը և տեղական ու գլոբալ գործընկերության և նախաձեռնությունների (օրինակ ԿՎՄՑ, ԿՎՄԾ և այլն) միջև համագործակցությունը և իրազեկության բարձրացումը, ինչպես նաև կրթական արշավների և գիտելիքների գլոբալ ցանցերի միջոցով ազգային շահագրգիռ կողմերի ներգրավումը:
Հաշվի առնելով վերը նշված փաստերը և առաջնորդվելով Ստոկհոլմի կոնվենցիայի սկզբունքներով, թիրախային տարածքում առաջարկվում է *Քիմիական նյութերի և թափոնների կառավարման կոալիցիաներ՝ տեղականից դեպի գլոբալ* աջակցման ծրագրերի հետևյալ տիպաբանությունը՝

- Համայնքային նորարարական, մատչելի և գործնականում կիրառելի գործիքների և մոտեցումների խթանում՝ վնասակար քիմիական նյութերի ու թափոնների անվտանգ կառավարման համար

ԳՓ-7-ի շրջանակներում իրականացված ծրագրերը պետք է նպաստեն ՓԴԾ գլոբալ ծրագրային բաղադրիչ 4-ի հիմնական նպատակների իրագործմանը՝ նորարարական համայնքային գործիքների ցուցադրման, տեղակայման կամ փոխանցման միջոցով, վնասակար քիմիական նյութերի ու թափոնների կառավարման բնագավառում նոր ձևավորվող կամ գոյություն ունեցող կոալիցիաների ողջամիտ աջակցությամբ: Այս Ռազմավարական նախաձեռնության ներքո ակնկալվող ԱԾՌ արդյունքներն են՝ *i)* պլաստիկի և կոշտ թափոնների կառավարման և շրջանաձև տնտեսության խթանումը, և *ii)* գյուղատնտեսության մեջ քիմիական նյութերի օգտագործման կրճատումը (տես՝ Աղյուսակ 5, ԱՌԾ Վերջնական արդյունք 4):

## 4. ԱԾՌ ցուցանիշների, թիրախների և արդյունքների կառուցվածք

Այս բաժնում սահմանվում են այն ռազմավարական արդյունքները, որոնք ընտրված լանդշաֆտների ելակետային գնահատման փուլում բացահայտվել են Ազգային ծրագրի կողմից որպես մասնակցային գործընթացի մի մաս: Արդյունքները սահմանվում են ըստ տրամաբանական շրջանակի մոտեցման ձևաչափի, որը մոնիտորինգի և գնահատման կարևոր գործիք է և նպաստում է նախագծերի արդյունավետ իրականացմանը (Տե՛ս ԱԾՌ Աղյուսակ 5): Տրամաբանական շրջանակի մոտեցումը ներկայացնում է ՓԴԾ հայաստանյան ծրագրի բոլոր հիմնական բաղադրիչների համառոտ պատկերը և ակնկալվող արդյունքները դրամաշնորհային նախագծերի (Միջանկյալ արդյունքներ) և Ազգային ծրագրի (Վերջնական արդյունքներ) մակարդակներում, ինչպես նաև տալիս է Ազգային ծրագրի ընդհանուր Նպատակը: Ստորև ներկայացվում են արդյունքների տարբեր մակարդակների սահմանումները:

<u>*Միջանկյալ արդյունքը*</u> նախագծի ավարտի կարճաժամկետ կամ անմիջական արդյունքն է, որը գործողությունների լիարժեք իրականացման հետևանք է: Նախագիծը կարող է ունենալ մեկ կամ մի քանի Միջանկյալ արդյունք:

<u>*Վերջնական արդյունքը*</u> նախագծի միջնաժամկետ կամ ավարտական արդյունքն է, որը սովորաբար ապահովվում է մեկ կամ մի քանի նախագծերի իրականացման Միջանկյալ արդյունքների շնորհիվ:

<u>*Նպատակը*</u> երկարաժամկետ զգալի արդյունքն է, որը որոշակի Արդյունքներին հասնելու տրամաբանական հետևանքն է և Ծրագրի իրականացման արդյունքում ապահովում է չափելի ազդեցությունները:

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

<u>*Ազդեցությունը*</u> նախագծերի և ծրագրերի արդյունքում առաջացած դրական և բացասական, կանխատեսված և չկանխատեսված փոփոխությունն ու հետևանքն է (ԳԷՀ-ի հիմնական տերմինների բառարան): Ազդեցությունները տեսանելի դառնալու համար պահանջում են երկար ժամանակ: Ինչպես արդեն նշվել է, ակնկալվում է, որ Ազգային ծրագիրը պետք է ունենա գլոբալ բնապահպանական, ապրուստի միջոցների և կարողությունների զարգացման հետ կապված ազդեցություններ:

Բովանդակային առումով, *Ազդեցությունները, Նպատակները, Միջանկյալ արդյունքները և Վերջնական արդյունքները* միմյանց հետ փոխկապակցված են պատճառահետևանքային կապերով և, հետևաբար, հանդիսանում են տրամաբանորեն փոխկապակցված ձևակերպումներ Ծրագրի արդյունքների ցիկլում:

Տրամաբանական շրջանակի աղյուսակում (ՏՇԱ) (ԱԾՌ Աղյուսակ 5) ներկայացված ծրագրային մակարդակի (Վերջնական արդյունքների) չափորոշիչները համապատասխանում են ԳԷՀ-ի ԳՓ-7-ի ռազմավարական և ազգային գերակայություններին և որոշվել են շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների արդյունքում ու համաձայնեցվել են ԱՂԿ-ի հետ: Դրամաշնորհային նախագծերի մակարդակում (Միջանկյալ արդյունքներ) ցուցանիշները պետք է որոշվեն հայտատուների կողմից ԳԷՀ-ի ՓԴԾ-ի նախագծերի մակարդակի չափորոշիչների ցանկից նախագծի մեկնարկից առաջ և ԱՀ-ի հետ խորհրդակցությամբ:

Այս ելակետային վերլուծության մեջ մատնանշվում են թիրախային տարածքի հիմնական մարտահրավերներն ու գլոբալ բնապահպանական խնդիրները, որոնք հիմք են ծառայելու արդյունքների ձեռքբերումը չափելու համար: Առաջարկվող ծրագրային մակարդակի գործողությունները, որոնք անհրաժեշտ են նախագծերի (Միջանկյալ արդյունքներ) և Ազգային ծրագրի (Վերջնական արդյունքներ) մակարդակներում ակնկալվող արդյունքների ձեռքբերման նպատակով մանրամասնորեն ներկայացված են ՓԴԾ տրամաբանական շրջանակում, և ցուցադրված են ԱԾՌ Աղյուսակ 5-ում: Տրամաբանական շրջանակի աղյուսակը ներառում է համապատասխան նպատակային ցուցանիշներ, որոնց նպատակը ՓԴԾ ազգային ծրագրի գործողությունների առաջընթացի գնահատումը և ԱԾՌ ակնկալվող արդյունքների արդյունավետության գնահատումն է:

## 5. Թիրախային տարածքում ծրագրերի իրականացման մեխանիզմներ

Ներկայումս, բնապահպանական կառավարումը Հայաստանում բնութագրվում է խիստ մասնատված ուղղաձիգ կառուցվածքով, որտեղ տարածքային մարմիններն ու համայնքները սահմանափակ ինքնավարություն ունեն: Նման կառուցվածքի այսպիսի անփոփոխ բնույթը, ինչպես նաև տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների բացակայությունը հանգեցնում են կառավարման համակարգի կապերի խաթարման ու գործառույթների անհերդաշնակության: Այս խնդրի լուծման նպատակով որպես առաջնահերթ քայլ անհրաժեշտ է ընդլայնել տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքների դերը և նրանց ուղղակիորեն ներգրավել թիրախային տարածքում իրականացվող աշխատանքներում: Թիրախային տարածքում համայնքները կարող են էական դեր խաղալ հողի, ջրի և այլ բնական պաշարների ու ուղեկցող էկոհամակարգային ծառայությունների կայուն օգտագործմանը և պահպանմանն ուղղված ՓԴԾ ԳՓ-7 նախաձեռնություններում: Նման ծրագրերը կհաջողվեն միայն, եթե տեղական բնակչությունը ակտիվորեն ներգրավվի ծրագրի նախագծման, մշակման և իրականացման փուլերում՝ ապահովելով արդյունքների նկատմամբ սեփականության իրավունքը և հանգեցնելով ուղղակի սոցիալ-տնտեսական օգուտների:

Ծրագրի իրականացման առաջարկվող մեխանիզմները ներառելու են հետևյալը. ուսուցման և գիտելիքների փոխանակման նպատակով թիրախային տարածքի հետ ծրագրերի կապում, տեղական ինքնակառավարման մարմինների հետ փոխգործակցության խթանում, քաղաքականության վրա ազդեցություն սահմանում և հնարավորությունների ընդլայնում,

DocuSign Envelope ID: C7E163C2-EB1A-4015-9DFD-87575AE68863

համայնքային ներգրավումը խթանող մասնակցային ՄևԳ իրականացում և գիտելիքների ձեռքբերման դյուրինացում և արդյունքների արձանագրում և տարածում:

Գիտելիքների կառավարման ռազմավարությունը ենթադրում է ԳԷՀ-ի տարբեր թեմատիկ ոլորտների առանձին նախագծերի և ծրագրերի ընդհանուր փաթեթի շրջանակներում կուտակված փորձի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և տարածում: Գիտելիքների կառավարման նպատակն է. նպաստել գիտելիքների և փորձի փոխանակմանը, օգտագործել ինչպես հաջողված, այնպես էլ չհաջողված նախագծերից քաղված դասերը, կրկնօրինակել և ընդլայնել լավագույն գործելակերպը և համայնքային նորարարությունները: ՓԴԾ-ի լավագույն գործելակերպերը կօգտագործվեն որպես ազդեցության մեխանիզմ քաղաքականության մշակման և ձևակերպման համար՝ ուղղված և՛ բնապահպանական կոնվենցիաների և՛ զարգացման օրակարգերի իրականացմանը: Գլոբալ մակարդակում ստուգվող տեխնոլոգիաների օրինակները, ԳՓ-6-ից և նախորդ փուլերից Ազգային ծրագրի համեմատական առավելությունը և փորձը փոխանակվելու և տարածվելու են համայնքային նորարարությունների ՓԴԾ թվային գրադարանի և հարավ-հարավ համայնքային նորարարությունների փոխանակման հարթակի միջոցով:

Գիտելիքների կառավարումը լինելու է ՓԴԾ հայաստանյան ծրագրի առանցքային գործողություններից մեկը: ՓԴԾ նախագծերի միջոցով ստացված գիտելիքներն ու փորձը հավաքագրվելու և ամփոփվելու են ձեռնարկներում, տեղեկատվական թերթիկներում, աշխատանքների ուսումնասիրություններում, ֆիլմերում և տեսանյութերում: Այնուհետև, այս տեղեկատվությունը տարածվելու է գործնականում իրականացնողների շրջանում՝ լավ/լավագույն գործելակերպերը և ռազմավարությունները սահմանելու և փորձը համեմատելու ու փոխանակելու նպատակով: Փորձը փոխանակվելու է նաև սեմինարների, հանդիպումների, հանրային քննարկումների, գիտելիքների ցուցադրումների, գիտելիքների կուտակման կենտրոնների և հնարավորության դեպքում էլեկտրոնային տեղեկատվության տարբեր ցանցերի միջոցով: Գիտելիքների կառավարման տեսակետից հատկապես կարևորվում են ՓԴԾ-ի նախագծերի շրջանակներում իրականացվող վերապատրաստման ծրագրերն ու սեմինարները:

ՓԴԾ հայաստանյան ծրագիրը կպահանջի գիտելիքների շարունակական փոխանակում ներկա և նախորդ դրամաշնորհառուների շրջանում հետևյալ նպատակներով՝ լավագույն գործելակերպերի և քաղված դասերի տարածում, տարածված լավագույն գործելակերպերի ամրագրում փաստաթղթերում, ՓԴԾ-ի դրամաշնորհառուների շրջանում «Փորձագիտական տեղեկագրի» ստեղծում՝ խորհրդատվության համար միմյանց հետ կապ հաստատելու նպատակով, կայքերի և էլեկտրոնային խմբերի ստեղծում տարածաշրջանային խմբավորումների համար և տեղական կոնտակտային անձանց նշանակում:

ՓԴԾ հայաստանյան ծրագիրը խրախուսելու է հայտատուներին առաջարկվող նախագծերում ներառել ցուցադրական և գիտելիքների տարածման բաղադրիչը: Դրամաշնորհառուների կողմից պարբերաբար պատրաստվելու են և էլեկտրոնային և/կամ տպագիր միջոցներով տարածվելու են հակիրճ «մամուլի հաղորդագրություններ» հանրությանը տեղեկացնելու համար անցյալ (հաջողություններ, մրցանակներ, գնահատականներ և այլն), ներկա և ապագա գործողությունների մասին: Դրամաշնորհառուներից պահանջվելու է ապահովել գիտելիքների և քաղված դասերի շարունակական և բաց փոխանակում մյուս հայտատուների հետ: Տեղեկատվության մատչելի դարձնելու պահանջը պարտադիր է լինելու ՓԴԾ-ի բոլոր մասնակիցների համար: